Rp 2000.

1615 Yh

0005

3-75
Printed in Turkey

ՑՈՒՊ
ՔԱՀԱՆԱՅԻՑ

Որ ուսուցանէ խոստովանահարց՝ Ըրուքպս
և ըստ կանոնի խոստովանեցուցանել զխոս-
տովանորդսն և դնել ի վերայ նոցա
զօրեղ սպեղանիս ապաշխարութեան.
և այլոց իրաց պիտանացուաց։
Հաւաքեցեալ ի բազմաց մատենից
աստուածայնոց՝ և ի բազմաց վարդապետաց իմաստնոց.
ի Ձեռն՝ Պօղոս ևեթ քահանայի
կաղզուանցւոյ։

Ըստ խնդրոյ Ազնուազարմ մի-
րիճանեան Շնորհք Մկրտիչ
աստուածասէր Ամիրային. որոյ և ար-
դեամբքն իսկ տպեցաւ. ի փառս
Աստուծոյ՝ և ի յօգուտ խոստովանահարց և
խոստովանորդաց։

Տպեալ հրամանաւ Տեառն Զաքարիայ
ազգասէր և բարեկարգ Պատրիարքի
Ի Կոստանդնուպօլիս։
ի ներքս մայր Դպրատանս Հայոց։

1159
3288-57
Printed in Turkey

Դ. Նխա. 1792

262.1

Յառաջերգութիւն ինչ յաղագս սոյնոյ նորին գրքոյս.

Իսկ արդ՝ դոյզն ինչ բանիւ իմացուածս տալ յօժարիմ ընթերցողացդ սոյնոյ մատենիս, զի խոհեմութ՟ին գոլով մի ՚ի չորից բարոյական առաքինութե՟ց, կանխե՟լ երագէ զարթուցանե՟լ զմ՟իտս մեր ՚ի բարուոք կառավարութ՟ի անձանց մերոց ը՟ս հաճոյից կամացն ա՟յ։ Ուստի՝ ըստ բնազննից և ըստ ա՟ծաբանից յերիս տեսակս բաժանի խոհեմութ՟ին, այսէ՝ ՚ի միանձնական. ՚ի տնտեսական. և ՚ի քաղաքական։ Քանզի այնոքիկ՝ որք միայն զանձինս իւրեանց և եթ ունին բարւոք կառավարել՝ միանձնական տեսակի խոհեմութ՟են են վիճակե՟լք։ Ի՛ս որք բաց ՚ի յինքեանց կարողանան նաև զտունս, և զընտանիս իւրեանց ը՟ս պիտոյին և ըստ

պատ

Printed in Turkey

պատշաճին կարգադրել, ասին ունիլ զտնտեսկ՟նն տեսակ: իսկ՝ որք անցեալ զանցեալ զայսոքիւք զհասարակացն կարասցեն տնօրինել լուսով խոհեմուե՟ն զվայելուչն կացու՟ի, են 'ի սահմանի քաղաքական տեսակի խոհեմութե՟ն զարդացեալք· Ասյ՝ թէպ՟տ ունողքն սոյնոյ բարեձիր առաքինութե՟ս ընդունին վարձս տ՟մքն 'ի տ՟նե բարուե՟ց· սակայն՝ զանազան եղանակա՛ւ· զի առաջինքն՝ զերեսնա՛ւորն· երկրորդքն՝ զվաթսնա՛ւորն, և երրորդքն՝ զհարիւրա՛ւորն առնուն զփառս: Արդ՝ ո՟չ կորովիքն յընթացս ոտից յասպարիսի խաղարկուե՟ց մի զմիով յառաջ անցանել փութան տու 'ի վայելել պարգեւի յաղթութ՟է· Այսպ՟ս և արիացեալքն յառաջադիմուխ՟ս խոհեմուէ՟, նկրտին յաւէտ բաղձանօք զերիցագոյնն խո հեմութե՟ զքաղաքականն տեսակ կատարելով հասանիլ յաղթութե՟ հոգևոր քաջութե՟, և թողուլ յիշատակ անմահ յաւիտեան։ Ահա արդարև ՚ի սոյն Ածահաճոյ խոհեմուի՟ս զարդացեալ տեսանեմք զերջանկափառ, և զխոհեմափայլ իշխանին մեր՝ միրիճանէն Շնորհք Մկրտիչ Ամիրայն Ածասէր, որ զխոհեմութե՟ն ճրագ եդեալ՝ ՚ի վ՟ր աշտանակի մտացն ո՛չ միայն գուն գործէ զինքն և զընտանիսն իւր և եթ բարւոքա՟պս կառավարել, այլև զօգուտն հասարակաց յաւէտ խոկալով ը՟ս իւրումն բարեջան կարի, միշտ հոգունակ լինի, և անձկացեալ փափագի հոգեշահ, և Ազգաօգուտ իրաց պատճառ գտանիլ։ Որև ը՟ս բարեաց խորհրդոց իւրոց առնու զկատարումըն յըղձին՝ յայնմանէ, որ կատարիչն է կամաց երկիւղածաց իւրոց։

րոց։ Քանզի սոյն Գիրքս՝ ՚ի ս՟բց կտակարանաց հնոց և նորոց. ՚ի ս՟բ Գրիգոր Լուսաւորչէ. ՚ի ս՟բ ներսէս շնորհալւոյ. ՚ի ս՟բ գրիգոր նարեկացւոյ. ՚ի ս՟բ սարգիս շնորհալւոյ. ՚ի յօհաննու երզնկացւոյ. ՚ի ս՟բ գրիգոր տաթևացւոյ. ՚ի դրախտ ցանկալւոյ. ՚ի յակոբ Պատրիարգի. և յայլոց գրեանց հաւաքեցոյց բարեյօժար կամօք և սիրատենչ տարփանօք դասաւորեալ ըստ պատշաճին (որ կոչի Ցուպ Քահանայից) և եթող զսա՛ իւրն՝ և համայն ննջեցելոցն իւրոց և կենդանեաց մշտնջենաւոր յիշատակ ՚ի մէջ ազգիս մերոյ, որ ուսուցանէ քհ՟նյից գիտել զկերպ բարւոք խոստ՟նեցուցնլոյ զխոստ՟վորդիս իւրեանց։ Նա՛ իրաւի, թէպէտ՝ բանքն որք պարունակին ՚ի սմա՝ գոյին ՚ի մէջ ազգիս մերոյ գր՟ելք, և ՚ի հոգևոր կրթութ՟ պաշտօնէից

խոր

խորհրդոյ խստմբու՟էն եղեալք. սակայն՝ գոլով 'ի մէջ մեծամեծ և թանկագին գրեանց ընդ երկար և կարի յոյժ լայն սփռեալք և տարածեալք աստ և անդ՝ զոր յոլով աշխատանօք, և շատ դժուարութբ՟ հազիւ կարէին առ ձեռն բերել և տեղեկանալ ։ որ թէ այս դժուարութի՟ է առաջ եկանէր ընչաւէտ քհնյից, և արգելք լինէր. ապա զինչ ինչ ոչ առնէր աղքատ քահանայից, որք և զաւօրականն ապրուստն հազիւ կարեն առ ձեռն բերել, թող թէ յըստացումն մեծամեծ գրեանց ծախել. յաղագս որոյ՝ փոյթ յանձին կալաւ վերոյ գրեալ տր՟ զօրացել փառապերձ, բարեսէր իշխանն մեր 'ի մի վայր հաւաքեցուցանել զհարկաւորսն և զպիտանիսն իբրև զփունձ մի անուշահոտ ծաղկանց վարդից. և առնել զայն գրքոյկ իմն փոքրիկ քանակաւ, առ ՚ի վայելումն ա՟մ քահանայից, փարթամաց և աղքատաց, որք կարիցեն դիւրաւ ստանալ, և իբրև զմաշտոց գիրքն յարաժամ ՚ի ծոց կրել, և ուսանիլ, և զխորհուրդ խստ՟ովութե՟ն ը՟ս արժանոյն կատարել։ Ուստի և ես տրուպս ա՟մ ք՟հնյից տեսանելով զբարեմտութ՟ի վերոյ գրե՟լ Ա՟ռն Ա՟ծատուրի, և բարեպաշտի, և բաղձիցս ՚ի մէնջ սոյն գործոյ յառաջանալ խնդրողի, յանձն առի կատարել։ զոր և ա՟վ, և Աղօթիւք մաքրասուն քահանայից եղբարցդ իմոց պաշտօնակցաց (որում և չէի բաւական) ՚ի գլուխ հանեալ աւարտեցի, զորմէ ակն ունիմ մանաւանդ թէ և աղաչեմ իսկ մեծաւ սիրով ընկալնուլ և վայելել, և զպատճառն սորին և զաշխատողսն՝ արժանաւորս առնել մաքրափայլ աղօթից ձերոց։

հուսկ յետոյ ևզիս ՏՆ, Օ աքարեայ Սրբազան և Ազգասէր յարարթուն Արհիապանծ Պատրիարգի Նզըօր որդի, զպօղոս և եթ քահանայս Աղզվանից մ՛ անմասն թողուցուք յԱծահաճոյ օրհնութեանց ձերոց, և այն բա՛ւէ ինձ.

ՌՃՂ՝ ամխն և սեպ՝ Ժ,

Գործոյն ազնիւն՝ յոյժ գովական.
քահանայից՝ պատշաճա կան ։

Պարունակող՝ միտք բազմա կան .
որ համայնից՝ է ըղձա կան ։

Աւետարանք՝ բժշկա կան .
Նաև Նորեկք՝ սոյն գունա կան ։

Գիշեր ժամեան՝ և արձակ ման .
եօթն խորհուրդ՝ եկեղեց եան ։

Այլ և խրատք՝ յոյժ պատուէկն.
խոստովանման՝ վերբերա կան ։

Արտահանեալք՝ կանոնա կան .
՚ի հարց ա̄բց՝ դեր ընտրա կան ։

Որք են առ մեզ՝ հաճոյա կան .
իմաստ կուլիցն՝ է բաւա կան ։


Ign.º Lucchesini f.

Եւ ասէ Դաւիթ ցՏէր, իբրև ետես զհրեշտակն որ հարկանէր զժողովուրդն, ասէ՝ Ահաւասիկ կամ, ես մեղայ, 2 Թգ, ԻԴ, 17։

Յաղագս վկայութեանց անհերքելեաց.

Նախ՝ պարտ է մեզ քահանայից սերտել և ուսանել ՚ի բերան զայսոսիկ վկայութիւնս. և այսոքիւք լիցի առնել յառաջարկութիւն զկնի հասարակ մեղային, և քարշել զթագուցեալ մեղս խոստովանորդացն, զգուշացուցանելով բանիւն ա՟ծային, և տալ ասել զղջացանս նորին. և ապա դնել զդեղանին ապաշխարութեան ըստ մեղացն գործեցելոց, և այնու բժշկել զվէրս հոգւոյն և դարմանել և լինել Ճշմարիտ հովիւ, և ո՛չ վարձկան. և լսել զձայնն զերանական, թէ եկ՛՝ ա՛զնի՛ր ծառայ բարի և հաւատարիմ՝ մո՛ւտ յուրախու՟թի տ՟ն քո։ Տ՟ր քանզի՝ տ՟մ ինչ մերկապարանո՛ց կայ առաջի տ՟ն, որ եթէ աստ ծածկեմք և ո՛չ խոստովանիմք, անդ յայտնին 'ի մեծ հրապարակին, յաւուրն դատաստանի. ըստ այնմ թէ գաղտնի գործոցն ծածուկք, յայտնին 'ի մեծ հրապարակին, և գոչալով ընթանան 'ի յանվախճան 'ի տանջանանս։ Ղուկ Տ՟ր ըստ տ՟ն թէ, ոչինչ է 'ի ծա- 12,2. ծուկ որ ո՛չ յայտնեսցի, և գաղտնի որ ո՛չ ծանիցի։ վասն որոյ պարտիմք աստ զղջալ, խոստովանիլ, և ապաշխարել, և ընկալնուլ ըզդեղն կենաց, և արդարանալ, և ո՛չ լսել զձայնն երթայք յինէն՝։

Յոր

Յորժամ փրկեսցէ զմեզ տ̃ր յս̃
քս̃ փրկիչն մեր անդառնալի բա
րեխօսութ̃ե անարատ ծննդի մօր
իւրոյ և կուսի, և ամենից սբ̃ց,
Ամէն։ Որ ծածկէ զմեղս իւր՝ առ̃կ,
ոչ արդարասցի, և ոչ յաջողեսցի· 28, 13
իսկ որ պատմէ և յանդիմանէ՝ սի
րելի եղիցի։ Մ՝ի՛ ամաչեսցես սիր, 4
խստ̃վ լինիլ զմեղս քո, և մի՛ ներ 13, 25
քևեսցես զքեզ ամ̃ մարդոյ վս̃
մեղաց։ սակս անձին քո մի՛ կրեր
զամօթ ասել զճշմարիտն։ Եւ ծնն,
խօսեցաւ տակառապետն առաջի 41, 1
փարաւոնի և ասէ, զյանցանս իմ
յիշեցուցանեմ այսօր։ Եւ խստ̃վ ղևտ,
լինիցին զմեղս իւրեանց, զի յան 26,
ցեան և արհամարհեցին զիս, և 40.
գնացին առաջի իմ խոտորնակս.
Խօսեա՛ց ը̃ որդիսդ իսրայէլի և թւ̃ց,
ասասցես, այր կամ կին, որ ոք 2. 6.
արասցէ յա̃մ մարդկեղէն մեղաց,
և արհամարհելով արհամարհեսցէ

և յանցանիցէ, անձն այն խոստովանեսցի զմեղս իւր զոր արար, և հատուսցէ տ՟ն յանցանաց զգլուխն և զեօթներորդ մասն յաւելցէ ի նոյն և տացի այնմ որում յանցեաւն։ Եւ ասէ յեսու ցաքար յես, 7, 19։ որդեակ իմ տուր փառս այսօր տ՟ն ա՟յ իսրայէլի, և տուր խոստովանութի, և պատմեա ինձ զինչ գործեցեր, և մի թագուցաներ յինէն։ Եւ ասէ դաւիթ ցտ՟ր, 2 Թգ 24, 17. իբրև ետես զհրեշտակն որ հարկանէր զժողովուրդն, ասէ՝ Ահաւասիկ կամ, ես մեղայ, ես հովիւս յանցեայ, և դոքա ոչխարքդ զինչ արարին. եղիցի ձեռն քո յիս, և ի տուն հօր իմոյ։ Զանօրէնութիս իմ պատմեցից և հոգացայց սղմ, 37, 19 վ՟ն մեղաց իմոց։ Զմեղս իմ ցուցից քեզ և զանօրէնութիս իմ ոչ 31, 5 ծածկեցից ի քէն։ Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և

դու թողցես զա̃մ ամբարշտութ̃ն
մեղաց իմոց։ Տ̃ր վ̃ն պատմեցաւ Եսայ
քեզ. և զարթուցից զոգի իմ, 38, 15
մխիթարեցայ և կեցի։ Ահաւասիկ
՚ի խաղաղութ̃ի դարձաւ դառնութ̃ի
իմ, փրկեցեր զանձն իմ զի
մի՛ կորեայց, և ընկեցեր յետոյ
զա̃մ զմեղս իմ։ Մեղաք անօրինեցաք, Դանէ
անիրաւեցաք, ապստամբեցաք, 9, 5։
և խոտորեցաք ՚ի պատուիրանաց
քոց և յիրաւանց քոց։
Եւ մկրտէին ՚ի նմանէ ՚ի յորդանան, Մատթ
և խոստ̃վ լինէին զմեղս իւրեանց։ 3, 6։
Եւ մաքսաւորն կայր Ղուկ
մեկուսի, և ո՛չ կամէր, և ո՛չ զաչսն 18,
՚ի̅ երկինս ամբառնալ, այլ կոծէր 13։
զկուրծս իւր, և ասէր,
Ա̃ծ քաւեա՛ զիս զմեղաւորս։
Եթէ ասեմք, եթէ մեղս ո՛չ ունիմք, Ա,Յհ
զանձինս խաբեմք, և ճշմարտութ̃ի 1, 8։
՚ի մեզ ո՛չ գոյ, ապա եթէ
խոստ̃վ լինիցիմք զմեղս մեր հա–

ւա

ւատարիմ է նա, և արդար առ ՚ի
թողուլ մեզ զմեղս մեր և սրբել
զմեզ յա՟մ անօրէնութէ. և եթէ
ասիցեմք, եթէ ոչինչ մեղաք,
սուտ առնեմք զնա՝ և բան նո՟ր ՚ի
մեզ ոչ է բնակեալ: Որդեակք
իմ զայս գրեմ ձեզ, զի մի՛ մեղի
ցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք
բարեխօս առ ա՟ծ զյ՟ս ք՟ս զորդին
ա՟յ. զարդարն և զանարատն, և
նա է քաւութի՟ մեղաց մերոց, և
ոչ թէ մերոցն միայն՝ այլև ա՟մ
Մատթ, ե՟ի. Զգուշ լեր մի՛ ումեք ասի
44, ցես, այլ երթ ցոյց զանձն քո
1. քհնյին և մատո՛ զպ՟տարագն, զոր
հրամայեաց մվ՟ս ՚ի վկայութի՟ նց՟.
Ղուկ, Խօսեցաւ տ՟ր ը՟ մվ՟սի և ասէ,
Ե4, 1. այս օրէն եղիցի բորոտի
յաւուր յորում սրբի
ցի, ածցի՛ առ քա
հանայն, և այլն՝,
տե՛ս անդ.

1159 3288-52

[illegible] զանազան [illegible] ապաշխա-
րութե [illegible] ըստ զանազանութե մեղացն
[illegible] [illegible]. 'Ի [illegible] [illegible]
[illegible] [illegible].

Արդ՝ ըստ կանոնի աւանդութե վրդպտց Եկեղեցւոյս մերոյ ասէ, Նախ՝ զի խոստովանահայրն որ է հոգևոր բժիշկ, պարտի հըմուտ լինել հին և նոր կտակարանաց. և թէ ոչ՝ զբազումս հոգւով սպանանէ. զի յորժամ ոչ կարէ գիտել և ճանաչել զզանազան մեղս՝ ոչ կարէ գիտել և զդեղ նց. և թէ դեղ ինչ դնէ՝ ոչ կարէ առողջացուցնել։ ոպ եթէ ոք հըպարտութի իցէ արարեալ, կամ բարկութի, գնասցէ և խոստովանեսցի քահանային, և նա դնիցէ ապաշխարանքն, թէ 'ի կերակրոց պատրաստկաց, որ ոչ է առողջութե դեղ հպ՟րտութե՟ն և բարկութե՟ն. զի հպարտութե՟ դեղն՝ խոնարհութի՟ն է. և բարկութե՟ն՝ համբերութի՟ն։ Սոյնպ՟ որկրամոլութե՟, բղջախոհութե՟, և պոռնկութե՟ դեղն է՝ պատրաստ կալ ՚ի կերակրոց ծոմօք, և պահօք, և աղօթիւք։ Երկրորդ՝ պարտ է, զի խոստ՟վնհայրն քննեսցէ զբարս խոստ՟վնորդւոյն, թէ ո՟րպի՟ իրաց պատրաստ է սիրտ ն՟ր ; առ ՚ի յը՟նդունել զլուծ ապաշխարութե՟։ և զի՝ գիտասցէ զզանազանութի՟ ժամանակաց և հասակաց. արուաց, և իգաց. զի այլ ազգ կանոն պարտ է դնել ՚ի վ՟ր խոստ՟վնորդւոյ ՚ի ժամանակս նեղութե՟, և այլ՟պս ՚ի ժամանակս խաղաղութե՟. այլ ազգ ՚ի վ՟ր նեղեալ աղքատաց, և այլ ՚ի վ՟ր հեշտացեալ փարթամաց։

Նոյնպ՟ս պարտ է զանազանել ՚ի միմեանց. այլ կերպիւ՟ տղայի, այլ կերպիւ՟ կնոջ, այլ կերպիւ՟ առաջ

նոր

նորդաց, որք են 'ի տեղի աչացն· և այլ կերպիւ խառնիճաղանճ ժողովրդոցն, որք են 'ի տեղի ոտիցն։ Եր̅րդ՝ զի ոպ̅ մարմնաւոր բժիշկն յորժամ տեսանէ զհիւանդն որ 'ի դուռն մահուէ հասեալ, ո՛չ տայ նմա դեղ· զի մի՛ բնութի̅ն առաւէլ տկարասցի։ Նյ̅պս պարտ է հոգևոր բժշկին՝ յորժամ տեսանիցէ մեղաւորն հիւանդացեալ մարմնաւոր ցաւօք, ո՛չ դնել ապաշխարանս· այլ միայն զհոգի նր̅ ա̅յ յանձնել և ցուցանել նմա զպատշաճ կանոնսն վս̅ այն մեղացն· զի թէ յարիցէ 'ի հիւանդութենէ կատարեսցէ։ Չորրորդ՝ պարտ է, զի խստ̅վնհայրն գիտասցէ զդեղ ամ̅ ցաւոց, զի տացէ դեղ հակառակ ամ̅ ցաւոց մեղաց· ոպ̅ ընդդէմ ամբարտաւանութե̅ զխոնարհութի̅ գործել· ըն̅դդէմ ագահութե̅ և արծաթսիրութե̅՝ տուրք և ողորմութի̅·

Ընդդէմ որկրամոլութեան և արբեցութեան՝ պարկեշտութիւն. Ընդդէմ բղջախոհութեան՝ պահք և աղօթք և տանջանք մարմնոյ. Ընդդէմ բարկութեան՝ հեզութիւն. Ընդդէմ ատելութեան և նախանձու՝ սէր. Ընդդէմ յիշոցաց և հայհոյութեանց՝ զմեղայն և զփառաբանութիւն. Ընդդէմ ծաղերն և կատակերգութեան՝ զլացն, և միշտ խօսիլ զհոգևորն. Ընդդէմ բամբասանացն՝ զլռութիւն. Այսոքիկ և այլոցն ըստ չափու հիւանդութեան, կանոնն է. զի՝ ներելի մեղացն սակաւ կանոնս դնել, և մահու չափ մեղացն ծանր։ Եւ թէ հիւանդութիւն մեղացն 'ի վաղուց հետէ է, և բազմաժամանակեայ, պարտ է բեռինս ծանունս դնել։ Եւ որ նորէ անկեալ 'ի մեղս՝ թեթևակի և փոքրագոյնս։ Հինգերրորդ՝ զի քննիցին պարտ է, որ զխոստովանութիւն չյայտնէ. զի թէ յայտնէ, բազումք երկնչին

'ինը

'ի նմանէ, և այլ ոչ խոստ՟վին, և զարիւն նց՟ ա՟ծ 'ի յայնպիսի քահանայից պահանջելոց է. քանզի սիրտ քահանային ոպ՟ զկողպած սընտուկ է. վ՟յ պա՛րտ է այնպէս պահել, որ թէ սնտուկն կոտրի, և կողպաքն ոչ բացուի. մ՟, զի թէ մահացուցանեն զնա ևս՝ բերանն ամենևին ոչ բացուի ոպ՟ կողպաք. Վեցերորդ՝ պա՛րտ է հոգևոր բժշկին, եթէ մեղքն 'ի սիրտն թագուցեալ է, տացէ նմա զդեղ խոստ՟վութե՟ն՝ բազում խրատիւք. որ արտահանէ և քարշէ 'ի սրտէ նր՟ զցաւս հոգւոյն՝ բերանով խոստովանելովն. Եօթներորդ՝ թէ որ մեղօքն պնդեալ և քարացեալ է, պա՛րտ է զնա կակղացուցանել յուսով ողորմութե՟ն ա՟յ, և ասել մի՛ վախեր. որքան առաւե՛լ մեղք ունիս, յորժամ զամէնն ճշմրտ՟պս ասասցես, և ոչ թագուսցես, և կամ ո՛չ ծածկեսցես ՚ի մտի քում վս̅ ամօթոյ և վս̅ երկիւղի, նա իբրև զկայծ մի հրոյ է՛ համարեալ ՚ի ծոցի ովկիանու: Այս̅պս ողորմութ̅ին տ̅ն անչափ է և անսպառ. և յորժամ զմեղս քո ՚ի ձեռն խոստովանութե̅՝ միջնորդութ̅ քհ̅նյին ձգեսցես ՚ի ծով ողորմութե̅ն տ̅յ, իսկոյն շիջանի իբրև զկայծ մի: Ութերորդ՝ եթէ ոք ո՛չ կամի յիւրմէն վարել զմեղքն, պա՛րտ է նմա դեղ տալ զի վարիցէ. ո̅ր՝ երկեցուցանել զնա տանջանօք դժոխոցն, ասելով թէ մեղաւորաց հուրն անշէջ է, և որդն անքո՛ւն է. անհա՛տ է կսկիծն, անսահման է չարչարանքն, անբժշկելի է ցաւն, անարձակելի է կապն, անանջատելի է բանտն, անելանելի է դուռն, անմխիթարելի է սուգն, անփարատելի է խաւարն. զի զայսոսիկ լսելով արձակիցի բերանն, և յայտնեսցէ զա̃մ անօրէնութի̃ իւր· Իններորդ՝ եթէ հի́ւանդացեալ է մեղօք, պարտէ, զի առողջացուցանէ ապաշխարուբ̃· և յորժամ առողջացեալ լինի հոգւով և ուժովացեալ, պարտէ նմա յառողջուե̃ պահել զնա միշտ· ա̃յ՝ ջրով արտասուա́ց և խոստ̃վու̃բ, և այլ զանազան առաքինութ̃բ։ Տասներորդ՝ գործ խոստ̃վնհօրն է երթալ 'ի տես մեղաւ́որին, և հարցանել զհի́ւանդուե̃ հոգւոյն, և մխիթարել և հաստատել փրկութե̃ հաւ́ատով, զի մի՛ յուսահատեսցի։ վ̃ զի մեղքն յուսահատուե̃՝ է ծանրագոյն և անթողլի քան զա̃մ մեղս· Քանզի յուդայ յուսահատուբ̃ կորեաւ́· որ եթէ յուսայ և զղջայ, խոստ̃վու̃բ, և ապաշխարուբ̃ քաւ́էին մեղք նր̃։ Մ`ետասաներորդ՝ յորժամ ոք ծանրագոյն մեղօք մեղանչէ՛ ո՛չ է պարտ 'ի նմին ժամու հատանել զնա յանդամոց եկեղեցւոյ բանադրանօք և անիծիւք. այլ պարտ է խնամելով և դարմանելով դարձուցանել 'ի մեղացն. որ եթէ ոչ դառնայ՝ այլ ևս առաւել յերկարի 'ի մեղս, յայնժամ պարտ է հանել զնա յեկեղեցւոյ բանադրանօք և անիծիւք. զի մի՛ զայլս ևս ապականեսցէ ըստ առաքելոյն թէ՝ բարձէ՛ք զչարն 'ի միջոյ ձերմէ. Երկոտասաներորդ՝ պարտ է խոստովանահօրն փորձել. զի թէ կարիցէ քաղցր խօսիւք, և թեթև կանոնիւք դարձուցանել զմեղաւորն, բարւոք է. և թէ ոչ, ապա պարտ է սաստիկ և խոշոր բանիւք երկեցուցանել զնա, և ծանր ապաշխարութիւն դնել 'ի վերա նորա, մի թէ վասն երկիւղի ծանր ապաշխարութեան թողցէ զհեշտութիւն մեղացն. Երեքտասներորդ՝ պարտ է խոստովանահօրն ասել յակրդ բանն թէ առաջի Ա՟յ խոստովանիս որդի, և ոչ առաջի մարդոյ. Ա՟ծ ողորմած է, որ վ՟ն մեղաւորաց եկն յա՟. ուստի թէ ոպ՟ պետրոսի և պղ՟սի, և միրխամու մագդաղենացւոյն, և աւազակին, և այլոց մեղաւորաց արար ողորմութի՟ն, յորժամ զղջացան. այսպէս և քեզ ողորմի՝ յորժամ խոստովանիս ճշմարտապէս և կատարելապէս։ Զորքանորդ՝ եթէ ոք զբազում մեղս գործեալ իցէ, և զբազումս յորդորեալ իցէ ՚ի նոյն մեղս, և զբազում հոգիս չար խրատ տալով կորուսեալ իցէ, և կամ չար օրինակ լինելով այլոց. կամ առաջնորդ գոլով ծուլացաւ ՚ի յիւրն գործ. եթէ պահք և ողորմութի՟ն դնէ ՚ի վ՟ր նոյնպիսեաց, չէ՞ բաւական առ վրդովմանց եկեղեցւոյ. զոր օրինակ եթէ ոք ունիցի ՚ի գլուխն ցաւ, և զդեղն դնէ ՚ի վ՟ր ոտիցն, յիմարէ այնպիսին. այլ զի ցաւն

ո՛ւր իցէ՝ անդ պարտի դնել սպե-
ղանին. զի զոր կորոյս մեղօք,
պարտէ գտանել զայն ՚ի ձեռն
զղջման. Հնգետասաներորդ՝ եթէ
ոք կողոպտէ զդրացիս իւր և մեր-
կացուցանէ ; և խոստովանահայրն հրա-
մայէ նմա պահք պահել, սովա՛
ո՛չ կարէ առողջացուցանել զնա.
զի հի՛ւանդութիւն ՚ի թիկանցն էր.
վասն զի մերկացոյց ՚ի հանդերձիցն
զթիկունս մարդկանն: իսկ նա զմէհ
լեան ք̃ զպահքն ՚ի վերայ կրծիցն
եդ. այլ՝ ո՛ւրէ ցա՛ւն՝ ա՛նդ պար-
տի դնել եղդեղն. զի թէ մեր-
կացոյց զմարդիկ, դարձնել պարտ
է զնոսա զգեցուցանել. և զոր ինչ
յափշտակեալ է՝ դարձուցանել
յետս. Մ̄, եթէ ոք զրկեցի՝
հատուցից չորեքկին, և քանի
յուսոյն մերոյ փառք
յաւիտեանս
Ամէն.

Յաղագս պաշտօնի քահանայիցն։

Պաշտօն քահանային է՝ գիտել զժամս կանոնականս, և մատուցանել զք՟ր պատարագն, և իմանալ թէ զի՛նչ է սրբազնութիւն պատարագին, զի՛նչ են մասունք նորին, և ո՛րպիսի ինչ վախճան նորին. զի՛նչ է՝ և ո՟պիք են արարողու՟թիքն. զի՛նչ է նիւթն, և զի՛նչ է կերպն. և տնտեսել զք՟ր խորհրդոց եկեղեցւոյ։ Նոյնպէս զմկրտու՟թին, զապաշխարու՟թին, զպսակն և զվերջին օծումն. Նոյնև գիտել զարարողութ՟իս դրօշմին և զձեռնադրութե՟, որք պատշաճին առ եպիսկոպոսն. և դիտել քարոզել զբանն այ՟, և հոգալ զհոգս հանգ՟ցելոցն ք՟ի, և ունել զկարի առաքինու՟թիս պատեհս. գ՟՝ զխոնարհու՟թի, զառատա

դէխա ցոնկ՝

ձեռ

ձեռնութի՟, զհամեստութի, զնախանձ պաշտամանն ա՟յ․ զպատկան պատիւ ՚ի դէմս եկեղեցականաց և նոցին իրաց։ զհաւատարմութի՟ ՚ի սպասու իւրում՝ զարիութի՟, զհամբերութի՟։ ՚ի հակառակութի՟ս տանիլ յանցուածոց ընկերին․ ունել զսէր, զամօթ, զիղձ, զաշխատանս պատեհս, զգաստ ՚ի յընկերութ՟է չարեաց, և ՚ի գործոց աշխարհականաց․ և միանգամայն ունել զա՟մ զոր վերախնդրէ առաքեալն Պօղոս։ բայց առ ՚ի մատչիլ արժանապէս ՚ի կարգս եկեղեցականս, պա́րտ է՝ զի կոչիցին յա՟յ ը՟ առաքելոյն բանի, իբրև զահարոն։ ՝Քանզի որ շարժի յինքենէ, կամ ՚ի ծնողաց, կամ ՚ի պատուոյ, կամ յայլ իրաց աշխարհականաց, նա ո́չ ունի զնշան կոչմանն ա՟յ․ և չէ՛ արժան աստիճանի։ իսկ նշան կոչմանն ա՟յ են այսոքիկ․

՝Միտ՝ որակութի՟ք բնականք և գերբն

նականք պատեհաւորք այսմ պաշտաման. Երկ՟դ՝ հեռացումն իրաց 'ի բանից և 'ի գործոց ճկանց. Երր՟դ՝ ունիլ առատաձեռնութի՟, վս՟ դիւրա՟պս ծռ՟յելոյ ա՟յ. Չոր՟դ՝ սէր աղօթելոյ։ Հինգեր՟րդ՝ տքնումն վս՟ պահպանելոյ զմաքրութի՟ն խոր՟դ մտանաց։ Վեցեր՟րդ՝ արիութի՟, վս՟ տանելոյ վշտաց և դժուարութե՟ց, որք հանդիպին 'ի պաշտամանն ա՟յ, և 'ի սպասաւորութի՟ս եկեղեցականս. և վս՟ ըմբերելոյ բնաւից աշխատանաց 'ի փառս ա՟յ, և 'ի փրկութի՟ հոգւոց հա՟տցելոց։ Եօթներ՟րդ՝ հեզութի՟ մտաց առ 'ի տեղեկանալ, և հարցանել զիրս դժուարին, այլոց հմտագունից. և մն՟նդ ուսանիլ յեպ՟սէն իւրմէ. Ութեր՟րդ՝ վեհագոյն սէր առ ա՟ծ, և առ մերձաւորս. Իններ՟րդ՝ Աղօթք մտաւորականք, որով միանայ ընդ ա՟յ, և մոռանայ զերկրաւորս։ Տաս ներրորդ՝ կրթել զինքն յերկիւղն այ̃։ Մետասներրորդ՝ կենցաղավարիլ ը̃ բարեհամբաւ և առաքինի եկեղեցականաց՝ դիտաւորութ̃բ շահելոյ զբազումս. և ուսուցանելոյ նց̃ զբարեպաշտութի̃, և պարկեշտութի̃։ ո՛չ լինիլ արբեցող, պճնող, ստասաց, ծաղրածու, հեռի գոլով յա̃կան արարմանց։ Երկոտասներրորդ՝ ընթեռնուլ զգըրեանս հոգեյորդորս հանդերձ հաւատարմութ̃բ. նաև յոլովք քան զսոսին են, որք զներքին ջեռմեռանդութի̃ն արտայայտեն, որովք ապացուցանին արժանաւորք գոլ վսեմապատիւ քահանայութ̃ե։ Նոյնքան առայս բաւ լիցի, ըստ իմաստնոյն թէ. տուր իմաստնոյն պատճառս՝ զի առաւել եւ իմաստնագոյն լիցի։

Յաղագս երրորդ խոստովանութեան։

Խոստովանան [illegible] [illegible] [illegible] ջեր. յնէ, 5, 18։
[illegible] Գրիգորի Տաթեւացւոյն
յամառան 303։

Նախ գիտելի է, զի խոստովանութիւնն է հարկաւոր որպէս մկրտութիւն. զի նախ մկրտութիւնն է, և ապա այլքն. այսինքն՝ ապաշխարանքն, պահքն, աղօթքն, և այլն։ Նաև՝ ասեն վարդապետք եթէ խոստովանութիւնն է, որ զթագուցեալ մեղքն յայտնէ յուսով թողութեան. դեղն է և գործն յայտնել բանիւք. և վախճանն է յոյս թողութեան։ Նաև խոստովանութեան մինն է հոգեւոր. այսինքն մտաւոր, և այս լինի Աստուծոյ. զի միշտ և հանապազ պարտի զմեղս իւր տարածել առաջի Աստուծոյ ՚ի միտս իւր։ և միւսն մարմնոյն՝ որ լինի բանիւք. և զայս պարտ է յայտնել քահանային. և այս վասն տասն

պատճառի. Նախ՝ զի մարդն հոգի
է և մարմին. վն̄ այնր պարտ
է հոգւով և մարմնով խոստովանիլ
կատարելապէս. և զայն քահանային՝
որ է հայր հոգւոյ, և դայեակ
յոհ, եակ մարմնոյ։ Երկրորդ՝ զի նախ
գ՝ 22. քան զմարմնանալ բանին ա̄յ, միայն
մտօք խոստովանելի էր ա̄յ.
և յորժամ մարդ եղև՝ պարտի
խոստովանիլ մարդոյ բանիւ՛. այսինքն
քահանայի, որ փոխանորդ
յոհ, է ք̄ի ա̄յ։ Երրորդ՝ զի քահանայից
20՝ ետ իշխանութի̄ կապելոյ
22. և արձակելոյ. ըստ այնմ՝ թէ զոր
միանգամ կապիցէք յերկրի, եղիցի
կապեալ յերկինս. և զոր արձակիցէք,
եղիցի արձակեալ յերկինս։
ցուցանէ թէ նոքա են դատաւորք
մեղաւորաց. և նց̄ խոստովանիլ
պարտիմք. Չորրորդ՝
զի քահանայն կատարէ զեօթն
խորհուրդ եկեղեցւոյ. զմկրտելն,

զփսակելն, և զպատարագելն. նոյնպէս և քահանայն դնէ զապաշխարումն, որ է մի ՚ի խորհրդոցն. վ̃ս այն խոստովանիմք քահանային. Հինգերորդ՝ զի քահանայն է քաւիչ մեղաց, որպէս անուն իւր յայտնէ. զի քահանայն քաւիչ թարգմանի. վասն այն քահանային պարտիմք խոստովանիլ. Վեցերորդ՝ զի քահանայն է միջնորդ ա̃յ հաշտութե̃, և մարդոյ բարեխօս. զի հաշտեցուսցէ զա̃ծ ընդ մեղաւորին. ըստ այնմ՝ թէ որ հանէ զպատուականն ՚ի յանարգէն, բերան ա̃ն կոչեսցի. վասն այն պարտիմք քահանային խոստովանիլ. Եօթներորդ՝ քահանայն աղերսէ զզղջումն մեղաւորին առաջի ք̃ի, և ՚ի նմանէ շնորհս թողութե̃ իջուցանէ առ զղջացեալն. Ութերորդ՝ հրեշտակ ա̃յ ամենակալի է, և օրէնսդիր, մաղ, 2. 7.

ո՞չ ասէ մարգարէն․ զի շրթունք քահանային զգուշասցին 'ի գիտութե՟ն, և օրէնս խնդրեսցեն 'ի նմանէ, զի հրեշտակ տ՟ն ամենակալի է․ զի զգործ հրեշտակի կատարէ, և զօրէնս դնէ․ վ՟ն այն՝ նա՛ պահանջէ զպահպանութ՟ի օրինացն ա՟յ ։ Իններորդ՝ զի քահանայն քննօղ է և դատօղ սրբոյն և պղծոյն․ արատաւ՛որին և անարատին․ ո՞չ ասէ օրէնքն․ եթէ նոքա ընտրեսցեն զպիղծն և զս՟րբն, և'ի մ՟ջ դատաստանի յատեան կայցեն․ և յայտ է զի կոչի տէր․ այսպէս դատօղ և պատժօղ։ վասնայնորիկ 'ի տիպ ք՟ի նստի քահանայն 'ի դատողական յաթոռն, և մեղա՛ւորն 'ի ձախակողմ՟ն, յօրինակ ձախակողմեան դասուն գլխակոր և ամօթալից․ արտասու՛ալից աչօք և հառաչմամբ սրտի խոստովանի ք՟ի զիւր յանցանսն․ և տայ նա՛

զթողութ՟ի իշխանութ՟ե կարգին, և դնէ ապաշխարութ՟ի քննութ՟ե դատաստանին, և ըստ վճռին ծանր կամ թեթև. յաղագս այսորիկ՝ պարտ է քահանային միայն խոստովանիլ, և ոչ այլոյ ուրեք: Տասներրորդ՝ ըստ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչի, բարերարին մ՟յ բարերար խնամքն՝ ոչ անտես առնէ. և որք դառնան առ նա՝ բանայ զդրունս ողորմութ՟ե և շնորհաց, և ընդունի գթութ՟ե երախտաւոր ո՟րդ սիրոյն, և յանձանձէ զապաւինեալսն ՚ի նր՟ գթութիւն՝ ՚ի ձեռն ճշմարիտ խոստովանութ՟ե. և որ խոնարհեալ և բեկեալ սրտիւք ՚ի զղջումն սգաւորի, գթա՚ի նա և այցելու լինի փրկիչն. զի զծածկեալ մաղձն դառնութ՟ե ՚ի բաց փախեաց. և եցոյց եթէ զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի. զառողջութ՟ե

յճխ
ճառ
19

և զորբուն՟, և զարդարութն՟։ և զստունգանութն՟ ցաւոյն՝ ՚ի մարդասէր բժշկէն զառողջուն՟ դեղս ընկալցի զարդարուն՟ վարս․ ընդ դէմ մեղացն և դժնդակ ցաւոցն զոր ունէր։ զի այլ մի՛ ևս անկցի ՚ի նոյնն․ և այլ ո՛չ ևս գտցէ զմարդասէր բժիշկն։ զի կոչէ մարդասէր բանն ած՟ զծանրաբեռնեալսըն խոստովանուբ՟ յապաշխարութի՟․ զխաւարեալսն մեղօք՝ ՚ի լոյսն արդարուն՟․ և զմոլորեալսն՝ ՚ի գիտուի՟ ճշմարտուն՟․ և զվրիպեալսն ՚ի ճանապարհացն արդարութն՟՝ ածել յուղղուի՟․ և զմահաբեր վարս՝ ՚ի կեանս վերստին նորոգել խոստովանուբ՟․ և լուծանել զա՟մ խարդախութի՟ս սատանայի․ զի զա՟մ մարդ կամի զի կեցցեն (ասէ առաքեալն) և ՚ի գիտութի՟ ճշմարտուն՟ եկեսցեն՝ ամենադէտ սիրոյն տեսչուէ՟քն։ զի խոստովա Ա. Տի., 2. 4.

նու

նուն (ասէ մարգարէն) մեծ վայ սղմ,
ելչունէ առաջի ա՟յ և քննոյից 97,
նորա․ զի ասացի (ասէ) թէ պատ 6։
մեցից ինձէն զմեղս իմ, և դու
թողցես զա՟մ ամբարշտութ՟իս մեղաց իմոց։ զի զվէրսն բանայ և
զցաւսն յայտնէ․ և զդեղն բժշկութ՟ե 'ի վե՟ր ածէ զղջմամբ զապաշխարութ՟ին․ եռանդեամբ հոգւոյն՝ 'ի հանապազորդ արտասուալից աղօթսն անդադար 'ի տուէ
և'ի գիշերի․ և ողորմ կերպարանս
ստանալ ձնշելով զմարմին՟ն պահօք․ զի զա՟ծ 'ի գութ խոնարհեցուսցէ բազմախնամ շնորհօք առ
'ի թողութ՟ի մեղացն։ զի ապաշխարութիւն ոչ միով ինչ իւիք յարգի,
այլ բազում իրօք շինի․ և հասակ
արդարութ՟ե՟ն կանգնի․ անկեալն՝
և աւերեալն․ Զի նախ պարտէ
զղջալ և խոստովան լինել զմեղսն․ և արտասուաց ընդունարան

առնել զանձն՝ յապաշխարութ՟ն
ժամանակին։ անդադար աղօթիւք
և տրտմութ՟բ. և միշտ պահօք և մեծ
ապաշաւանօք՝ սգալ հանապազ
զյանցանս գործեցեալս։ քանզի՝
ստոյգ խոստովանօղք և ապաշխա
րօղք, ազատեալք լինին փրկաւէտ
մարմնով և արեամբն ք՟ի. զի նա
է յոյս մեր՝ և առիթ քաւութ՟ն.
և նովաւ ազատութ՟ի լինի, և մուտ
յուրախութ՟ին, և՚ի ժառանգութ՟ին
արդարոց. երախտեօք ք՟ի մ՟ք
սիրոյն, որ արդարացուցանէ զմե
ղաւորս՝ եթէ ապաշխարեսցեն.
Ա՟րդ՝ որ ՚ի ձեռն նախահարցն
ծանոյց զա՟ծգիտութ՟ի, և՚ի ձեռն
մարգարէիցն եցոյց զապաշխարու
Մարկ, թ՟ին՝ որք դառնան առ նա. իսկ
2,17։ ՚ի գալստեանն իւրում՝ եբաց
զդուռն ողորմութ՟ե և ասէ, ո՛չ եկի
կոչել զարդարս, այլ զմեղաւորս
յապաշխարութ՟ի խոստովանութ՟բ՝

՚ի

՚ի ձեռն արարչական խնամակալ սիրոյն. զի փութացեալք ՚ի կոչումն աւետեացն՝ առցուք զպարգևս ՚ի շնորհողէն ապաշխարութե՟ն զքաւութի՟. որ յաներեւոյթս զհոգիսն բժշկէ: Եւ նախ ՚ի ս՟բ յաւազանէնէ թողութի՟ հաւատացելոց, զԱմենաս՟բ Երրորդութ՟ին ճշմարիտ խոստովանութ՟բ. և զըմբռնեալսն ՚ի սատանայէ ՚ի մեղս՝ և վ՟ս մեղացն ՚ի մահ, արդարացուցանէ և կենագործէ, և հրաւիրէ յիւր արքայութ՟ին. և՚ի փառս՝ զոր պատրաստեաց սիրողաց իւրոց. դարձեալ և յաղագս մեղուցելոցն զպարգևս ապաշխարութե՟ն եցոյց, և յայտնի արար առաջնովքն. Ո՟պ զդաւթայ լսեմք մեղուցեալ և խոստովանեալ. որ լայր զա՟մ գիշեր և զըմպելին իւր արտասուօք խառնէր վ՟ս բարկութե՟ն տ՟ն. որոյ յաչացն՝ վտակք

արտասուաց հոսէին։ ըստ որում
ոչ պահեաց զպատուիրան տ՟ն,
վ՟յ՝ ցանկացօղ աչացն արտաս-
Մտթ, ուօք՝ սրբիւր ՚ի մեղաց։ Նա զպետ-
26, րոս ՚ի նորա է տեսանել, որ ուրա-
75. ցաւ և ոչ յիշեաց զյառաջագոյն
ասացեալն ՚ի տ՟նէ, մինչև հայե-
լոյն յիշէր զհաւուոյն ձայնն, և
ելեալ արտաքս՝ լայր դառնապէս։
և յաղագս ջերմ արտասուացն՝
Յօհ, էառ զթողու՟ին. և առաքելական
21, շնորհքն անդէն մնացին ՚ի նա՝
15. ո՟պ ՚ի դաւիթ մարգարեականն։
Թողում ասել և զայլ ևս զհնոցն
և զնորոյս մեղուցեալս, ո՟պ ասեն
ա՟ծային գիրք. որք և ցուցանեն
զօրինակս ստոյգ ապաշխարութ՟ե։
Նա այսպէս ոչ փակի դուռն կե-
նաց ապաշխարու՟ե, մինչ ՚ի վախ-
ճան աշխարհիս. այլ զհանապազորդ
սխալանսն՝ հանապազորդ արտաս-
ուօք ո՟պ աւազանաւ լուանալ և

սրբ

սրբել հարկ է մեզ. զի հանապազօր մեղանչեմք. է որ խորհրդով է. է՛ որ բանի՛ւ է. է որ լսելով, և է՛ որ տեսանելով, և է՛ որ շարժմամբ ի՛ւիք. վ՟ն այսոցիկ հանապազորդ աղօթք և լո՛ւացք արտասուաց մի՛ պակասեսցին. Եւ զի ասէ տ՟րն յակոբոս եղբայր տ՟ն թէ՝ խոստովան լերուք միմեանց զմեղս. և աղօթս արարէք ՚ի վ՟ր միմեանց՝ զի բժշկեսջիք. ՚ի վերայ այսր բնաբանիս՝ Ճառէ տ՟րն սարգիս շնորհալի և ասէ. խոստովանութիւն է մայր ա՟մ բարեաց, և նաւահանգիստ նաւակոծելոցն մեղօք. խոստովանութիւնն է գտիչ կորուսելոց, և դարձուցիչ մոլորելոց. ո՟պ քեզ օրինակ անառակ որդին, պետրոս, և պօղոս, աւազակն, և այլք. խոստովանութիւնն է սպեղանի վիրաւորաց, և քաղցր դեղ հի՛ւանդաց. որ յոյսն է ան յակ. 5,75. որդ. շնոր. 210

յուսից՝ և մխիթարութ՟ն ա՟մ վշտացելոց· որ առ ձեռն պատրաստ զէնն է ընդդէմ մեղաց՝ և անխնայ խոցոտիչ բանսարկուին· որ օգնականն է անկելոց, և ցուպ 'ի ձեռին գլորելոց· որ զա՟ծ ը՟ մարդկան է հաշտեցուցիչ, և զպատերազմն մեղացն խափանիչ· որ քան զա՟մ սկզբմունս զանազանեալ է, և հասարակակից է մարդկութե՟ա։ վ՟ս զի անտուստ իսկզբանէ աշխարհի օրինադրեցաւ սա· զի յորժամ պատուիրանազանցութ՟ին 'ի ներքս եմուտ 'ի մարդկան վարս, և երևեցաւ մեղքն, ընդնմին և երևեցաւ մարդասիրութ՟ին ա՟յ՝ քաղցրութ՟բ կոչել 'ի խոստովանութ՟ի մեղացն։ Ադամ ո՞ւր ես՝ յետ մեղացն ասէր նմա ա՟ծ։ զի՞նչ այլ ինչ կամէր հարցանելովն զեկուցանել ամենատես բնութ՟ին, եթէ ո՛չ՝ զնա 'ի խոստովանութ՟ի կոչել·

չել. որում անլուր եղեալ՝ դատապարտեցաւ. վ͞ս զի յո͞մ ուրեք ո͞մ ոք որ ասաց զմեղան և խոստովանեցաւ, քաւեցաւ. և որ ո՛չն ասաց՝ պարտաւորեցաւ. նայեա՛ց ընդ կայէն, և ընդ ղամէք, և ՚ի նոցանէ ուսիր զերկոցն ճշմարտութ͞ի. որ զմի կերպ մեղս գործեցին նոքա երկոքեանն. այսինքն՝ զսպաննութ͞ն. և մանաւանդ ղամէքայն սաստիկէր և մեծ. վ͞ս զի՛ կրկինէր և օրինակաւ. իսկ կայենին մի՛ և առանց օրինակի. Ղամէք, վ͞ս զի երկուցեալ ՚ի դատաստանացն ա͞յ որ ՚ի կայէն՝ դատապարտեաց զանձն իւր, և ընդ մեծագոյն դատապարտութ͞ մտել քան զկայէնին. նորին աղագաւ խոստովանեցաւ կանանցն իւրոց և ասաց, ո՛վ կանայք լուարուք ձայնի իմում, զի այր սպանի ՚ի վէրս ինձ. և երիտասարդ՝ ՚ի հար ւածս ինձ։ արդ՝ եթէ ՚ի կայինէ եօթն վրէժ խնդրեցաւ, իսկ ՚ի ղամէքայ եօթանասնեկին եօթն։ և զայս ասելով և խոստովանելով զծածուկ մեղսն, անցոյց զինքեամբ զբարկութի՟ն ա՟յ․ իսկ կայէն ո՛չ այսպէս․ այլ կոչեցաւ ՚ի խոստովանութ՟ի և ըմբոստացաւ․ Նմին իրի և դատապարտեցաւ։ և ո՛չ միայն սակս անզղջութե՟ն՝ այլևս առաւել վ՟ լրբութե՟ն։ զի ա՟ծ քաղցրութ՟բ հարցանէր, իսկ նա լրբութ՟բ առնէր զպատասխանին․ և վասն այնորիկ ա՟ծ առաւելատեաց զլիրբն, քան զյանցաւորն, զի մինչդեռ յանցաւոր միայն էր՝ հարցանէր և ՚ի խոստովանութ՟ի կոչէր․ և պատճառս խնդրէր թողուլ զմեղսն և արդարացուցանել։ իսկ յորժամ անամօթացաւ, ապա պատուհասեաց, և ո՛չ ընկալաւ զզղջումն ն՟ր և զխոստովանութի՟ն․

Տեսանե՞ս զխոստովանութե՟ն օրինակ. եթէ ո՞ւր արդեօք սկսաւ, և յո՞րքան զօրեաց անպարտ առնել զպարտականն. և պարտաւորել զայն՝ որ ո՛չն ընկալաւ զնա սիրով ՚ի ժամանակի իւրում. Նմին իրի և ինքն ա՟ծ, յորդորէ զմարդիկ ՚ի խոստովանութի՟. Ասա՛ (ասէ) զմեղս քո՝ զի արդարասցիս. զի մեղքն որ խոստովանի՝ թեթևանայ. ըստ այնմ՝ թէ ասա նախ զանօրէնութի՟ս քո, զի արդարասցիս. Եւ կամ այն թէ՝ տէր վասն այնորիկ պատմեցաւ քեզ և զարթուցեր զոգի իմ, մխիթարեցայ և կեցի. և ահաւասիկ ՚ի խաղաղութի՟ դարձաւ դառնութի՟ իմ, փրկեցեր զանձն իմ, զի մի՛ կորեայց, կոչեցեր յետոյ զա՟մ զմեղս իմ: Եւ որ ո՛չն խոստովանի՝ ես քան զես ծանրանայ. ըստ այնմ՝ թէ որ ծածկէ զմեղս իւր՝ եսյ՟. 78, 15.

ո՛չ

առ՟կ, 28, իգ։ ո՛չ արդարացի. իսկ որ պատմէ և յանդիմանէ՝ սիրելի եղիցի։ Մի՛ կարծեր ասէ, եթէ հրեշտակի հրամայեմ ասել զմեղսն՝ յորմէ կասկածիս ՚ի սրբութե՟ն մեղաւոր գոլով դու, իբրու պատուհասեսցիս ՚ի նմանէ սակս մեղացն. այլ մարդոյ քեզ նմանւոյ ասեմ խոստովան լինիլ զմեղս քո, որ ՚ի ներքոյ անկեալ կայ այնպիսի իրաց, որում և դու։ Նա՛ գիտէ իւրով տկարութե՟ն և զքոյն չափել և մարդասիրութե՟ ուղղել. զի և ինքն կարօտէ ա՟յ մարդասիրութե՟ն, և նորին աղագւ՛ և առ քեզ ներող գտանի։ Այս է զոր ասէ. խոստովան լերուք միմեանց զմեղս ձեր, և աղօթս արարէք ՚ի վ՟ր միմեանց՝ զի բժշկիջիք։ Նա՛ զկնի խոստովանութե՟ն՝ յորդորէ զքահանայսն աղօթս առնել ՚ի վ՟ր մեղուցելոցն և զղջացելոց. վ՟ս զի զմասն ան տի ամօթոյն՝ աստէն առաջի քո հատուցանէ 'ի խոստովանութե՟ն․ և արժանի է կարեկցութե՟ , Եւ՛ դու ասէ պարտական ես լալ ընդ լացեալսն , և սգակից լինել սգաւորաց ․ արդ աղօթիւք հա՛տ զպարտսն ։ Նմին իրի ասէ , աղօթս արարէք 'ի վ՟ր միմեանց՝ զի բժշկիցիք ․ ոչ 'ի մարմնական ախտից և եթ՝ այլև 'ի մեղացն վերայ՝ որ կարեվէր խոցէ զհոգի քան զա՟մ ցաւս մարմնոյ ։ քանզի յոյժ զօրաւոր են աղօթք ասէ յօգնականութի՟ , թէպէտ մարդիկ են ո՛վ տեսանէք , և ընդ բնութե՟ս կարեօք անկեալ , այլ վ՟ս զի քահանայք են՝ արդարք են և ընտրեալք յա՟յ ․ նորին աղագաւ զօրաւոր են աղօթք ն՟ց , այսպիսի գործս բազումս վճարել ․ և ոչ սոսկ զօրաւոր՝ այլ յոյժ զօրաւոր ․ զայսոսիկ ասելով՝ ուսուցանէ եթէ տկա րանայ նշ̃ և ոչինչ. զի զա̃մ զոր ինչ մատուցէք հաւատովք խնդրեսցէն յա̃յ, ստուգապէս առնուցուն. և յերբ ՚ի սբ̃ սրտէ և յանկեղծաւոր մտաց զաղօթսն մատուսցեն, յոյժ զօրաւոր են յօգնականութ̃ի ա̃մ ախտացելոց. եթէ մեղօք որ կարի ևս մեծն է, և եթէ ՚ի ցաւս մարմնոյ հիւանդութե̃ց. Արդ՝ եկեսցուք ՚ի բնաբանս մեր ասել զկերպէ խոստովանութե̃, որ կարի և յոյժ հարկաւոր և պիտանի է ա̃մց եղբարց իմաստնեաց քահանայից. որպէս գրեալ է ՚ի շահաւէտսն. Յորժամ գայցէ ոք առ քեզ խոստովանել զմեղս իւր՝ որոյ ոչ երբէք լըւեալ ես զխոստովանութիւնն. կամ ելով անտեղեակ կենցաղավարութե̃ն. Նախ պարտ է հարցանել՝ եթէ խոստովանեա՞լ ես թէ ոչ. եթէ ասիցէ ՚ի վաղուց հետէ խոստովանեալ եմ, հա՛րց նմա և ասա՛ եթէ կարե՞ս զանազանել զխոստովանեալ մեղս քո ՚ի յո՛չ խոստովանեցելոց․ եթէ ասիցէ, ո՛չ կարեմ զի մոռացեալ եմ․ հրամայեա՛ նմա խոստովանիլ զա̃մ մեղս իւր ընդ հանրապէս ՚ի վաղուց հետէ գործեցելս․ որքան կարիցէ բերել ՚ի միտն․ և մինչ նա խոստովանի՝ դու զգուշութ̃բ ՚ի միտ ա՛ռ զա̃մ խոստովանեալսն մի ըստ միոջէ․ զի դիցես զապեղանիս ա̃մ խոցուածոց նր̃․ իսկ եթէ մոռանայցես զոմանս ասացելոցն, մի՛ զանգ առներ զնոքօք․ այլ հա՛րց կրկին, և վերըստին տեղեկացիր, թէ զի՞նչ էր որ ասացն․ զի պա՛րտ է առ հասարակ բժշկել զվէրսն․ ո̃պ զի մի՛ ոմանք ՚ի նոցանէ անբուժ մնալով սպանցեն զհոգի նորին․

Եւ արդ՝ յորժամ խոստովանի

զմեղսն, հարցանել պարտէ զգուշապէս զպարագայս մեղացն, որք ծանրացուցանեն զմեղսն. այսինքն, զի՞նչ. ո՞ւր. ե՞րբ. որո՞վ. քանի՞ցս. վս՟ էր. ո՞րպէս մարդ. որո՞ւ է մեղուցեալն՝ թէ էգ. մատա՞ղ՝ թէ ծեր. ազնուա՞կան՝ թէ ռամիկ. աղքա՞տ՝ թէ հարո՞ւստ. ամուսնացեա՞լ՝ թէ ազա՞պ. ազա՞տ՝ թէ ծառա՞յ. գիտո՞ւն է՝ թէ տգէտ. կրօնաւո՞ր է՝ թէ աշխարհական. և այլն։ Զի՞նչ. այսինքն՝ պոռնկութի՟ է գործեցեալն՝ թէ շնութի՟. գողութի՟ է՝ թէ սպանութի՟. նախատինք է՝ թէ հայհոյանք. նո՞ր է մեղքն՝ թէ հին. և այլն։ Ո՞ւր. ՚ի սու՟բ տեղւոջ մեղանչեաց՝ թէ անս՟բ. ՚ի տա՞նն՝ թէ յեկեղեցին. Ե՞րբ. այսինքն՝ յաւուրս տօնի՞ց՝ թէ յայլ աւուրս. պահո՞ց՝ թէ ուտեաց. ՚ի վաղո՞ւց՝ թէ ՚ի մօտ աւուրս. և այլն։

Որով. այսինքն միջնորդովք գործեաց, թէ առանց միջնորդի. միջնորդն գիտէ՞ր զգործն զայն, թէ նոր ուսաւ. զի և նորին մեղացն ևս պարտական է։ Պարձէլ թէ որպիսի մեղանչեաց. այսինքն՝ յայտնի՞ թէ ի ծածուկ. կամա՞ւ թէ յակամայ. հաւանութ՟բ կամացն՝ թէ հեշտութ՟բ մարմնոյն. յորդորեա՞ց՝ թէ յորդորեցաւ. և այլն։ Քանիցս. այսինքն՝ քանի՞ անգամ մեղաւ. կամ քանի՞ ժամանակ. ընդ միո՞յ անձին՝ թէ ընդ բազմաց. և այլն։ Ընդէր. այսինքն՝ վ՟ն ագահութ՟ե՞ գործեցա՞ւ՝ թէ վ՟ն աղքատութ՟ե. սպանանելո՞յ աղագաւ էհար՝ թէ երկեցուցանելոյ. վ՟ն կատակի՞ տնազեաց՝ թէ վ՟ն չարութ՟ե սրտին. վ՟ն ընչի՞ց հպարտացաւ՝ թէ վ՟ն առաքինութ՟ե. բարկի՞ դիտաւորութ՟բ բարկացաւ՝ թէ սրտմտութ՟բ ախտին. և

այլ այսպիսիք, զորս խոհեմութե՟
խոստովանահօրն է քննու՟ի: Եւ
պարտիս խրատել սիրով և քաղցրութ՟
զխոստովանորդին քո, զի
մի՛ թագուցանիցէ ինչ ’ի մեղացն.
ասա՛ յորդորմամբ. ո՞վ որդեակ,
թէ մի միայն մեղք թագուցանիցես՝
ոչ է քեզ օգուտ խոստովանու՟իդ.
և ո՛չ արձակիս ’ի մեղաց
Ղուկ, քոց: քանզի ասէ տէրն մեր. թէ
12, 2. չէ՛ ինչ ’ի ծածուկ որ ո՛չ յայտնեսցի.
և կամ ըստ՟ թէ՝ գաղտնի գործոցն
ծածուկք՝ յայտնին ’ի մեծ
հրապարակ. և դողալով ընթանան՝
’ի յանվախճան ’ի տանջանս: և այլովք
այսպիսի վկայու՟ք ասել
տայցես զթագուցեալ մեղսն:
իմացիր ևս և զգուշ լեր. և մի՛
լիցի քեզ խոտել երբեք, և ատել
զխոստովանորդին. կամ բանիւ,
կամ այլ ինչ արարողութ՟.
զի մի՛ դու ’ի հպարտու՟ի անկցիս,
և լիցիս կեր սատանայի. և խոստո

վանորդին անկեալ ՚ի յուսահատուի, բաժին սատանայի լինի։ քանզի ասէ տէրն մեր և փրկիչն. ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս ՚ի յապաշխարութի. և թէ՝ ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ դարձուցանել նորին ՚ի չար ճանապարհէն և զկեալն։ ուստի խրատեմ, զի մի՛ ասիցէ սուտ ինչ վն խոնարհեցուցանելոյ զինքն. զի այն չէ խոստովանութի, այլ ստախօսութի։

Նաև զոր ինչ և գործեալ իցէ, պա՛րտ է զնոյնն ասել ճշմարտապս։ քանզի՝ աքար զարմեան, սաւուղ կիսեան, և յուդայ սիմոնեան, զայն մեղս ասելով ոչ արդարացան։ Բայց որք ճշմարտութբ խոստովանեցան, եղեն նցա փրկութի. որպ սրբոյն պետրոսի, և պօղոսի, անառակին, աւազակին, և այլոցն սրբց բազմաց, որք լիք են ՚ի գիրս սուրբս. զորս ոչ գրեցաք։ Նաև

Նչ։կ 2;

զգո՛ւշ լեր, զի մի՛ և դու գուցէ ՚ի տեղի նորին խոստովանեցիս · ոչ առնեն յիմար և անգէտ խոստովանահարքն. որ արդարև է մեծ և յոյժ անկարգութիւն։ Քանզի եթէ ոք իցէ ծարաւեալ, կամ քաղցեալ, պարտէ նմա ջուր ըմպել, և կեր ուտել · այլոց ըմպելին և կերեալն՝ ո՛չ լինի օգուտ նմա ՚ի զովացումն և ՚ի յագումն։ սոյնգունակ և մեղուցելոյն · ըստայնմ Թէ՝ ասացի պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու Թողցես զամ ամբարշտութիս մեղաց իմոց ։ զի խոստովանութին դատաստանէ նոր բաքննին · յորում ո՛չ է պարտ գտանել ստութի ինչ · այլ զոր ինչ գործեալ է և ունի ՚ի միտ՝ զնոյնն պարտ է տալ իւր բերանով և ո՛չ քոյովդ · զի քո բերանն զքո յանցանքդ պարտաւորի խոստովանիլ, և ոչ զնորայն ։ զի Թէ դու խոստովանիս վ՟ն նր՟, հարկա՛ւորի և նմա ասել ողորմեացի վասն քո։ վ՟յ պարտիս զգուշանալ յայնպիսի յանկարգութենէ. որ է մեծ տգիտու՟ն հոգւոյ, և կուրու՟ն մտաց, և խանգարիչ խոստովանու՟ն գեղեցկագոյն սահմանին. Ասա՛ առ խոստովանորդին քո, ո՞վ որդեակ, և բանա՛ւոր գառն յ՟սի ք՟սի. մի՛ գուցէ ստու՟ն ինչ խառնիցես ՚ի խոստովանու՟նդ վ՟ն խոնարհեցուցանելոյ զանձն քո. այլ զոր ինչ և գործեալ իցես՝ զայն ասա ստուգապէս. քանզի սուտն ՚ի հօրէ սատանայէ է ասէ տէրն. ո՛չ ա՛ւելի ասա՝ զի մի՛ դատապարտիցիս ՚ի ներքոյ ստաբանութ՟ե. և ո՛չ պակաս՝ զի մի՛ զրկիցիս ՚ի թողութ՟ե շնորհաց. Ասիցէ ոք թերևս, այլ զիա՞րդ բազումք ՚ի սրբազան արանց ՚ի մէջ աղօթական բանից իւրեանց դնեն զինքեանս 'ի ներքոյ բազում և զանազան մեղաց՝ զորս ո՛չ են արարեալ։ ասեմք թէ ո՛չ է այն յայտարարողութի՟ մեղաց առ մարդ ոք. այլ կոչի խոնարհութի՟ անձին առաջի անհուն ողորմութե՟ն այ՟. եթէ ո՛չ, ըստ ա՟մի զորս յանձն առնու ոք, հա՛րկ լինէր նմա ընդունիլ ապաշխարութիւն. որպէս պահանջէ սովորական սահմանն յատկական խոստովանութե՟. խրատեա՛ ևս, զի թէ ունիցի տարակուսութի՟ ինչ վ՟ն մեղաց իրիք. արդեօք գործեա՞լ իցէ թէ ո՛չ, ասասցէ զայն ևս թէ՝ վ՟ն այս ինչ մեղաց 'ի կարծիս եմ. ո՛չ գիտեմ, գործեա՞լ եմ թէ ո՛չ. Նաև՝ եթէ վ՟ն գործոյ իրիք գործելոյ՝ ունի կարծիս ինչ թէ՝ մե՞ղք էր արդեօք թէ ո՛չ, ո՛չ է պա՛րտ զիւրն գիտութի՟ բաւական համարել ինքեան. զի մի՛ գուցէ իբրև ոչ ճանաչելով զմեղս վնասեացէ զհոգւի իւր։ այլ պա՛րտ է զայն ևս դնել առաջի խոստովանահօրն ասելով, զայս ինչ գործ գործեցի, բայց ոչ գիտեմ մե՞ղք էր թէ ոչ։ Իսկ յորժամ խոստովանեսցի կատարելապէս զա՟մ յանցանս իւր, յայնժամ և դու դի՛ր նմա ապաշխարութի՟ որքան և կարելի իցէ ըստ պատշաճի յանցանացն. թէ ծանր իցէ, թէ թեթև, և թէ յո՛յժ փոքր. զի ոչ է պա՛րտ առանց ապաշխարութե՟ արձակել զմեղաւորն. Ը՟այնմ թէ՝ ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութի՟ն ա՟յ։ և թէ՝ եթէ մեղիցէ եղբայր քո, և դարձցի և ասիցէ եթէ ապաշխարեմ՝ թող նմա. և այլն ըստ կարգի։ Դարձեալ խրատեա՛ զնա և ասա՛. պա՛րտ է խոստովանիլ զա՟մ պարագայսն զայնոսիկ, որք փոխեն զտեսակ մեղացն.

վ՟ս զի զայսպիսին պարագայս հար-
կաւորաբար պա՛րտ է խոստովանիլ։
զոր օրինակ՝ եթէ արար պարզ
պոռնկութի՟ ը՟ օտարի, և ը՟ այնմ
որ ո՛չ է կապեալ ը՟ այլ, այն կո-
չի պոռնկութի՟։ Եթէ կամ ը՟ ազգա-
կանի՝ այն կոչի ազգապղծութի՟։
և կամ ընդ արամբուոյ՝ որ է զայր
ունող կին՝ այն կոչի շնութիւն։
Եթէ կամ թէ արար գողութի՟ ՚ի
ս՟րբ տեղիս, այն կոչի սեղանակո-
ղոպտութի՟, և այլ այնպիսեաց։ զո-
րոց յառաջի կայս ասասցուք մի
ը՟ միոջէ։ յորոց յո՛յժ զգուշանա-
լի է ո՛վ խոստովանահայր։ ուրեմն
զգուշացիր ՚ի պարագայիցս յայս-
ցանէ, զորս կարգաւ՝ գրեցաք
երեսուն յիսուն։ Սրատեմ զնա
զղջանալ վ՟ս ո՛չ գործելոյն զբա-
րիս։ և վ՟ս կորուսանելոյն ձրի
զժամն իւր։ և վ՟ս զի զայլս ՚ի
մեղաց ո՛չ դարձոյց, այլ առա-

ւել

ւ՛ել հաստատեաց տալով նոցա չար օրինակ և ո՛չ բարի· ՚ի մէջ խոստովանութե՟ն բազում անգամ խրատեա՛ զնա յորդորմամբք գըրովք սրբովք, զի ո՛չ թագուցէ զմեղս ինչ· մանաւ՛անդ յորժամ մերձ իցէ ՚ի վերջին խոստ՟վանութե՟ն։ Քանզի յայնժամ ունիցի աւելի համարձակութի՟· վ՟ զի ասաց զա՟մ զմեղս իւր։ Նա՛ նմա քաղցրութ՟բ· որդեակ եթէ մեղք ինչ թագուցանիցես, ոչինչ օգուտ է քեզ խոստովանութի՟դ· և ո՛չ արձակիս ՚ի մեղաց քոց։ Խոստովանահայրն ո՛չ պարտի ասել զխոստովանորդին բանիւ՛, կամ նշան տալով ինչ, կամ խորհրդով· թէ և անարգագոյն մեղս գործեալ իցէ· զի ը՟ այսմ կարէ ինքն անկանիլ ՚ի հպարտութի՟, և խոստովանորդին ՚ի յուսահատութի՟· այլ պարտ է ՚ի միտ ածել եթէ ինքն իցէր անկեալ յայնպիսի փորձու͞թի. և կամ գործեալ զայնպիսին, և կամ աւ՛ելի չարագոյն մեղս: Խրատելի է զխոստովանորդին, զի մի՛ թագուսցէ զներելի մեղս. զի գուցէ զոր նա՛ ներելի կարծէ, մահու չափ իցէ: և զի խրատելի է, զի մի՛ ասիցէ սուտ 'ի մէջ խոստովանու͞թեն. այլ զի՝ ստոյգն պարտի ասել. զոր ինչ և իցէ գործեալ: որ և ունելով 'ի մտի զայսոսիկ և զսոյնպիսիս, կարէ ուսուցանել զխոստովանօղն, և զգուշու͞թ որոնել զմեղս ն͞ր. վ͞ս զի ո͞պ է գործ խոստովանահօրն՝ զգուշու͞թ լսել զմեղսն, նոյնպէս և իմաստու͞թ որոնել: Եւ խրատելի է, զի 'ի ժամանակս ճաշակմանն զգուշու͞թ ճաշակել և կլանել. զի մի՛ մասն ինչ 'ի յատամունս մնասցէ: Ի͞կ արդ՝ եթէ ոք ասիցէ. զի՞նչ է խորհուրդն, որ խոս տովանելով քահանային Թողութի̃ լինի· և կամ զի՞նչ է օգուտն խոստովանութե̃։ Առ այս պատասխանեմ· է գտիչ կորուսելոց, և դարձուցիչ մոլորելոց։ զի սա՛ է մայր ամ̃ բարեաց· և նաւահանգիստ նաւակոծելոցն մեղօք· սա՛ սպեղանի վիրաւորաց, և քաղցր դեղ հիւանդաց։ Սա՛ յոյս անյուսից, և մխիթարութի̃ վշտացելոց։ Սա՛ առ ձեռն պատրաստ զէն ընդդէմ մեղաց, և անխնայ խոցոտիչ բանսարկուին։ Սա՛ օգնական անկելոց, և ցուպ ՚ի ձեռին գլորելոց։ Սա՛ զա̃ծ ընդ մարդկան հաշտեցուցիչ, և զպատերազմ̃ն մեղաց խափանիչ։ քանզի՝ զարքայութի̃ն բանայ որ փակեալ է մեղաւորաց· ո՛չ յիմար կուսանաց· և Ադամայ և այլոցն ամենեցուն։ Բայց յորժամ բանայ զդրանն և խոստովանի, բանի

որգօ
շնոր
հալի
210.

դուռն արքայութե̄. և մտանէ ընդ աւազակն յաջակողմեան դասուն. որ յորժամ եբաց զբերանն առ քս̄, և խոստովանեցաւ ասելով. յիշեա՛ զիս տր̄ ՚ի քում արքայութե̄. ՚ի նոյն ժամու պատասխանեաց տէրն ասելով, այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին։ Երկրորդ՝ խաս̄ութիւն զմեղս ջնջէ. ընդ ջուրն լուանայ զաղտ մարմնոյ. նոյնպէս խոստովանութիւն և արտասուքն լուանայ զմեղս ՚ի հոգւոյն՝ և թողու զմեղս. ըստ այնմ, ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ և դու թողցես զա̄մ ամբարշտութիս մեղաց իմոց։ Երրորդ՝ խաս̄ութիւն զա̄ծ յայտնէ մարդոյն. և զայն որ մեղօք բարկացուցել և հեռացուցել եմք, մերձեցուցանէ առ մեզ. ըստ այնմ թէ՝ մեղք ձեր որոշեն ՚ի մէջ իմ և ՚ի մէջ ձեր. և յորժամ դառնամք առ նա, և նա դառնայ

Գրիգ
պարթե
տման
310

առ մեզ. ըստ այնմ թէ՝ դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ. և թէ լուացարուք սրբեցարուք և ընկեցէք զչարիս անձանց ձերոց. այսինքն՝ խոստովան լերուք մեղանց զմեղս ձեր. և այլն. Չորրորդ՝ զողորմութ՟ին ա՟յ կակղացուցանէ 'ի վ՟ր մարդոյն. զի որքան առանց խոստովանու՟ե է մարդն՝ բարկութ՟ին ա՟յ 'ի վ՟ր ն՟ր է. և յորժամ խոստովանի՝ քաղցրանայ և թողու ա՟ծ. ո՟պ ասէ սաղմոսն. զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութ՟իս իմ ոչ ծածկեցից 'ի քէն. Նոյնպէս և մեք մինչ զմեղքն մերկացուցանեմք, նա ա՟ծ թողու. Հինգերորդ՝ զվէրս հոգւոյն բժշկէ. զի ո՟պ խոցն զմարմինն 'ի մահ տանի, նոյնպէս և մեղքն հոգւոյն մահացուցանէ խոց՝ որ տանի 'ի մահն յաւիտենից. և մինչ սպեղանի և դեղ դնէ՝ ըղ խոցն բժշկէ։ Նոյնպէս խոստովանութ̃ին բանալ զմեղս և բժշկէ զհոգին։ Մեցերորդ՝ զի մահն հանապազ սպասէ մարդոյն, ըստ տ̃րունական բանին․ և ո՛չ գիտեմք զժամանակն՝ թէ ե՛րբ կու մեռանիմք․ ըստ այնմ թէ՝ արթուն լերուք, զի ո՛չ գիտէք ե՛րբ տ̃ր տանն գայցէ․ յերեկորեայ, եթէ ՚ի մէջ գիշերի, եթէ ՚ի հաւ՛ախօսի, եթէ ընդ առաւ՛օտս, գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ՚ի քուն․ բայց որ ձեզ ասեմ՝ ամենեցուն ասեմ արթուն կացէք։ Վ̃ն այն՝ պա՛րտ է կեալ խոստովանութ̃բ․ զի բազումք ծուլանան ՚ի խոստովանու̃ե, և յանկարծակի մեռանին և իջանեն ՚ի դժոխս․ ո̃պ մեծատունն։ Եօթներորդ՝ եթէ ՚ի տուն ուրուք հուր ինչ անկանիցի, ո՛չ յապաղէ տանուտէրն․ այլ շուտով շիջուցանէ զհուրն ջրով, կամ քացախով։ Նոյնպէս՝ մեղքն մահու չափ և այլքն՝ դժոխային հուրք են որք այրեն զհոգին. զորս պա՛րտ է շուտով շիջուցանել ջրով արտասուաց և խոստովանութ̃. կամ քացախով չարչարանացն քսի̃. և թէ ոչ՝ այրէ զհոգին յաւիտեան։ Ութերորդ՝ որ զթշնամին պահէ բազում ժամանակ ՚ի տան իւրում, և բազմապէս վնասի ՚ի նմանէ, այնպիսի մարդն յիմար է։ ապա սատանայ որ ա̃մ ժամանակ թշնամի է մարդոյն, (ըստ այնմ թէ՝ ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ, խնդրէ և կամի թէ զո՞ կլանիցէ.) եթէ ոք պահէ զնա ՚ի տան իւրում, ո՞րքան առաւել վնասի. և այն յոյժ սոսկալի. զի սատանայն՝ ո՛չ միայն մերէ թշնամի, այլև ա̃յ։ Ինրդ՝ եթէ ոք զթշնամի Թագաւորին պահէ, և յորժամ իմանայ թագաւորն՝ ո՛չ ապաքէն զբազում փոսս հատուցանէ, և չարաչար մահուամբ սպանանէ զնա. այսէ՝ զպահօղն թըշնամւոյն. սոյնպէս և զմեզ՝ եթէ ո՛չ իմացուցանեմք: Ա̃յ խոստովանելով զմեղս մեր շուտապէս, և անկանիլով առ ոտս քահանային ա̃ծյ, որ է 'ի տեղի ա̃յ, ո՛չ տամք տեղի թշնամւոյն հոգւոյ մերոյ և ա̃յ. և թէ ո՛չ՝ գայ սատանայ, և մտանէ 'ի տուն առ 'ի գողանալ զհոգիս մեր. և տանիլ 'ի կորուստըն յաւիտենական. որ է դժոխքըն: Իններրորդ՝ զի որքան ծանր է հիւանդն՝ այնքան շուտով պարտի երթալ առ բժիշկն, և ցուցանել զվէրսն. զի յետ մահուն բժիշկն ո՛չ կարէ օգնել: իսկ հոգևոր հիւանդութիւնէ ծանրագոյն քան զմարմնաւորն. վ̃ն այն պա՛րտ է շուտով երթալ առ խոստովանահայրն և խոստովանիլ զմեղս իւր․ զի յետ մահուանն ոչ կարէ օգնել խոստովանութիւն։ զի դժոխայինք յայտնապէս խոստովանին զմեղս իւրեանց ՚ի դըժոխս, բայց ոչ օգտին․ ըստ այնմ թէ՝ ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ, այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ․ զի ասաց ա՟ծայինն պօղոս․ մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է, գործեսցուք զբարիս․ քանզի գայ գիշեր, յորում ոչ կարեմք գործել․ այս է՝ յետ մահուան։ Տասներրորդ՝ պարտ է հանապազ խոստովանիլ, զի հանապազ մեղանչեմք․ և մինչդեռ նոր է մեղքն՝ ունի ՚ի մտի․ և թէ յամէ՝ մոռանայ․ ուստի պարտ է յա՟մ կիւրակէի յաւուրն խոստովանիլ․ եթէ ոչ կարէ վ՟ս ծուլուէ՟ն, գոնէ տարին երեք անգամ․ և թէ ոչ՝ այնպիսին չէ՛ քրիս տանեայ։ Եւ՞ զի պա՛րտ է միշտ զմեղս իւր տարածել առաջի ա՟յ, և յայտնել քահանային։ Իսկ որ աստ խոստովանի զմեղս իւր, ազատի ՚ի տանջանաց դժոխոց. և որ ո՛չ խոստովանի, դատապարտի. և որ աստ յայտնէ զմեղս, առաջի ատենին ք՟ի ծածկէ զնա։ Եւ՞ արդ՝ որ ՚ի քահանայէն ծածկէ, անդ առաջի ա՟յ և հրեշտակաց և մ՟րց՝ և ա՟մ արարածոց յայտնի։ Գիտելի է, կրկին դատաւոր կացոյց ա՟ծ ՚ի վ՟ր երկրի. այսինքն՝ հոգևոր և մարմնաւոր. մարմնաւոր՝ ո՟պ դատաւորք երկրի, և իշխանք։ իսկ հոգևոր՝ ո՟պ քահանայք. և զանազանին սոքա. նախ՝ զի մարմնոյ դատաւորք, զմարմնոյ յանցանսն քննեն, և հատուցանեն զվրէժ. և քահանայք՝ զհոգևոր յանցանսն քննեն և զմեղս։ Երկրորդ՝ զի նոքա զյայտնի ըմ բռնելոյն հարցանեն. իսկ քահանայք զծածուկն քննեն և հարցանեն. զի որ ծածուկէ 'ի մարդկանէ, զայն յայտնել պիտոյէ առ քահանայն: Երրորդ՝ զի դատաւորք զայն հարցանեն՝ որ առ այլս լինի մեղանչել. այսինքն զյափշտակումն ընչից, տան, այգւոյ և այլոցն: իսկ քահանայքն զայն հարցանեն, որք ընդդէմ աւետարանին ա͞յ մեղանչեն, և կամ ընդդէմ եկեղեցւոյ. կամ հերձուածս խօսին, կամ յօրինաց ելանեն, կամ հայհոյեն, և կամ այլ ինչ: Դրդ՝ ոչ դատաւորք երկրի, որք մարդկան զդատաստանն կատարեն և կտրեն, և յետ այնորիկ ոչ հարցանեն զայնմանէ: Նոյնպէս որ ինչ յերկրի դատաստանաւ վճարի մեղք մարդոյս, թէ 'ի մարմնաւոր դատաստանին, և թէ 'ի հոգեւոր քահանայս, զայն մեղքն այլ ո՛չ հարցանէ ք՟ս ՚ի մեծի դատաստանին. բայց թէ մեղք լինին մնացեալ, որ չիցէ խոստովանեալ. կամ զպատիժն, կամ զլուծ մեղացն չիցէ վճարեալ, զայն հարցանէ ՚ի դատաստանին։ Նա վ՟ն այն ՚ի յերկրի զայս կրկին դատաւորս կացուցեալ է ա՟ծ յիւր երեսփոխան և դատաւոր, որք զինչ սոքա վճիռ տան՝ այլ ո՛չ փոխի. ո՟պ ասէ տէրն. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ՝ յերկինս։ Նախ վ՟ն բազում պատճառի լաւ է առաջի քահանային խոստովանիլ և դատիլ, քան պահել զոր ք՟ս հարցանէ և դատէ։ Նախ՝ զի աստ քահանայն միայն է լսօղ մեղացն. իսկ անդ բոլոր արարածք երկնաւորք և երկրաւորք ՚ի մի վայր ժողովեալք. որ յո՟յժ խայտառակիս․ Երկրորդ՝ տաս քահանայն հեզութ՟ հարցանել՝ զի քո մարմնակից ընկեր է․ այլ անդ դառնութ՟ և դժուարութ՟ հարցանէ քո՟, որ ած՟ է և որդի այ՟․ զի յերեսաց նր՟ ահէ մեղաւորաց․ (ասասցեն լերանց թէ անկերուք ՚ի վր՟ մեր, և բլրոց թէ ծածկեցէք զմեզ։) Երրորդ՝ Առաջի քահանային ոսոխ միայն դու ես քո անձինդ․ այլ անդ ընդ քեզ և գործք քո ոսոխ են քեզ․ և դիւաց բազմութի՟ք չարախօս․ երկինք և երկիր վկայ չար գործոց մեղաւորաց։ Նաև ամ՟ սբ՟ք և հրեշտակք այ՟, որք այժմ բարեխօսեն՝ յայնժամ ոսոխ և չարախօս լինին։ Չորրորդ՝ տաս ՚ի խոստովանիլն թողութ՟ի առնումք․ յայնժամ թէպէտ խոստովանիմք և յայտնեմք զմեղսն մեր՝ թողութ՟ի ոչ է՝ զի պատժելոյ է ժամանակն,

նակն, և ո՛չ ներելոյ. ո՞ր գողն որ ՚ի կախաղանն յորժամ տանին՝ Թէ և խոստովանի զմեղսն, այլ ո՛չ զերծանի. զի կամաւ ո՛չ խոստովանի. և ակամային թողութի̃ չիկայ. և ժամանակն անցեալ է. նոյնպէս և անդ: Հինգերրորդ՝ սաստ քահանայն միայն է՝ և բանքն իւր. դիւրաւ զերծանիս: այլ անդ բիւրք հրեշտակաց կան ՚ի սպասու, յորժամ հրամայէ քս̃՝ փութով տանին զմեղաւորն ՚ի տանջանսն: Վեցերորդ՝ սաստ քահանայն անցաւոր պատիժ դնէ սակաւ ինչ. կամ յամիս, կամ ՚ի տարիս. պահս, աղօթս, ողորմութի̃. և այլն: Իսկ անդ յաւիտենական է պատիժն: սաստէ սքանչելի՝ զի քահանայն զյաւիտենական պատիժն ժամանակեայ առնէ, և քո ո՛չ խոստովանելդ՝ զժամանակեայ պատիժս յաւիտենական.

կան· զի յաւիտեան տանջէ։ ապա անցաւոր պատիժ կրել աստ լաւ է, քան անանց և անվախճանն անդ։ Յօթներորդ՝ աստ թէ քահանայն պատիժ դնէ, կարեմք վճարել· զի կայ ժամանակ· ունիս աչս՝ արտասուելոյ· զինչս՝ ողորմու՟ի բաշխելոյ· և կելով՚ի պահս՝ զթողու՟ի առնուս· այլ անդ ժամանակ ներելոյ չկայ· վաստակել չկայ· որով կարիցես վճարել· վ՟ այն՝ զի յաւիտենական և անվճար է մեղքն· Ութերորդ՝ աստ առաջի քահանային կարես խօսել, աղաչել, որ թեթևացուցանէ զլուծն· այլ անդ խօսել չկայ· աղաչանաց ո՛չ լսէ· բանքն սպառեալ են մարդոյ և գործն թագաւորեալ· փոխանակ բանիցն՝ գործն է որ խօսի· և փոխանակ լեզուին՝ ՚ի մարմինս մեր ո՟ղ մագաղաթ ա՟մ ծածուկ

յան

յանցանք մեր գրե՟լ լինին պարզ· որև ա՟մ մարդիկ, և հրեշտակք և դևք, չարք և բարիք, զմեզ տեսանեն և կարդան· այն է որ ասէ՝ դպրութի՟ք բացեալ լինին, և դնին կշիռք արդարութե՟, և հատուցանի ըստ գործոց։ Իններորդ՝ ասա քահանային կարեն միջնորդել այլք, և զծանր լուծ նորա թեթևացուցանել· այլ անդ՝ ո՛չ ոք միջնորդէ մեղաւորին։ զի երկինք և երկիր, և ա՟մ տարերք 'ի վրէժխնդրութի՟ են պատրաստե՟լք։ և ս՟րբք և հրեշտակք, որք այժմ մեզ բարեխօս են, յայնժամ ոսոխք և ատեցողք են մեղաւորաց· և ոչ ոք լինի միջնորդ։ Տասներորդ՝ ասա քահանայն կարէ փոխել զբանն, և թեթևացուցանել զպատիժն· այլ անդ՝ անդառնալի է վճիռն· զի միանգամ խօսի ա՟ծ, և զնոյնն ո՛չ երկրորդէ· որ ասէ արդարոց թէ՝ եկայք. և մեղաւորացն՝ թէ երթայք. այնէ վերջին խօսքն ընդ մեղաւորաց. և անդառնալի վճիռն. վ՟ն այն՝ աստ պարտէ մեզ առաջի քահանայի խոստովանիլ, և դիւրաւ զերծանիլ 'ի մեղաց. աստ հատուցանել զյետին բնիոնն ապաշխարութ՟բ. Աստ զհաշիւ մեղացն տալ վերակացու քահանային. աստ զծանր բեռինս մեղաց թեթեւ՟ցանել 'ի թիկանց մերոց. զի խաղաղութ՟բ անցցուք ընդ դունդս դիւաց. Աստ խոստովանեսցուք զմեղս մինչ որ կայ. մինչդեռ 'ի մարմնի եմք, և կարեմք արդարանալ խոստովանութ՟բ, պահօք, աղօթիւք, ողորմութ՟բ, և առ սէր ընկերին 'ի ս՟բ սրտէ, և 'ի մաքուր հաւատոց. և այլ ա՟մ բարեգործութ՟բ որ սոցին նման են. Հաւատալ և ապաշխարու՟ե մեղաց. զոր մարդասէրն

ա՟ծ՝

Ներէք
Երէ.,
473.

Եզէկ, ած՟՝ (որ ո՛չ կամի զմահ մեղաւո–
33, րին, այլ զդառնալ նր՟ 'ի չար ճա–
11: նապարհէ և զկեալն,) օծաւ լուա՛ց–
ման և սրբութե՟ մեղաց եւ եկե–
ղեցւոյ: զի Թէպէտ և առաջին
կամք նր՟ է՛ մնալն մեր սրբութե՟ և
արդարութե՟ յանմեղութի՟, այլ ո՛չ
արարիչ բնութե՟ն՝ գիտէ զտկարու–
թի՟ն մեր՝ զի դիւրադթելի եմք
և սխալականք. և հ՟նապազ 'ի վայր
հակիմք 'ի բարձրութե՟ առաքինու–
թե՟: ունիմք և մարտակից Թշնամի
յոգնահնար և բազմարուեստ,
և'ի չար առնելն իմաստուն: Վ՟ն
այնորիկ երկրորդ կամօք՝ ո՛չ ա–
ռաջնով (ըստ բազում ողորմութե՟
իւրոյ և անոխակալ գթութե՟ և
այնքան սիրոյն) հայրն բարերար՝
զորդին իւր ետ 'ի մահ վ՟ն մեր.
և միածինն՝ զինքն. և հոգին սր՟՝
զփառակիցն: Ե՛տ և զապաշխա–
րութի՟ն՝ զի նեխեալքն և հատեալքն
յան

յանդամոց ք՟ի մեղօք՝ առողջա
ցին ապաշխարութ՟բ. և վերստին ՚ի
գլուխն պատկանեալ յօդեսցին։
վ՟յ պա՛րտէ հաւ՟ատալ՝ թէ ո՛րչափ
և մեծամեղք իցեն, զղջմամբ և
խոստովանութ՟բ, և արտասու՟օք և
ողորմութ՟բ, պահօք և աղօթիւք
սրբեսցին ՚ի մեղաց և առողջասցին։
ը՟ թէ՝ եթէ իցեն մեղքն քան
զծանծախարիթ անլու՟անալի սևու
թ՟բ՝ իբրև զձիւն սպիտակասցին.
և եթէ իցեն արեամբ չափ ո՟պ
զներկու՟ած որդան ՚ի գոյն կար-
միութ՟ե անելանելի՝ իբրև զասր
սրբեսցին։ Նմլ բարերարն և Նրեէ
մարդասէրն ա՟ծ ըստ անչափ սի Երես
րոյն իւրոյ զոր ունի առ ազգս 521։
մարդկան՝ կամելով զսոսա միացու
ցանել յինքն՝ ետ սոցա պատճառ
սրբութ՟ե զխոստովանութ՟ին և զա-
պաշխարութ՟ին։ զի ա՟մ որք ճշմարիտ
սրտի՛ ըստ գիտակցութ՟ե մտաց իւ-

րոց՝ ՚ի շտեմարանս սրտին մտանելով՝ մանրամասնաբար որոնեսցէ զա՟մ սխալանս հոգւոյ և մարմնոյ և մտաց. զխորհրդոց, զբանից, և զգործոց. և խոստովանեսցի անապականաբար և անծածկապէս՝ ոչ զթշնամւոյ ամբաստանելով զմեղացն: Նա՛ տարցէ ըստ չափոյ կարողութե՟ն զսահման ապաշխարութե՟, և ապաշխարեսցէ և սրբեսցի: Սակայն գիտել պա՛րտ է, զի զա՟մ մեղսն մինչ ՚ի մանունան իջանելով՝ ո՛չ ոք կարէ զմտաւ ածել և խոստովանել. թէ և բիւր անգամ ջանայցէ: Նա՛ գրեսջիր՝ թէ ըստ գործոցն կարէ յիշել և խոստովանիլ. իսկ զխորհրդոցն և զբանիցն ո՟չ: և եթէ յիմար ասելն և մորոս՝ գեհեննին դատապարտէ. և Մատ, 5,22: դատարկաբանութի՟ն ՚ի պահանջանս 12. համարոյ ածէ, ո՞ ոք է որ զայս 36: զմտաւ ածեալ և կարէ խոստովանել:

նել։ Արդ՝ զոր մտածեաց և խոստովանեցաւ և ապաշխարեաց՝ զայնս սրբեաց. և զոր ոչն կարաց յիշատակել՝ զայն մարմին և արիւնն ք՟ի սրբէ։ և ճշմարտի երկոցունցն բան. տ՟ն և առաքելոյն։ զի որ առանց խոստովանութե՟ և ապաշխարութե՟ ուտէ և ըմպէ, դատապարտի ըստ առաքելոյն. և որ խոստովանութ՟ և ապաշխարութ՟, քաւի ըստ ք՟ի։ զայն զայս յայտ առնէ և որոտմանն որդի։ Եթէ 1.05
ասեմք ասէ՝ եթէ մեղս ինչ մեք 1.8
ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութի՟ ՚ի մեզ ոչ գոյ. ապա եթէ խոստովան լինիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ ՚ի թողուլ զմեղս մեր. և արիւնն յ՟ի որդւոյն այ՟ սրբէ զմեզ յա՟մ անօրէնութե՟։ Թուի թէ զայն ակնարկէ. զի թէպէտ և խոստովանեսցի ոք՝ բայց զխա

տա

տարեալ Թողութի՟ն՝ հաղորդութ՟ի
մեղսաքաւիչ մար՟մնոյ և արեանն
Եսայ, 65, 67. ք՟սի պարգևէ։ Ուսանիմք զայս
և յօրինակէ սերոբէին՝ որ առ
մարգարէն. վ՟ս զի խոստովան
եղև մարգարէն. Թէ պիղծ շըրթունս
ունիմ, և՚ի մէջ պղծաշուրթըն
ժողովրդեան բնակեալ եմ
ես. Եւ ապա սերոբէն էառ
ունելեօք ՚ի հրոյ անտի որ ՚ի վ՟ր
սեղանոյն, եբեր մերձեցոյց ՚ի
բերան մարգարէին և ասէ. ահա
այդ մերձեցաւ ՚ի շըրթունս քո,
և հանցէ զանօրէնութ՟իս քո, և
զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն։ Տեսանե՞ս
ահա՛՝ զի Թէպէտ և ս՟բ
էր մարգարէն, և առաւել քան
զա՟մ մարդիկ. մինչ զի՝ հոգւոյն
էր բնակարան, և զտէր զօրութե՟ց
ետես յաթոռ փառաց. այլ օրինակի
մարմնոյն ք՟սի կարօտացաւ
՚ի մեղացն մաքրութ՟ե։ Եւ յետոյ

մաքուր մաղթանօք և աղաչանօք առ Ա̅ծ զձեռս համբառնալով՝ զարդարեսցուք զնա և այլովք բարեգործուե̅ք։ այսինքն տրօք տնանկաց, և կարկառելով ձեռն յաղքատս․ զի և այս ոչ փոքր ինչ նպաստ լինի առ ՚ի մեղացն մաքրութի̅։ ըստ այնմ՝ զմեղս քո ողորմուե̅ք քաւեսցես, և զանօրէնութի̅ս քո գթովք տնանկաց։ դան, 4, 24․ գործել ձեռօք և տալ կարօտելոց՝ ըստ խրատուն պօղոսի․ զբարիս գործել տուք մի՛ ձանձրանայք․ զի ՚ի ժամանակի իւրում հնձեսջիք առանց լքանելոյ։ գաղ, 6․ 9․ և ա̅մ վտանգելոց, որք կարօտ են օգնականութե̅․ հիւանդաց, տկարաց, և ծերոց՝ սպասաւորել առանց հեղգութե̅․ ո̅պ իւրաքանչիւր ումեք կարևոր պէտքն պահանջէ։ զի յաւիտենական բարեացն հասցուք ՚ի ք̅ս̅ յ̅ս̅ ՚ի տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Նախ զի, պա՛րտ է և զայս իմանալ. զի խոստովանահայրն ճշմարիտ քահանայ լինիցի, և ո՛չ աշխարհական։ Երկրորդ՝ զի ուղղափառ լիցի և ոչ հերձուածող. քանզի՝ ո՛չ է ընդունելի խոստովանութի̃ հերձուածողին։ Երրորդ՝ զի մի՛ լիցի ընդ կապանօք. վ̃ն զի բանադրեալն ո՛չ կարէ ներգործել զքահանայական իշխանուի̃. Չորրորդ՝ զի մի՛ լիցի խուլ. զի անհաշտ քահանայն՝ ո՛չ կարէ զա̃ծ ընդ մարդկան հաշտեցուցանել։ Հինգերորդ՝ զի գիտուն և իմաստուն լիցի. որ կարիցէ զանազանել և ճանաչել զմեծ և զփոքր մեղսն։ Վեցերորդ՝ զի ամրաբերան լիցի և ո՛չ յայտնիցէ զմեղս. և թէ դատապարտեն, չարչարեն, և սպանանեն զինքն, ո՛չ յայտնիցէ. և թէ երդումն տան՝ կարէ երդնուլ․ Թէ ո՛չ գիտեմ որպիսի եղեն։ Պատմի թէ՝ տղայի միոյ պատահեալ եղև, զի ետես որ զիւր հայրն սպանին․ և երբ հարցին՝ ո՛չ ասաց զսպանողն որ սպան․ և եղև մարտիրոս առաջի ա՟յ։ զի քհնայն յատենի խղճմտանացն՝ խոստովանահայրէ խոստովանորդւոյն՝ փոխանորդ ա՟յ․ և յայնմ մասին ո՛չ ունի վեհագոյն քան զինքն առաջի ա՟յ, թէ և կաթուղիկոս իցէ․ ուստի խոստովանութի՟ ո՛չ ըստ որում մարդ, այլ ըստ որում փոխանորդ ա՟յ՝ լսէ զխոստովանութի՟ն․ վ՟յ երդնու ո՟պ մարդ՝ թէ ո՛չ գիտեմ զնո՟ր գործսն։ Եօթներորդ՝ զի արդար լիցի և ո՟ք․ և ո՛չ զառածեալ մեղօք․ վ՟ն այն, զի կոյր ոք՝ ո՛չ կարէ զկոյրն լուսաւորել, ո՟պ և հիւանդ ոք՝ ո՛չ կարէ զհիւանդ բժշկել։ Ութերորդ՝ ո՛չ է պարտ խոստովանոհօրն լինիլ ագահ. զի մի՛ վ՟ն ագահուե՟ ընչիցն՝ ո՛չ առնիցէ զթողութ՟ի յանցանացն. զի յոյժ անպատեհ և անտեղի է՝ որ զխոստովանորդին յորդորէ տալ ինքեան զինչս՝ փոխան մեղացն. զի թողութին ՚ի կողմանէ ա՟յ տայ խոստովանորդուոյն, և ո՛չ ՚ի կողմանէ իւրն. թէ առնուցու զինչս ՚ի նմանէ. Իններորդ՝ զի մի՛ լիցի բարկացող. զի մի՛ յորժամ լսէ զմեղս՝ բարկացեալ զրկէ յապաշխարուե՟ զմեղաւորն. այլ հեզաբար և քաղցրուե՟ յորդորեսցէ յապաշխարութ՟ի։ Տասներորդ՝ մի՛ լիցի նախանձոտ. զի մի՛ վ՟ն նախանձու յայտնեսցէ զմեղս մարդկան. այլ սիրով ա՟յ ինքն իցէ լցեալ, և զխոստովանորդին ՚ի սէր իւր եռացուսցէ.

Այսքան
առ այս։

Յաղագս հերդի իրաց գիտելեաց խոստովանորդաց:

Պէ՛ գիտելոյ զկերպ խոստովանուե̅ խոստովանորդաց՝ այս է. Նախ՝ խոստովանահայրն զդէմն քո ունի, նստելով յաթոռ դատողուե̅. և որ խոստովանի, նըստի ՚ի ձախակողմն. ո՛վ մեղաւորքն ՚ի ձախակողմն ՚Քսի. բայց այժմ՝ կացուցէ զայծիսն ՚ի ձախմէ: Երկրորդ՝ ՚ի վր̅ ծնկաց պարտ է՛ անկանիլ: Երրորդ՝ բացագլուխ. թէ արու իցէ: Չորրորդ՝ տխրեցեալ դիմօք: Հինգերորդ՝ կցել ձեռօք. իբր թէ սուգ առեալ է ՚ի վր̅ մեղաց: Վեցերորդ՝ ոգոց հանելով, և հառաչելով: Եօթներորդ՝ արտասուելով, և ո՛չ ծիծաղելով: Ութերորդ՝ ամօթալից դիմօք: Իններորդ՝ ա-

պտոՒ ջման 321

ձա

ձաղելով զինքն։ Տասներորդ՝ զփրկութ՟ին խնդրելով մեղացն։ Եւ ասել՝ Նախապէս՝ թէ սիրտ իմ խոտորեցաւ ՚ի պաշտօնս այլազգեաց, հրէից, հեթանոսաց, և կամ հերձուածողաց. կամ թիւրեցայ ես ՚ի կրօնս նոց, որք են հակառակ ք՟սի, և հայհոյիչ ա՟ծութե՟ն ն՟ր։ Երկրորդ՝ թէ սուտ երդուեալ ՚ի ք՟ս ա՟ծ և յեկեղեցի. և յա՟մ դատարկ և յունայն բանս երդուեալ ՚ի յանուն ահեղ ա՟ծուէ՟ն։ Երրորդ՝ թէ ծուլացայ և հեղգացայ ՚ի պահս, և յաղօթս, և յեկեղեցի. ՚ի տօնս տէրունականս և՚ի տօնախմբութ՟իս, և՚ի յիշատակս ս՟րբց։ Չորրորդ՝ եթէ եկն ՚ի սիրտ իմ հայհոյու՟թի, և այլ անպատեհ բան. զոր ՚ի բերան բերել և մարմնացուցանելն է ևս մեղք. զի սատանայ ածէ զչար խորհուրդ ՚ի ներքս ՚ի միտս մեր՝ առ ՚ի հնազանդիլ կամաց նր̃· և թէ չհաւանիմք և չտամք տեղի՝ զբաղելով ՚ի սբ̃ գիրս և ՚ի բարի խոկմունս, յետս դառնայ և գընայ՝ չգտանելով զհ՛նգիստ։ Հինգերրորդ՝ թէ անարգեցի զհայր իմ, կամ զմայր, և հայհոյեցի զայլ ոք։ Վեցերորդ՝ թէ սպանի ըզմարդ. խորհրդով, բանիւ, կամ գործով։ Եօթներորդ՝ թէ անկաւ թերութի̃ ՚ի սիրտ իմ. ՚ի յա̃ծ, կամ ՚ի սբ̃ ա̃ծածին կոյսն, և կամ ՚ի խորհուրդն սբ̃ մարմնոյ և արեանն ք̃սի. և կամ յայլ ա̃մ սբ̃ խորհուրդս եկեղեցւոյ։ Ութերորդ՝ թէ անկայ ՚ի պոռնկութի̃. ընդ հաւատացելոյ, կամ ընդ անհաւատի. ընդ ծանօթոյ, կամ ը̃ օտարի. ընդ արուի, կամ ընդ իգի. և կամ ընդ այլ ստեղծուածոյ։ Իններորդ՝ եթէ ցանկացայ երեսաց ումեք. խոտորեցաւ սիրտ իմ, և զօրացաւ տոփումն ցանկութե՟ իմոյ: Տասներորդ՝ թէ գողացայ զինչս այլոց. մեծ, կամ փոքր. շատ, կամ սակաւ. պատուական, կամ անարգ. հաւատացելոյ, կամ անհաւատի. մեծատան, կամ աղքատի. եկեղեցւոյ, կամ ժողովրդեան. զիմոց, և կամ զայլոց: Մետասաներորդ՝ եթէ ցանկացայ մեծութե՟, կամ հարստութե՟. ոսկւոյ, կամ արծաթոյ. հանդերձի, կամ ստացուածոյ. խաշանց, կամ հօտից. և կամ այլ ստեղծւածոց: Երկոտասաներորդ՝ եթէ անկարգուբ՟ կերակրեցայ. և խճեցի զորովայն իմ. և կամ յագեցայ գինւով. յիմարուբ՟, և արբեցուբ՟. և կամ նախ քան զկերակուրն, կամ յետ կերակրոյն, թարց օրհնութե՟ և գոհանալոյ զտ՟նէ կերակրեցայ: Երեքտասաներորդ՝ եթէ տրտմեցայ վս՟

մարմ

մարմնաւոր ցանկութե՟ց պականելոյ, և կամ վ՟ս մարմնաւոր ազգականաց մեռանելոյ։ Չորեքտասաներորդ՝ եթէ բարկացայ եղբօրն իմոյ տարապարտուց և զդատանու՟ի թիւնից իմոց՝ հեղի 'ի վ՟ր ն՟ր. կամ հարի ձեռօք իմովք, և գաւազանաւ. կամ տալով հայհոյու՟ն առ զայրացումն։ Հնգետասաներ՟րդ՝ եթէ ձանձրացայ յաղօթս, 'ի պահս, կամ 'ի գործս մարմնոյ իմոյ. կամ 'ի հոգևոր ուսումն. կամ յարուեստ. և կամ յայլ բարեգործութ՟իս։ Վեշտասներ՟րդ՝ եթէ նախանձեցայ ընդ յաջողութ՟իս այլոց. ընդ գիտու՟ն, կամ ընդ արուեստ. ընդ հարստու՟ն, կամ ընդ զօրու՟ն. և յայլ յայսպիսիս։ Ժէրր՟դ՝ եթէ հպարտացայ ամբարտաւանու՟բ 'ի յաղօթս իմ և յարտասուս. և յողորմու՟ն իմ. 'ի գիտու՟ն իմ, 'ի հանդերձս, և'ի ստացուածս։ ԺԸ երր՟դ՝ եթէ մեղայ հինգ զգայութեամբս իմով. աչօքս՝ ՚ի չարն հայելով. ականջօքս՝ լսելով չարին. բերանովս՝ զվատթարն խօսելով. ռունգամբս՝ զչար գարշուն հոտն առնելով. ձեռօքս՝ զրկելով, գողանալով, և հարկանելով. և այլ սոյնպիսիս։ ԺԹ երր՟դ՝ խորհեցայ սրտիւ բանիւ և գործով, կատարել զա՟մ գործս չարու՟ե։ Ի երրորդ՝ եթէ ոչ ողորմեցայ և ոչ գթացայ ՚ի քաղցեալսն և ՚ի ծարաւեալսն. ՚ի մերկսն, ՚ի հիւանդսն, ՚ի բանտարկեալսն և ՚ի կապեալսն։ Եւ քանզի գիտելի է, զի մարդս երիւք մեղանչէ. կամ խորհրդով, այսինքն՝ սրտիւ. կամ բանիւ, այսինքն՝ բերանով. կամ գործով, այսինքն՝ զգայարանօք։

[illegible]

Մ՟եղք սրտին են այսոքիկ։

Ցանկալ չարին. հեշտանալ ՚ի չարն. Թիւր դիտաւորութի՟. անհաւատութի՟. անջերմեռանդութի՟. յանդգնութի՟. անգթութի՟. ատելութի՟. նախանձ. բարկութի՟. չարասիրութի՟. յուսահատութի՟. ագահութի՟. յամառիլ ՚ի չարն. ձանձրանալ ՚ի բարին. սէր հաճոյանալոյ մարդկան. երկիւղ վ՟ն ոչ հաճոյանալոյ. և ձանձրոյթս վ՟ն բարի գործոյ. և կամ վ՟ն աղքատ բարեկամաց, և այլն։

Մ՟եղք բերանոյն են այսոքիկ։

Յաճախ երդնուլ. սուտ խօսիլ. սուտ վկայել. մատնել. հայհոյել. բամբասել. նախատել. անիծել. սպառնալ. վատահամբաւել. շողոքորդել. պարծենալ. գովել զչարն.

դատարկաբանել․ բազմախօսել․ չար խրատ տալ․ տարաձայնութի̄ սերմանել․ 'ի յերգս Սատանայինս՝ սուաւել ջանալ պաճուճել ըզձայնն՝ քան իմանալ զբանն․

և այլն․

Մեղք գործոյն։

Որկրամոլութի̄․ արբեցութի̄․ բղջախոհութի̄․ կախարդութի̄․ ցոփաշարժութի̄․ հարկանել․ գողանալ․ յափշտակել․ վաշխառութի̄․ խաղալ զմեղանչական խաղս․ տալ պարգևս կատակերգողաց․ խնայել ինքեան զհարկաւորն․ կաքաւել 'ի պարս․ նեղել զփոքրագոյնս․ մեղանչել լսելով․ տեսանելով․ ճաշակելով․ հոտոտելով․ շօշափելով․ ձեռն ձգելով․ համբուրելով․ ընծայիւ․ ակնարկութբ̄․ պատգամաւ․ թղթագրութեամբ․ և այլն։

Որոց ծովք զանցառութ̃ե են այսոքիկ։

Ո՛չ խորհիլ զա̃յին· ո՛չ պահել զերկիւղն ա̃յ ՚ի մտի· ո՛չ սիրել զա̃ծ գերագոյն սիրով· ո՛չ գոհանալ զերախտեաց նր̃· ո՛չ ցաւ՛ել վս̃ գործեցեալ մեղացն· ո՛չ նախապատրաստիլ մինչև առ ՚ի ընդունիլ զշնորհն ա̃յ· ո՛չ աճել ՚ի գործ զառեալ շնորհն· ո՛չ դընել միտ զասացեալ աղօթիցն· զծնօղս ո՛չ պատուել· զխիղճ մտացն ո՛չ քննել· փախչիլ յեկեղեցւոյ· ՚ի քարոզութե̃· փորձութե̃ց ո՛չ ընդդիմանալ· զեդեալ ապաշխարանքն ո՛չ կատարել· կամ հեղգութ̃բ գործել· բարւոյ ընկերին ո՛չ ուրախակից լինիլ· զը̃ վիշտս նր̃ ո՛չ տրտմիլ· զմեղաւորն ո՛չ յանդիմանել սիրով· զտգետսըն ո՛չ ուսուցանել· զնեղեալսն ո՛չ մխիթարել· զկռիւն ո՛չ խաղաղել· խրատուց ո՛չ լսել· զհոգին ոչ հոգալ. զհոգն ՚ի տէրն ոչ ընկենուլ. զա՟մ գործս առ ա՟ծ ոչ վերածել. և այլն:

Յառաջադրութի՟ Խոստովանութեան:

Զկնի այսպէս բարւոք զղջման և յառաջադրութե՟, պարտիս երթալ առ քահանայն և ՚ի ծունկս անկե՟լ առաջի նր՟, ոպ՟ թէ փոխանորդ է ա՟յ. որ ՚ի կողմանէ ա՟յ զդատաստանն քո տեսեալ՝ զփոխարինականն քեզ առաջադրէ առ ՚ի գործել, և խաչակնքել զերեսս քո ասելով. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբ՟յ. և ասել Մեղայ ամենասուրբ Երրորդութե՟ն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբ՟յ. Մեղուցեալ եմ ա՟յ. Խոստովանիմ առաջի ա՟յ՝ և սրբուհւոյ ա՟ծածնին՝ և առաջի քո հայր սբ՟՝ զա՟մ մեղս զոր գործեալ եմ.

Բան

Քանզի՝ մեղայ խորհրդով բանիւ և գործով. կամայ և ակամայ. գիտութբ՟ և անգիտութբ՟՝ մեղայ այ՟ ։ Մեղայ հոգւովս և զօրուբ՟ սորա. մտօքս և շարժմամբ սորա. մարմնովս և զգայութբ՟ սորա ։ Մեղայ զօրուբ՟ հոգւոյս. խորամանկուբ՟. անզգամութբ՟. յանդըգնուբ՟ և երկչոտութբ՟. շռայլուբ՟ և ժլատութբ՟. զեղխուբ՟ և անխրաւութբ՟. չարահաւանութբ՟. յուսահատութբ՟. և թերամտուբ՟՝ մեղայ այ՟ ։ Մեղայ չար խորհրդով մտացս. նենգութբ՟. ատելութբ՟. խեթիւ. մախանօք. յաչախանօք. թուլուբ՟. պոռնկական խորհրդով. արուական. իգական. անասնական. գրաստական. գազանական. ՚ի գիշերի և ՚ի տըւընջեան երազական գիճութբ՟ և յանրջական գարշ աղտեղութբ՟՝ մեղայ այ՟ ։ Մեղայ ցանկութբ՟

մարմ

մարմնոյս հեշտութիւն․ պղերգութիւն․ յօրանջմամբ քնոյ՝ շարժութիւն մարմնոյս և զազրագործութիւն ՚ի պէս պէս ախտս․ հեշտալրութիւն լսելեացս․ արատութիւն աչացս․ ցանկութիւն սրտիս․ խդութիւն ռնգացս․ պագշոտութիւն բերանոյս․ անժուժկալութիւն․ շռայլութիւն, և արբեցութիւն՝ մեղայ Աստուծոյ։ Մեղայ չարաբանութիւն լեզուիս․ սրտախօսութիւն․ սուտ երդմամբ․ երդմնազանցութիւն․ հակառակութիւն․ վիճաբանութիւն․ բանսարկութիւն․ շոգմոգութիւն․ քսու․ դատարկաբանութիւն․ և ծաղու․ չարախօսութիւն․ հերձախօսութիւն․ և անիծաբանութիւն․ տրտնջելով․ դժգոհելով․ բամբասելով․ և հայհոյելով՝ մեղայ Աստուծոյ։ Մեղայ գողութիւն ձեռացս․ ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, և ընդ գարշս ածելով՝ մեղայ Աստուծոյ։ Մեղայ ամենայն յօտհաճոյք շինուածոյս և ամ՟ անդամոց մարմնոյս. եօթնեակ զգայարանօքս և վեցեկի շարժմամբս. վերամբարձ ոտնահարութ՟, և վայրաքարշ մեղկութ՟. յաջ և յահեակ խոտորելով. առաջնոցն մեղանչելով, և վերջնոցն չար նշաւակ գոլով՝ մեղայ այ՟: Այլև մեղայ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք: Հպարտութ՟ և մասամբք նորին: Նախանձու և մաս՟: Բարկութ՟ և մա՟: Ծուլութ՟ և մա՟: Ագահութ՟ և մա՟: Որկրամոլութ՟ և մա՟: Բղջախոհութ՟ և մասամբք նորին մեղայ այ՟: Այլև մեղայ ամ՟ պատուիրանացն այ՟. յանձնառնելեացն և հրաժարելեացն. զի ոչ զյանձնառուականսն կատարեցի և ոչ ՚ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ. ՚ի կարգս քրիստոնէութ՟ հրաւիրեցայ՝ և գործովս անար ժան գտայ. գիտելով զչարն՝ կամաւ՛ կորացայ. և՛ի բարեաց գործոց ինձէն հեռացայ. վա՛յ ինձ. վա՛յ ինձ. վա՛յ ինձ: Ո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթի՛ւ են յանցանք իմ. անասելի են անօրէնուի̃ք իմ. աններելի են ցա՛ւք իմ. և անբժշկելի են վէրք իմ, մեղայ ա̃յ:

Նա՛ յետ այսորիկ պարտիս ասել մի ըստ միոջէ զա̃մ յանցանս քո ճշմարտու̃բ. միամտու̃բ. կատարելապէս. և յոյժ խոնարհութ̃բ: Ճշմարտու̃բ. այսինքն՝ ո՛չ ա՛ւելի և ո՛չ պակաս: միամտու̃բ. այսինքն՝ ոչ պարտաւ՛որել զոք, այլ զքեզ միայն: կատարելապէս. այսինքն՝ լիապէս ասել զա̃մ մասունսն: և յոյժ խոնարհու̃բ. այսինքն՝ անարժան համարելով զքեզ քան զա̃մ մարդիկ: և զոր ինչ ապաշխարուի̃ հրամայէ քահանայն՝ յօժարութե՟ն յանձն առնուլ։ և իբրև կատարեցեր զպայմանութի՟ մեղաց քոց, ասա՛ զղջացեալ սրտիւ, կորացեալ գլխով, և հ․մեստ ձայնիւ։

Հայր ս՟բ՝ զքեզ ունիմ միջնորդ-հաշտութե՟ և բարեխօս առ միածին որդին ա՟յ․ զի իշխանութե՟դ որ տուեալ է քեզ՝ արձակեսցես զիս 'ի կապից մեղաց իմոց աղաչեմ զքեզ։

Եւ ապա տայ քահանայն զարձակումն։

Ողորմեսցի քեզ մարդասէրն ա՟ծ․ և թողութի՟ շնորհեսցէ ա՟մ յանցանաց քոց․ խոստովանեցելոցդ և մոռացելոցդ։ Եւ ես կարգաւս քահանայական իշխանութե՟ և հրամանաւն ա՟ծային թէ՝ (զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակե՟լ յերկինս։) Նովին բանիւն արձակեմ զքեզ յա՟մ մասնակցութե՟ մեղաց քոց․ 'ի խորհրդոց 'ի բանից և 'ի գործոց․ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։ Տ՛ր դարձեալ՝ տամ զքեզ 'ի խորհուրդս ս՟բ եկեղեցւոյ, զի զոր ինչ բարիս գործիցես՝ եղիցի քեզ 'ի բարեգործութ՟ի եւ 'ի փառս հանդերձեալ կենացն. Ամէն։ Տ՛ր մինչ սկսանի քահանայն արձակել զքեզ, խորհեա՛ թէ Ք՟ս եւս յերկինս արձակէ զքեզ 'ի կապանաց քոց. ըստ անսուտ վճռոյն իւրոյ թէ, զոր միանգամ կապիցէք 'ի վ՟ր երկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք 'ի յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։ Տ՛ր յետ խոստովանու՟եդ՝ Ե՛րթ վաղվաղակի դարձեալ 'ի տեղի մի առանձին, եւ մատո՛ ա՟յ գոհութ՟ի եւ շնորհակալութ՟ի, մեծա՛ւ խոնարհութ՟բ ասելով. գոհանամ զքէն բազմագութ արարիչ եւ անախակալ տ՟ր իմ եւ ա՟ծ իմ. մեծ եղեւ 'ի վ՟ր իմ ողորմութ՟ի քո, զի փրկեցեր զանձն իմ՚ի դժոխոց ներքնոց. մինչդեռ հեռի էի, տարածեցեր զձեռն քո անհուն ողորմուբ̅ քով, և ձգեցեր զիս առ քեզ. և ազատեցեր ՚ի կորստական գնացից։ ՚ի հեղգանալն իմ համբերեցեր. այժմ պատառեցեր զմուրհակ պարտուց իմոց. փառք անհուն ողորմուե̅ և գթուե̅ քո տ̅ր. զի՞նչ տաց տրիտուր անբաւ երախտեաց քոց որ առ իս. այլ ընկալ միայն զպատարագ գոհուե̅ ՚ի մեղուցեալ անձնէ իմմէ, զոր ընծայեմ քեզ պատկառեալ դիմօք. և զօրացո՛ զիս տ̅ր քով շնորհին, զի մի՛ ես մեղանչեցից այսուհետև. և մի՛ հեռացայց դարձեալ ՚ի կենդանին և՚ի ծայրագոյն լուսոյդ։ Ասա՛ և ցանձն քո. ահաւասիկ ողջացար անձն իմ, մի՛ ես այլ մեղանչեր, զի մի՛ ես կրկնեսցին քեզ չարիք. և սկսիր այսուհետեւ կատարել զապաշխարութի քո՝ մեծաւ յօժարութբ եւ սիրով։

Յաղագս տասնաբանեայ պատուիրանացն Այ գերեւելւոյ յաստուածաւանդ գրոց, որք ըստ այսմ՝ ի շինի իւրոյ ցուցանին համառօտ։

[illegible]

Ախ՝ Ես եմ Տր Ած քո. մի՛ եղիցի այլ Ած բաց յինէն։

Երկրորդ՝ մի՛ դիցես զանուն Տն Այ քոյ ՚ի վերայ սնոտեաց։

Երրորդ՝ յիշեա՛, զի սրբեսցես զօր շաբաթուն։ Չորրորդ՝ պատուեա՛ զհայր քո եւ զմայր։

Հինգերորդ՝ մի՛ սպանաներ։

Վեցերորդ՝ մի՛ շնար։

Եօթներորդ՝ մի՛ գողանար։

Ութերորդ՝ մի՛ սուտ վկայեր։

Իններորդ՝ մի՛ երդնուր սուտ յանուն Տն աստուծոյ քոյ։

Տաս

Տասներորդ՝ մի՛ ցանկար կնոջ եղբօր քո. և մի՛ ա՟մի որ ն՟ր իցէ։ Արդ՝ առաջին պատուիրանն ուսուցանէ մեզ՝ ճանաչել զա՟ծ և գիտել թէ նա՛ է ստեղծօղ մեր։ ո՟պ ասէ դաւիթ. նա՛ արար զմեզ և ո՛չ մեք էաք։ Եւ յետ ճանաչելոյն՝ սիրել զնա բոլորով սրտիւ և երկրպագանել նմա ա՟մ յօժարութ՟բ։ Եւ գիտելի՛ է՝ զի լոկ բանիւ բազում սիրեն զա՟ծ. իսկ գործովք սակաւք։ Ո՟պ ասէ ա՟ծ մարգարէին. Ժողովուրդս այս՝ շրթամբք պատուէ զիս. և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի՛ են յինէն։ Օ ի՛նչ օգուտ ասելն բանիւ, թէ սիրեմ զաստուած. մինչ արդեամբք զայլ ինչ առաւել սիրեմք քան զնա։ Ասես որպէս։ Ասեմ քեզ։ Մինչ տեսանեմք զմեզ նախատեալ յումեքէ՝ դղրդիմք յա՟մ անձնէ և ո՛չ ժուժկալեմք, և մինչ տեսանեմք զօրէնս ա՟յ արհամարհեցեալ՝ ոչ ինչ իւ̂իք տրտմեցեալ ցաւ̂իմք բնաւ̂ին։ Տեսանեմք զեղբայրն կարօտեալ հարկաւ̂որացն, և ոչ լնումք զքաղց նոցին յաւ̂ելորդաց մերոց վ՟ս սիրոյն ա՟յ։ Յայտ է ուրեմն թէ՝ զմեզ և զինչս մեր՝ առաւ̂ել սիրեմք քան զա՟ծ։ և զոր ինչ առաւ̂ել սիրեմք՝ զնա՛ պաշտող երևիմք 'ի տեղի ա՟յ։ զի սիրելն զա՟ծ՝ է՛ պահել զբանս ն՟ր։ ոպ՟ ասաց ք՟ս. որ ունի զբանս իմ և պահէ՛ զն՟ս՝ նա՛ է որ սիրէ՛ զիս։

Երկրորդ պատու̂իրանն՝ ուսուցանէ ոչ առնել կուռս դրօշեալս ըստ ա՟մ նմանութե՟. որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի. և մի՛ փոխանակ արարչին՝ արարածոյ երկիրպագանել։ Ասիցէ ոք թերևս, ընդէ՞ր ապա ձևակերպեմք զպատկերն ք՟ի և երկիրպագանեմք նմա, որ է արարած ձեռաց մերոց. կը ռապաշտութի՟ է ուրեմն։ Ասեմք առ այս թէ՝ պատկերն զոր նկարեմք՝ ոչ պաշտի ՚ի մէնջ վ՟ն ինքեան, այլ վ՟ն նախատպին իւրոյ· Սուտի երկիրպագանեմք պատկերին Ք՟ի՝ ոչ ո՟պ նիւթոյ ինչ նկարեցելոյ, այլ ո՟պ պատկերի և երևակի մարդեղութե՟ որդւոյն ա՟յ։ ուստի ոչ է կռապաշտութի՟· այլ ճշմարիտ ա՟ծ պաշտութի՟։ Բայց գիտելի՛ է, զի գրեալ է ՚ի կանոնաց եկեղեցւոյ՝ ոչ բնաւին գործել ստուերոտնակ պատկեր· այսինքն կաւեղէն, կամ փայտեղէն, կամ արծաթեղէն, և կամ այլ ինչ այսպիսի· զի մի՛ նման լինիցի կռոցն հեթանոսաց։ Այլ պա՛րտ է դեղով նկարել՝ որ լինի առանց ստուերի։ Եւ դարձեալ՝ ասելոյն մի՛ դիցես զանուն ա՟յ քոյ ՚ի վ՟ր սնոտեաց, պատուիրէ թէ՝ մի՛ փոյթ ընդ փոյթ և վայրապար

յի

յիշէր զանուն տն̃ քո ըստ ամ̃ փոքր իրի։ զի մեղանչումն է այն առ ած̃։ Ոչ զանունն տն̃՝ աւրհն́ և գովութե̃ պարտիմք առնուլ ՚ի բերան․ և վս̃ արժանաւոր պատճառաց։

Երրորդ պատուիրանն ուսուցանէ՝ զօր կիւրակէին և զայլ տէրունական տօնից՝ պատուել և մեծարել։ այսինքն դադարել ՚ի մարմնական գործոց, և պարապիլ միայն ած̃ային գործոց։ Երթալ յեկեղեցին, տեսանել զպատարագ, և առնել աղօթս և զայլ բարեգործութիւնս, և ընթեռնուլ կամ լսել զսբ̃ գիրս․ զի զօրն զայն բովանդակ տն̃ պարտիմք նուիրել։ Հարկաւորիմք մանաւանդ մտածել յաւուր կիրակէի զվեց աւուրց սխալանս մեր, և քաւել ՚ի ձեռն կատարեալ զղջման և խոստովանութե̃․ ցաւելով ՚ի վր̃

ան

անցեալ եղեռնութեանց մերոց։ եւ դնելով 'ի մտի՝ մի՛ եւս այլ մեղանչել։ Բայց զի՞նչ ասեմ զթշուառիցս անձանց. որք յամի զներհակն առնեմք պատուիրանացն Աստուծոյ։ Զի զաւուրս կիւրակէից եւ զտէրունական տօնից՝ մարմնական հեշտութեամբ եւ խելացնոր արբեցութեամբ կորուսանեմք. փոխանակ լսելոյ զբանս աստուածային գրոց, մեղանչական խօսակցութեամբ կամ անօգուտ բանից պարապիմք. Պատարկանամք 'ի մարմնական գործոց, եւ զանազան չարեօք լնանիմք։ Ո՛վ անասնային կացութեան եղկելեացս վարուց։ Զմեծամեծան մարմնական զբաղանաց՝ կիրակէի աւուրն պահեմք, զի 'ի նմա գործեսցուք՝ Զարթիցուք եղբարք, զարթիցուք 'ի մահաբեր քնոյս այսմանէ. զի օր Տեառն իբրեւ զգող հասանէ։ Նա՛ թէ ոք ասի ցէ, ա՟ծ զօրն շաբաթու պատուիրեաց սրբել և պահել. մեզ զի արդ կիրակէն հարկաւորի այժմ: Ասեմք առ այս, թէպէտ ՚ի հինն շաբաթն էր պահելի, բայց ՚ի նորս կիրակէն եղաւ մեզ յառաքելոցն մէջ, ՚ի պատուի յարութ՟են ք՟ի. զի և ք՟ս որդին ա՟յ՝ որ եղև լրումն օրինաց և մարգարէից՝ եցոյց գործովք իւրովք թէ՝ ո՛չ է պահելի այսուհետև զօրն շաբաթու: Աւ՛ թէ վ՟ն էր նախ պատուիրեաց և յետոյ եբարձ. ո՞վ կարէ քննել զխորս տ՟ն. ո՞վ կամի այնպէս առնէ: Զա՟մ ինչ իմաստու՟բ առնէ տ՟ր և գեղեցկապէս յօրինէ. բայց մեզ ո՞պն և ընդէ՛րն անգիտելի է:

Չորրորդ պատուիրանն՝ ուսուցանէ պատուել և մեծարել զծնօղսն մեր և պատկառիլ ՚ի նոցանէ: հնազանդիլ բարւոք հրամանացն և օգնել հանապազ պիտոյից նցա։ Ուստի որք ո՛չ պատուեն զծնօղս իւրեանց և ո՛չ պատկառին յերեսաց նցա՝ ծանրապէս մեղանչեն։ զի զընդդէմ առնեն պատուիրանացն այ։ Զինչ ուրեմն պատասխանի տացեն այնոքիկ, որք ո՛չ միայն ո՛չ պատուեն զծնօղս իւրեանց՝ այլ հայհոյեն ևս մեծաւ լրբութբ։ յիրաւի ածամարտք են այնպիսիքն։ Եւ գիտելի է, զի ՚ի պատուիրանս այս՝ անուամբ հօր և մօր՝ պարտիմք իմանալ ո՛չ միայն զմարմնաւոր պատճառսն ծննդեան մերոյ, այլ և զայնոսիկ՝ որք սնուցանեն զմեզ բանիւ վարդապետութբ։ Իմանին ևս մարմնական արհեստից ուսուցանօղք և ծերագոյնք ՚ի հասակս, և այլք սոյնպիսիք։ որոց պարտիմք առնել պատիւ ըստ իւրաքանչիւրոցն արժանաւորութբ։

Հին

Հինգերրորդ պատուիրանն՝ ըզգուշացուցանէ ոչ լինիլ ձեռներէց անիրաւութ՟բ ՚ի վ՟ր ընկերին սպանանել զնա․ զի մարդ ոչ ունի իշխանութ՟ի մահու և կենաց․ զի ասէ ա՟ծ, ես սպանանեմ և ես կեցուցանեմ։ ուստի գրեալ է թէ՝ որ հեղցէ զարիւն մարդոյ՝ փոխանակ ն՟ր հեղցի արիւն ն՟ր․ Պատուիրանս այս՝ ոչ միայն արգելու ՚ի մարդասպանութ՟է, այլ և ՚ի հարկանելոյ՝ ՚ի վիրաւորելոյ՝ և ՚ի կատակելոյ զընկերն․ Ո՟պ ասէ իմաստունն․ պիղծ է առաջի տ՟ն ա՟մ կատակօղ։ Եւ ք՟ս ասէ՝ որ ասէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի գեհենի․ Մեծ ինչ զգուշութ՟ի պիտոյ է մեզ աստ․ զի ասէ յօհաննէս՝ ա՟մ որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է․

Վեցերորդ պատուիրանն՝ հրամայէ ՚ի բաց կալ յա՟մ պղծութ՟է,

և յա՟մ

և յա՟մ վավաշոտ և բղջախոհներ գործու՟է։ Այսինքն հեռի կալ յայնմանէ ընդ որում չիցէ ոք պատկեալ և կապակցեալ խորհրդով եկեղեցւոյ. զի մի խորհուրդն եկեղեցւոյ ապականեսցի։ Արգելու ես զվավաշոտ և զանկարգ մտածմունս. զբղջախոհական զազիր խօսակցութ՟իս. զանամօթ և զլկտի արարողութ՟իս. և զանկարգ հայեցուածս տռփական ախտի՟. Ըստ այնմ, որ հայի ՚ի կին մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա ՚ի սրտի իւրում. Եօթներորդ պատուիրանն՝ զգուշացուցանէ և արգելու զմեզ ՚ի գողութ՟է, ՚ի յափշտակութ՟է, և յառնելոյ զինչս այլոց առանց գիտութ՟ե և հաճութ՟ե նոցին։ Արգելու ես յա՟մ խաբէութ՟է և զրկանաց՝ որք լինին ՚ի յառ և ՚ի տուր. և յա՟մ վնասուց՝ որք լինին ընդ գտեմ ընկերին։ Այսինքն՝ ոչ հատուցանել զպարտն. պահել զկորուսեալ իրն եւ ոչ տալ տ՟ն իւրում. եւ այլք այսպիսիք։ Գողութ՟ին կարէ լինել օրինաւոր երկու կերպիւ։ Նախ՝ որ լինի վ՟ն զգուշութ՟ե. ո՟պ գողանայ ոք զսուր մոլեգնելոյն, զի մի ինքեան կամ այլոց վնասեսցէ։ Երկրորդ՝ որ լինի վ՟ն հարկաւորութ՟ե. ո՟պ քաղցեալ ոք մերձ ՚ի մահ, գողանայ զհաց այլոյ. զի մի մեռանիցի ՚ի սովոյ։ զի ՚ի ժամանակի հարկաւորութ՟ե՝ ա՟մ ինչ հասարակաց է։

Ութերորդ պատուիրանն՝ ուսուցանէ ՚ի բաց լինել յա՟մ ստութ՟է. այսինքն՝ արգելու զստութ՟ին՝ որ լինի վնաս ընկերին. զստութ՟ին՝ որ լինի օգուտ ընկերին. եւ զստութ՟ին՝ որ լինի ոչ վնաս եւ ոչ օգուտ. այլ կատակ եւ ունայնախօսութ՟ի։ Արգելանի եւս աստ սուտ վկայելն.

չարախօսելն · բանբասելն · անուն ածելն · և յիշելն Թիւր դիտաւորութ՟բ զյայտնի կամ զծածուկ պակասութ՟իս ընկերին · և այլք այսպիսիք որովք վնասի ընկերին ։ Արգելանի ևս լուելն զբարեաց ընկերին՝ առանց օրինաւոր պատճառի ։

Իններրորդ պատուիրանն՝ ուսուցանէ ոչ երդնուլ սուտ յանուն տ՟ն ա՟յ ։ Բայց սորին զճշմարիտն ևս արգել Ք՟ս՝ պատուիրելով ամենևին ոչ երդնուլ · զի մի՛ կըրթութ՟բ ճշմարիտ երդմանն՝ ըզսուտն ևս արկցուք երբեմն ՚ի գործ ։ յորմէ բազում զրկանք և խարդախութ՟իք պատճառին · Նա՛ դարձեալ՝ արգել Ք՟ս զերդումն ՚ի մէնջ · զի մի՛ յուսով երդմանն անսովո՛ր լիցուք ճշմարտախօսութ՟ե · որ գերազանցէ քան զերդումն ։ Զի լոկ բան առն ճշմարտախօսի՝

առաւել լինի հաւատալի քան զերդումն ստախօս արանց։ Վ՟այ այր ճշմարտախօս՝ հազիւ բռնաբարի երդնուլ։

Տասներրորդ պատուիրանն՝ ուսուցանէ նախ՝ ոչ ցանկալ կնոջ ընկերին բղջախոհ ախտիւ․ յոր մէ ուսանիմք հրաժարիլ յամ՟ան կարգ ցանկութե՟ց։ Զի կամի ա՟ծ թէ՝ ոչ միայն գործով անբիծ լինիցիմք, այլ և ս առաւել սրտիւ․ վ՟ն որոյ արգել ՚ի մէնջ ոչ միայն զգործ մեղացն, այլ և զցանկութի՟ն որ լինի ՚ի սիրտն։ Նաև ցանկութի՟ս այս՝ ունի երիս տեսակս։ Առաջինն է միայն խորհուրդ․ որ ասի փորձութ՟ի կամ պատերազմ․ զոր արկանէ՛ սատանայ ՚ի սիրտս մեր և ոչ հաճիմք և ոչ հեշտանամք։ Երկրորդն ասի հեշտութ՟ի․ որ է հաճիլ սակաւ ինչ ընդ չար խորհուրդն և հեշտանալ ՚ի նմին։

Եր

Երրորդն ասի հաւանութի՟. որ է ո՛չ միայն հեշտանալ՝ այլ և կամիլ հաւանութե՟ բանականին գործել զնոյն։ Առաջինն ո՛չ է մեղք․ այլ՝ է պատերազմ դիւական․ որում մինչ ընդդիմանայ ոք և ո՛չ հաւանի՝ վարձս ունի ՚ի տ՟նէ և պսակ յաղթութե՟։ Իսկ երկրորդն և երրորդն են մեղք․ զի ընկալաւ զսերմանեալն ՚ի չարէն։ Արդ՝ յայտ է ուրեմն թէ ցանկութի՟ն որ լինի թարց հաւանութե՟ բանականին՝ ո՛չ է մեղք․ ապա թէ ոչ՝ ո՞վ կարէր ապրիլ․ զի այնպիսի խորհուրդ՝ անկարելի է ո՛չ լինիլ ՚ի մեզ․ ուստի ո՛չ հարկաւորիմք ՚ի բաց կալ ՚ի խորհրդոյն, այլ ՚ի հաւանութե՟ն։ զի ասելովն մի՛ ցանկար, զայն յայտնէ թէ մի՛ հաւանիր։ Երկրորդ՝ ուսուցանէ պատուիրանս այս՝ ո՛չ ակնաուել ցանկութե՟ յինչս և ՚ի ստաց ու՛ածս ընկերին ՚ի բաց հանել ՚ի նմանէ․ որ է արմատ զրկանաց, և պատճառ բազում վնասուց։

Այսքան յաղագս պատու՛իրանացն ա՟յ։

Բայց արդ՝ զկնի պատու՛իրանացն ա՟յ՝ գոն և ս պատու՛իրանք եկեղեցւոյ․ զորս պարտի պահել իւրաքանչիւր քրիստոնեայ․ Այսինքն՝ յաւ՛ուրս կիրակէից և տօնից լսել զպատարագ․ պահել ըզպահս և զծոմս հրամայեցեալս․ խոստովանիլ իսկոյն զկնի մեղանացն․ և հաղորդիլ հինգ անգամ ՚ի տարւոջն, կամ յայլ ինչ հարկա՛ւոր ժամանակի։ Ե՛ւ զայլս այսպիսիս՝ զորս եդեալ և կանոնեալ է ս՟բ եկեղեցին։

⁂

Յաղագս խրատու ճանաչելոյ զԾ̃, մասն հա-յու Թղս. Խոյողական գեղոց Նկ̃յ:

Արդ՝ պարտ է ամ̃ քրիստոնէի ճանաչել զեօթն մահացու մեղս, և խորշիլ 'ի նոցանէ. որք հրամանաւն այ̃ արգելեալք են: Բայց մարդիկք ոմանք չհնազանդելով այ̃՝ կու գործեն և կու խօսին, և կամ հաւանութ̃ կամացն կու խորհին: Ա̃ս զի մեղքն է զայ̃ հրամանաւն անցանելն. զոր օրինակ հրամայէ ած̃ զծնօղս պատուել և յորժամ զպատիւն ծնողացն անարգեն՝ կրկին մեղք է: Եւ մեղքն կու բաժանի 'ի սկզբնական և 'ի ներգործական: Սկզբնականն այն է՝ որ յադամայ կու գայ. զի այնոքիկ մարդիկք, որք ապականութ̃ կու յղանան և 'ի մեղս կու ծնանին, ադամայ մեղքն յիւրեանց վր̃ կու գայ: Եւ այս սկզբնական

Յոհ
Ա. Է.

մեղքս՝ ս̃բ մկրտուբ̃, թողութի̃ կու գտանէ։ որ թէ առանց մկրտութե̃ մեռանի՝ ՚ի խաւարն կու գնայ ն̃ր հոգին. և թէ յետ մկրտութե̃ն մեռանի, յայնժամ արքայութե̃ որդի կու լինի, ըստ վճռոյ տ̃ն. թէ որ հաւատասցէ, և մկրտեսցի, կեցցէ։ Իսկ ներգործական մեղքն այն է, որ մարդիկք իւրեանց կամօքն կու գործեն ա̃յ հրամանին անհնազանդ լինելով։ Եւ այս ներգործական մեղքերուն մէջն՝ կայ որ ներելի կասեն, և կայ որ մահու չափ. Ներելի մեղքն այն է՝ որ թէպէտ անհաճոյ է ա̃յ, սակայն ն̃ր սիրոյն չեն հակառակիր. ինչպէս դատարկաբանութի̃ն՝ որ այլոց վնաս չէ։ Եւ մահացու մեղքն այն է՝ որ ա̃յ սիրոյն և հրամանին կու հակառակի. ինչպէս՝ շնալն, և պոռնկելն, հայհոյելն, նախանձն, և այլն։

Եւ վ՟ս այն մահացու մեղք կասու՛ի, զի ով ոք որ գործէ և չը խոստովանի, իւր հոգին կու մեռուցանէ. և դժոխոց արժանի կառնէ. և ա՟յ շնորհացն կու զրկէ. յաւիտենական տանջանաց և սատանայի որդի կու լինի. և յաւիտեանս յաւիտենից 'ի հուր գեհեննին տանջի։ Եւ թէ մեղայ ասիցէ և խոստովանիցի, ապաշխարիցէ և դառնայցէ 'ի մեղաց՝ թողու՟ի գտանէ։ Եւ եթէ անզեղջ մեռանի՝ 'ի հուրն յաւիտենական տանջի։ Ո՟պ եղև մի՟ոյ մեծատան կնոջ, որ ունէր զքահանայ որդի մի. և սատանայն ընկէց զկինն զայն 'ի մեղս, որ 'ի պոռնկութ՟է ծնաւ երկու բիճ. և զերկուան ևս սպան. և վ՟ս պատկառանացն՝ ո՛չ զղջացաւ, և ո՛չ խոստովանեցաւ. զի մի՛ գուցէ հարկիքն իւր պակասիցէին. վ՟յ 'ի մէջ մահա-

պտն
ամուն
317

ցու մեղաց մեռաւ՝ և էջ 'ի դըժոխս: Այլ որդին նր՟ քահանային, առնէր աղօթս, և պատարագս. և խնդրէր յայ՟, թէ ցոյց ինձ զմայրն իմ, թէ յո՞ր դաս հրեշտակաց կարգեալ կայ. և 'ի վերջ պատարագին երևեցաւ նմա մայր իւր յոյժ ահարկու տեսլեամբ. և երկու վիշապք փաթաթեալ զնովաւ. և բերան միոյ վիշապին 'ի մի ծիծն նր՟, և միւսոյն՝ 'ի միւս ծիծն. զարմացաւ քահանայն և ասէ. ո՞վ ես դու. և նա ասէ. ես եմ մայրն քո. էհարց քահանայն. զի՞նչ եղև քեզ. ասէ մայրն. իջի յատակս դժոխոց. Ասէ քահանայն. ես գիտէի թէ 'ի դաս հրեշտակաց կարգեալ ես. զի զբազում բարեգործութիս՟ արարեր. զպահս պահեցեր. զաղօթս, և զողորմութիս՟ արարեր. Արդ զի՞ եղև պատճառ քո.

և այդոքիկ վիշապքդ զի՞նչ նշանակեն։ Ասէ մայրն. զի զծանր մեղս մահացուս՝ թագուցի վ՟ս ամօթոյ. և զա՟մ բարեգործուիս վ՟ս այն առնէի, որ հարկիքն իմ մի՛ պակասիցեն. վ՟ոյ այժմ ամենեցուն առաջի այդմ կատականաց եղէ, և խաղք յաւիտեանս յաւիտենից։ Եւ այսոքիկ երկու վիշապքս՝ բ, սատանայք են. որք ծծեն զերկու ստինս իմ անտանելի կսկծմամբ՝ փոխարէն երկու որդւոցս, զորս ծնայ և սպանի. և ոչ կերին զկաթն իմ. վ՟ս այն տանջեն զիս յաւիտեանս յաւիտենից։ Զայս ասացեալ՝ դարձաւ ՚ի դժոխս։ Ա՟յ՝ ոչ է պարտ թագուցանել զմեղս. զի որք թագուցին և ոչ խոստովանեցան, մնացին ՚ի ներքոյ մեղաց։ զոր օրինակ՝ մարդ մի վիրաւորեալ տասն վիրօք, զինն ցուցցէ բժշկին.

և նա գիտցէ զսպեղանիս և բժշկիցի· բայց զմի վէրն վ՟ ամօթոյ որ յանպատշաճ տեղիս՝ թագուցանիցէ ՚ի նմանէ, թէշէնիշ լինի, և մեռանի: կամ ո՟պ ծառ՝ զարմատն թողուլ, և զծիւղսն հատանել է· որ առա՛ւել ևս աճին և մեծանան, և արմատն ամրանայ: և կամ ո՟պ նա՛ւ որ ունենայ զեօթն ծակս ՚ի վ՟ր ծովու· զվեցն խնու, և զմինն թողու· ջուր ծովուն լնանի յայն ծակէն, և զնա՛ւն ՚ի խորս ընկղմէ: և կամ զի և մարդս ըստ ս՟բյ նարեկացւոյն՝ նա՛ւ է բարոյականապէս ՚ի վ՟ր ծովու կենցաղոյս· նա՛ւապետն է ք՟ս· որ ՚ի նա՛ւու մարմնի մերում զեղեալ հոգիսն՝ ամբողջ նա՛ւովն տանի ՚ի նա՛ւահանգիստն արքայութ՟ե: վ՟յ ո՛չ է թագուցանելի ամենևին զմի մեղս: զի որ աստ թագուցանես յամենատես աչացն ա՟յ՝ և ՚ի

մարդ

մարդկան ամօթոյ ծածկես, անդ յայտնի 'ի մեծի հրապարակի պատժոյն հանդերձ։ Առ՟ ոպ՟ նախ ադամ նախահայրն մեր, որ յետ յանցմանն մինչ էհարց ած՟՝ ո՛չ խոստովանեցա՛ւ, և ո՛չ ասաց մեղայ· այլ սակս պատժեցա՛ւ։ Երկրորդ՝ կային որ յետ սպանանելոյ զաբէլ մինչ էհարց ած՟՝ նա ո՛չ խոստովանեցա՛ւ, և ո՛չ ասաց մեղայ։ Երրորդ՝ ջրահեղձիկքն ո՛չ զղջացան և ո՛չ խոստովանեցան զյանցանս քարոզութ՟ նոյի· վ՟յ ջրոյն սատակեցան։ Չորրորդ՝ սոդոմայեցիքն ո՛չ խոստովանեցան զյանցանս խրատոյն ղովտայ· վ՟ այն հրացեալ անձրևօքն կորեան։ Հինգերորդ՝ որդիքն ահարօնի նաբաթ և աբիուդ, առանց խոստովանութ՟ե և մեղօք մինչ մտին 'ի տուն ա՟ն խունկ արկանել, հրրով այրեցին։ Վեցերորդ՝ բեթ սամիւսացիքն ․ տապանակի ը՟ն նայելով անարժանութ՟բ, անկան ՚ի ժողովրդենէ՝ արք հազար և եօթանասուն։ Եօթներրորդ՝ աքար զարմեան ո՛չ խոստովանեցաւ ըզգուշութ՟բ զմեղս իւր, մինչև յայտնեցաւ առաջի յեսուայ և քարկոծեցաւ։ Ութերրորդ՝ յուդայ սիմոնեան ո՛չ ճշմարիտ ասաց մեղայ, վասն այնորիկ ո՛չ եգիտ թողութ՟։ Իններրորդ՝ սիմոն կախարդն, և յուլիանոսն, և հերձուածօղքն ո՛չ զղջացան, և ո՛չ խոստովանեցան զյանցանս իւրեանց․ վ՟յ պատուհասեցան․ և այլ այսպիսի օրինակք թէ ՚ի հինն, և թէ ՚ի նոր ս՟բ գիրս բազումք են։ Իսկ զի հակադարձք սոցին ոյք եղեն, որք գտին զթողութ՟ մեղաց, վասն խոստովանելոյ զյանցանս իւրեանց, են այսոքիկ։ Նախ՝ ղամէք․ որ յետ սպանման

կայի

կայինի, խոստովանեցաւ ասելով սպանի զայր, և այլն. վ̃ս ոչ պատժեցաւ. Երկրորդ՝ իսրայէլ. յորժամ անկաւ ՚ի հորթապաշտութի. և յետոյ զղջացաւ, գտաւ զթողութի. Երրորդ՝ դաւիթ. խոստովանելով զյանցանս պոռնկութե և մարդասպանութե, թողութե արժանացաւ. Չորրորդ՝ մանասէ թագաւորն. խոստովանութե և ապաշխարութ̃ե, և արտասուօք գտաւ զթողութ̃ի. Հինգերրորդ՝ աքայաբ թագաւորն. յետ սպանմանն զնաբովթ քահանայն, յանդիմանեաց զնա եղիա. և նա զղջացաւ, և երկեաւ յերեսաց տ̃ն. և ոչ ետ տ̃ր ա̃ծ չար տեսանել յաւուրս ն̃ր. Վեցերրորդ՝ նինուէացիք. խոստովանելով և ապաշխարելով գտան զթողութ̃ի. Եօթներրորդ՝ կինն պոռնիկ մարիամ. ՚ի տունն սիմոնի խոստովանեցաւ ք̃սի, որ և ասաց տ̃րն՝ դուստր Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Ութերրորդ՝ աւազակն խոստովանելով ՚ի խաչին, և հաւատալով տ̃ն՝ երկնից արքայութե̃ն արժանաւորեցաւ։ Իններրորդ՝ Պետրոս առաքեալն յետ ուրացութե̃ն զղջացաւ խոստովանելով զյանցանս իւր՝ և եգիտ զթողութի̃· Տասներրորդ՝ բազում մաքսաւորք և պոռնիկք խոստովանեցան, և գտին զթողութի̃ մեղաց·

Զոհ մէք Եւ զի՞ մեղքն է անհնազանդութի̃ ա̃ծային պատուիրանացն· զի յայնժամ մեղանչեմք՝ յորժամ փախչիմք յայնմանէ, զոր կամի և հրամայէ ա̃ծ։ և գործեմք զայն՝ որ ո՛չ կամի, և ո՛չ հրամայէ· Մեղքն երկուս տեսակս ունի, ո̃պ ասացաւ ՚ի վերոյ· այսինքն՝ սկզբնական և ներգործական։ Սկզբնականն որ ՚ի նախահօրէն մերմէ սերեցաւ ՚ի մեզ․ ոպ՟ ոչ պահելով զեդեալ պատուիրանն այ՟․ վ՟յ մեղքս այս հասարակէ, զի միապէս տարածանի առ ամենեսեան․ յորմէ ազատիմք մկրտութ՟բ ս՟բյ աւազանին․ և շնորհօք ս՟բ հոգւոյն։ Իսկ ներգործականն է զոր իւրաքանչիւր ոք գործէ ըստ անձին․ ուստի մեղքս այս՝ ոչ պարտաւորէ զա՟մն հարկաւորապէս․ այլ զայն միայն՝ որ մեղանչէ։ յորմէ մաքրի զղջմամբ, խոստովանութ՟բ, և ապաշխարութ՟բ։ Արդ՝ ոպ՟ սկզբնական մեղքն միանգամ եղև որ է յանցումն ադամայ, այսպէս և մկրտութ՟ին է դեղ նորին, և միանգամ լինի, և ոչ կրկին․ Եւ ոպ՟ ներգործականն բազմիցս լինի, զի բազմիցս սխալիմք։ այսպէս և ապաշխարութ՟ին՝ որ է դեղ նորին, բազում անգամ լինիլ հաստատեցաւ ՚ի քս՟է․ և թէ ոչ իցէր՝ ո՞վ կարէր ապրիլ. զի է երկրորդ տախտակ ՚ի վ̄ր ծովու կենցաղոյս՝ յետ առաջին տախտակի մկրտութե̄ որ յանմեղութի̄:

Իսկ արմատք ներգործական մեղաց են սոքա. հեշտութի̄. հաւանութի̄ կամաց. արտաքին գործն. հանապազորդ սովորութի̄ մեղաց. գայթակղութի̄ այլոց. պատճառել զայլս և պատրուակաւ ծածկել. խրատուց ոչ անսալ: սոքա եօթնեքինս են արմատք մահացու մեղաց. որք են գործք աղտեղիք ընդդէմ խղճի մտաց: որք չարչարեն զմարդն հանապազ: Ներգործական մեղքն լինի գ. մահացու, ներելի, փոշետեսակ: մահացունէ՝ որ լինի հակառակ ա̄յ. և գործի կատարեալ հաւանու̄բ: Ներելինէ՝ որ ոչ յոյժ հակառակ լինի ա̄յ. և գործի ոչ կատարե̄լ հաւանու̄բ: իսկ փոշետեսակն է՝ զոր ոչ կարիցեմք ճանաչել թէ մեղանչեցաք։ Նաև այն՝ զոր յետ գործելոյն մոռանամք, և չկարեմք բերել ՚ի միտ և խոստովանիլ։

Գլխաւոր սկզբունք մեղաց են եօթն. այսինքն՝ հպարտութ՟ի. նախանձ. բարկութ՟ի. ծուլութ՟ի. ագահութ՟ի. որկրամոլութ՟ի. և բղջախոհութ՟ի։ որք են աղբիւրք մեղաց. և կոչին մահացուք. զի մահացուցանեն զհոգին, և սպանանեն։

Մ՟րդ՝ հպարտութ՟ինէ կամիլ և ըղձալ՝ առ ՚ի լինիլ մեծ քան զա՟մ ոք. և ոչ հաւանիլ ումեք. և ոչ կամիլ ունել զոք ՚ի վեր ք՟ն զ՟ինքն. կամ հաւասար ինքեան. և ծնանի ՚ի գործոց բարեաց. և երբեմ՟ ՚ի թիւր կամաց։ և աստիճանքն են երկոտ՟սն. այսինքն՝ հետաքրքրութ՟ի. թեթևամտութ՟ի. ընդունայն ուրախութ՟ի. պարծումն անձին. ամբարհաւաճութ՟ի. յանդգնութ՟ի. ջատագովու̃ի մեղաց. կեղծաւորեալ խոստովանու̃ի. ապստամբութի. ազատու̃ի. և սովորու̃ի 'ի մեղանչելն. առանձնականութ̃ի: Նախանձն է՝ տրտմիլ և ցաւել 'ի վ̃ր բարեաց ընկերին. և զբարին եղբօրն՝ պակասու̃ի համարիլ ինքե̃ն: Բարկու̃ին է՝ անկարգ շարժումն ցասմամբ ընդդէմ ընկերին, կամելով պատժել զնա: Ծուլու̃ին է՝ անհոգու̃ի բարի գործոց. այսինքն՝ ծանրանալ առ գործս առաքինականս: Ագահու̃ին է՝ անկարգ ցանկու̃ի ա̃մ իրաց. այսինքն՝ ոչ բաւական համարիլ ինքեան զոր ունի. այլ կամիլ հանապազ իւրացուցանել ինքեան զինչս ընկերին. և առաւել հոգալ վասն մարմնական ընչից, քան վ̃ս արքայութե̃ երկնից: Որկրամոլու̃ին է՝ անկարգապէս ուտել և ըմպել. այսինքն՝ ոչ ունիլ զսահման բնու

թե̃.

թ՟ե. այլ յա՟մ կերակրոց լնուլ կամիլ զլայնաբաց կոկորդն: Ողջախոհու՟թն է՝ անկարգ ներգործութ՟ն սրտին և մարմնոյն՝ ախտաբորբոք հեշտութ՟ե: Որդ՝ հպարտն, զի կամի լինել մեծ քան զա՟մ ոք. և յորժամ տեսանէ զոք հաւ՛ասար ինքեան՝ ցաւ՛ի և մորմոքի 'ի սրտի իւրում. յորմէ ծնանի նախանձն: Ո՛ր նախանձոտին՝ զի դիւրաւ՛ նեղասրտի այնմ, ընդ որում նախանձի. և ծնանի 'ի նըմանէ բարկու՟ի: Ո՛ր բարկացողն՝ վ՟ս ո՛չ կարելոյ առնուլ զվրէժն՝ տրտմի և լքանի. և ծնանի 'ի նմանէ ծուլութ՟ի: Ո՛ր ծոյլն՝ զի խնդրէ հնարել մխիթարութ՟ի տրտմութե՟ն. և ծնանի անտի ագահու՟թին: Ո՛ր ագահն՝ յղփանալով երկրաւ՛որ գոյիւք, պարարի որկրամոլութե՟: Ո՛ր որկրամոլն՝ պարարելով զորովայնն, բորբոքի բղջախոհութ՟ի։ Եւ այսպէս բողբոջին ՚ի միմեանց եօթնեքին արմատքս ամ՟ չարութ՟ց. վ՟ս այնորիկ ՚ի նոյն կարգ շարադրեցեալք են։ Արդ՝ եօթնեքինս այսոքիկ ասին արմատք և սկզբունք մեղաց. զի համայն մեղքն ՚ի սոցանէ արտաբղխին. վ՟ս զի ծնօղք են այսոքիկ ամենից մեղաց։ Որ օրինակ՝ ծնանին ՚ի հպարտութ՟է՝ ինքնահաճութ՟ի. փառասիրութ՟ի. անհնազանդութ՟ի. և այլք բազումք նմանք սոցին. ՚ի նախանձու՝ ծնանին բամբասանք. ատելութ՟ի. տրտմութ՟ի վ՟ս բարւոյ ընկերին. և այլք նմանք. ՚ի բարկութ՟է՝ ծնանին փքացմունք. կռիւք. հայհոյանք. և այլք. ՚ի ծուլութ՟էն՝ ծնանի տրտմութ՟ի. թմրութ՟ի. յուսահատութ՟ի. և այլքն. յագահութ՟էն՝ ստութ՟ի. գողութ՟ի. զրկողութ՟ի. և այլք. յորկրամոլութ՟էն՝

ան

անյագութ՟ի· արբեցութ՟ի· անպատշաճ ուրախութ՟ի· և այլ՟ն։ և ոչ թէ այսքան միայն են ծնունդք սոցա, այլ բազումք և զանազանք· յորոց փրկեսցէ տ՟ր ա՟ծ մեր զա՟մ հաւատացեալս անուան իւրոյ ամէն։

Իս՟ արդ՝ դեղ հպարտութ՟ենն է՝ խոնարհութ՟ին· անարժան համարիլ զինքն ա՟մ բարեաց· և զերկիւղն ա՟յ ունիլ միշտ ՚ի մտի և պահել զօրէնս ն՟ր։ դեղ նախանձուն է՝ եղբայրսիրութ՟ի· բարի կամիլ և տրտմակից լինիլ ընկերին։ դեղ բարկութ՟ենն է՝ հեզութ՟ի· համբերութ՟ի· և նկատել զմերձն իւրին՝ թէ անտի զինչ ծնանի։ դեղ ծուլութ՟ենն է՝ արիութ՟ի· ջերմեռանդութ՟ի· և ունիլ յոյս առ ա՟ծ։ Դեղ ագահութ՟ենն է՝ հիւրասիրութ՟ի· ողորմածութ՟ի· և խոկալ միշտ զմահն։ Դեղ որկրամոլութ՟ենն է՝ ժուժկալութ՟ի· պահեցողութ՟ի, և զարկեշտութբ ուտել և ըմպել։ Դեղ բղջախոհութենն՝ ողջախոհութի, ժուժկալութի, և ատել զհեշտութի մարմնոյ։ Եւ որդ՝ գիտելիէ, հպարտութին համեմատի առիւծու. Նախանձն շան. բարկութին գայլոյ. ծուլութին իշու. ագահութին ագռաւոյ. որկրամոլութին արջոյ. բղջախոհութին խոզի։ Իսկ մարդս բանական գոլով՝ պարտի հեռանալ ՚ի նմանութէ անբանից. և մնալ միշտ պատկեր այ. Եւ զի գիտելի է եւս. զի ով ՚ի զենուլ ոչխարին, եօթն իր ՚ի բաց ընկենուն ՚ի նմանէ. և այպս լինի ուտելի։ Այսպէս և մեք, եթէ ոչ ընկենումք ՚ի մէնջ զեօթն մոլութիս մեղաց, ոչ կարեմք լինիլ հաճոյ այ. որք են այսոքիկ։ 1 Եղջիւրն՝ որ է հպարտութին։ 2, լեղին՝ որ է նախանձն։ 3, արիւնն՝ որ է բարկութին։ 4, կրծղակն՝ որ է ծուլութիւն։ 5, ոսկին՝ որ է ագահութիւն։ 6, պատառն՝ որ է որկրամոլութիւն։ 7, մորթն՝ որ է բղջախոհութիւն։ Դարձեալ մեղքն որք լինին ընդդէմ հոգւոյն սրբոյ՝ են այսոքիկ։ Ինքնահաճութիւն, կամապաշտութիւն, ընդդիմանալ ճշմարտութեան, նախանձիլ ընդդէմ շնորհաց ընկերին, անզղջութիւն ՚ի մեղաց, և յուսահատութիւն յաւիտենական կենաց։ Ո՞ր ասին ընդդէմ հոգւոյն սրբոյ, զի զպարգև հոգւոյն սրբոյ ընդունայն համարին։ Ո՞ր են մեղք որք միշտ բողոքեն առ աստուած։ Ո՞ր են այսոքիկ։ կամաւորութեամբ սպանանել զանմեղն։ սոդոմայական մեղքն՝ որ է արուամոլութիւն։ զրկանքն աղքատաց։ հատանելն զվարձս մշակաց։ Ո՞ր են չորք՝ որք յետս քարշեն զմարդն ՚ի մեղաց։ այսինքն, մահն, ահեղ դատաստանն, անվախճան հուրըն գեհենին, և վայելչութ՟ն յաւիտենական կենաց։

Յաղագս հարցանելեաց իւրոց. վասն եօթանց մահացու մեղաց, և այլոց. որպս հանեալք ՚ի գրոց սրբոց։

Հարցանել արժանէ հպարտին. Թէ արդեօք փքացաւ ՚ի միտս ընդդէմ այ՟. և կամ խստեաց ընդդէմ այ՟ ըղ պատուիրանս նր՟. և թէ խոնարհութ՟բ ոչ հնազանդեցաւ այնոցիկ օրինացն՝ որոց պարտականէր հնազանդիլ, որպ՟ ծնողաց, ուսաշնորդաց, և մարմնաւոր տէրանց։ եթէ ուսանելըն զգիտութի՟ եբեր ինքեան զհպարտութի՟։ եթէ ՚ի մէջ ընկերաց իւրոց՝ եցոյց զինքն ձառադէմ. և տրտմեցոյց զն՟ս։ եթէ աւելորդ զարդս ունէր ՚ի հանդերձս վս՟ փառաց։ եթէ անարգեցոյց զինքն կեղծաւորութ՟բ։

եթէ յանդգնեցայ առնել ինչ քան զկարն իւր։ եթէ երևեցոյց զինքն առաքինի վասն հպարտութեան։ եթէ պարծեցայ վասն փառասիրութեան։ եթէ կամեցայ առնուլ զպատիւ. կամ 'ի պատուիլն հեշտացայ արժանաւոր զինքն կարծելով։ եթէ մեծաբանեցի։ և այլք այսպիսիք։

Հարցանել արժան է նախանձոտին. եթէ տրտմեցայ ընդ յաջողումն այլոց։ և ուրախացայ ընդ անյաջողութեան ումեք. 'ի յետս ուրուք կամեցայ լարել զորոգայթս։ զանուն ուրուք աւերեցի. զօգուտն ուրուք խափանեցի։ և այլք։ Հարցանել արժան է բարկացողին. եթէ ցանկացայ երբէք վրէժխնդրութեան առանց պահպանութեան փառաց Աստուծոյ։ եթէ գանեցի զոք, և վնասեցի նմա, և անուանն նորա. մանաւանդ՝ յորոյ վերայ ոչ ունէր իշխանութի̃. ոպ̃ս հայր ՚ի վ̃ր որդւոյ, որ ունի իշխանութի̃ վ̃ս ուղղելոյ զնա։ եթէ խոցեա՞ց զոք, կամ սպա՞ն, և կամ կամեցա՞ւ տանել զայսպիսիս։ եթէ տուա՞ց բան նախատանաց, կամ յիշեցո՞յց զմեղս, կամ զպակասութի̃ ուրուք։ եթէ անիծեա՞ց զոք, և կամեցաւ չար ինչ գալ ՚ի վ̃ր նր̃։ եթէ անիծեա՞ց զանբան ստեղծուածս։ եթէ խօսեցա՞ւ հայհոյութի̃ առ ա̃ծ ասելով՝ ընդէ՞ր ոչ բառնայ զայս ինչ. կամ ընդէ՞ր տուեալ է զայն ինչ և այլք այսպիսիք։ Հարցանելի է ծուլոյն. եթէ հեղգացա՞ւ ուսանիլ զհայր մերն, և զհաւատամքն, և զԺ̃, պատուիրանսն, և զանկանելին. որ եթէ ոչ գիտիցէ՝ ուսցի։ Դարձեալ՝ եթէ ոչ եկն յեկեղեցի. մանաւանդ յաւուրս կիւրակէից, և տօնից. և կամ ո՞չ աղօթեաց յոր ժամ պա՛րտ էր, և կարօղ էր աղօթել։ եթէ ո՛չ գնաց ՚ի տես հիւանդին, կամ ՚ի թաղումն աղքատ մեռելոյն։ եթէ ո՛չ ուսոյց զտգէտն։ եթէ ո՛չ խրատեաց զերկմիտսն։ եթէ ո՛չ մխիթարեաց զտրտմեալս։ եթէ ո՛չ ուղղեաց զմեղուցեալն. յորժամ յուսայր թէ ուղղելովն նր̃ դառնայր ՚ի լա՛ւն. եթէ ծուլացաւ ուսուցանել ամենից իւրոց, և զաւակաց [illegible] հաւատոյ, և զմիւս հարկաւորս քրիստոնէութեան։ եթէ ծուլացաւ խոստովանիլ. և յապաղ խորեցն ծուլութեամբ արար զայն. և զայլս այսպիսիս.

Հարցանել արժան է ագահին. եթէ էառ յումեքէ զինչ ընդդէմ կամաց նր̃ յափշտակելով։ եթէ գողացաւ. եթէ ՚ի պատերազմի յափշտակեաց զինչս, կամ զկերակուրս աղքատաց. եթէ խորտակեա՟ց զդրունս ոմանց և օթեցաւ անդ ։ եթէ յափշտակեա՟ց զպտուղս անդաստանաց այլոց ։ եթէ զգտեալ իրն ո՟չ դարձոյց ՚ի տէրն ։ եթէ զպէտս աղքատաց ո՟չ էլից ըստ կարողութե՟ն իւրում ։ եթէ խաղա՟ց զխաղ ինչ վ՟ս ագահութե՟ն ։ և կամ ե՟տ փոխ խաղացողաց ։ եթէ էա՟ռ աւելի վարձ՟ քան զաշխատանս իւր ։ եթէ էա՟ռ ինչ յուստեքէ խաբէու՟բ ։ եթէ էա՟ռ վաշխ ՚ի չքաւորէ, կամ կաշառ սակս պիտոյից իւրոց ։ եթէ գնեա՟ց իր ինչ՝ զի միայն ՚ի յինքն գտանիցի, և ինքն թանկագին վաճառեսցէ ։ եթէ վաճառեա՟ց իր աւելի քան զգինն ։ եթէ գնեա՟ց զիր ինչ և խաբէութ՟բ ե՟տ պակաս զգինն ։ կամ փո՟խան արծաթոյ ե՟տ կլայեկ ։ եթէ վաճառեա՟ց զարատաւորն ՚ի տեղի անարատի ։ եթէ զղալպ դրամն

ետ

ե̑տ 'ի տեղի լուսոյ։ եթէ 'ի բերելն կամ 'ի տանիլն ապրանաց իւրոց 'ի քաղաքէ 'ի քաղաք, զհարկն կամ զմաքսն խարդախեա̑ց։ եթէ յապաղեցո̑յց զվարձն վարձկանին. և զդրամն փոխատուին. մինչ ունէր կարողութի տալոյ։ եթէ յապաղեա̑ց տալոյ զպարտս ծնողացն իւրոց, կամ որոց եղև ժառանգ։ եթէ արգելեա̑ց զինչս հօրն՝ կամ այնորիկ որոյ եղև ժառանգ. եթէ էա̑ռ 'ի վաշխառուաց, և 'ի յափշտակողաց կաշառս վ̄ ջատագովելոյ զն̄ս։ եթէ դատա̑ւ իր օտարի յայնմ՝ որոյ եղև ժառանգ, կամ 'ի ծնօղս իւր. և զկնի նընջմանն նց̄ ո̑չ ետ 'ի կատարն ըս̄ խոստմանն։ եթէ զընծայս և զտասանորդըս եկղ̄ցւոյ և աթոռոյ ո̑չ ետ։ եթէ կամեցա̑ւ գողանալ։ և այլն.

Հարցանել արժանէ որկրամոլին. եթէ եկե̑ր յանպատշաճաւոր ժա մանակ, եթէ աւելի քան զբաւականն իւր էկեր։ եթէ արար ըզ խորտիկս բազում ծախիւք։ եթէ յոյժ ցանկութե՟ էկեր։ եթէ արբեցաւ կամաւ։ եթէ այնքան էկեր և էարբ՝ մինչ զի փսխեաց․ եթէ էրոյծ զպահս՝ առանց հարկաւոր պատճառի․ եթէ յաւուրս պահոց յառաջ քան զժամ ճաշոյն էկեր ինչ, կամ ըմպեաց գինի առանց հարկաւոր պատճառի։ եթէ էկեր յաւուրս պահոց ըզ կերակուրս արգելեալս։

Հարցանելի է բղջախոհին․ եթէ պոռնկեցաւ իցէ ընդ ամուսնացելոյ․ կամ ընդ աղախին․ և ընդ կուսի։ եթէ ընդ ազգականի և ընդ խնամոյ։ եթէ ընդ քերց և կամ ընդ այնոցիկ զորս նախ ճանաչեալ է ազգական իւր․ և կամ թէ ընդ հաւատաւորի։ Պարծեալ՝ եթէ մեղաւ ընդ այնմ՝

որ ուխտեալ էր զողջախոհութի՟ւ։ եթէ բանադրատեաց զկին, կամ զդուստր ուրուք։ Պարձէ՟լ՝ եթէ յորդորեաց զոք, կամ սովորեցոյց զայնոսիկ որք ոչ էին նախ արարեալ։ Պարձեալ՝ եթէ զայս պիսի մեղս յորպիսի աւուրս իցէ արարեալ. յաւուրս տօնից, եթէ յաւուրս պահոց. եթէ յաւուրս քառասնորդաց. և կամ ՚ի ս՟բ տեղիս. եթէ յաղօթարանս. զի յայն ժամ կարօտանան տեղիքն այն՝ պղծեալ տաճարի կարդալոյ։ եթէ ընդ դաշտանի կնոջ. և կամ ընդ կնոջ իւրոյ ՚ի դաշտանի ժամանակի. որ ևս է ընդդէմ հրամանին ա՟յ։ եթէ ՚ի ստիպմանէ կնոջն՝ թէ յինքենէ։ եթէ բղջախոհութ՟է գրգռիչ ինչ դեղ կազմեաց. եթէ չար մտօք շօշափեաց զկանայս. կամ զբանս աղտեղիս խօսեցաւ. եթէ չար ակամբ հայե ցաւ 'ի կինն։ Դարձեալ՝ զգուշութ՟ք հարցանել արժանէ՝ զի մի՛ ուսցի մինչ ոչ գիտէ. վ՟ս ընդդէմ բնու՟ե մեղացն, և սոդոմայականին. իբր թէ անպատշաճ կերպիւ իցէ միաւորեցեալ. որ եթէ իցէ՝ զկինն ևս յանդիմանելի է։ Դարձեալ՝ եթէ իցէ երազախոր ճու՟ի. եթէ յարթնու՟ե, և եթէ 'ի քուն. որ եթէ թագուցանիցէ նա, և դու նշանաւ իւիք և կերպիւ մի եթէ իմասցիս՝ յայնժամ սաստ նմա. եթէ այժմ վասն ամօթոյ թագուցես, 'ի յահեղ ատենին աւելի ամօթ կրես։ իսկ եթէ ասիցէ այո՛, յայնժամ հարցանել արժանէ. եթէ յուտելոյն և յըմպելոյնէ. եթէ 'ի սատանայական փորձունէ. եթէ աւերածոյ արեան. եթէ 'ի թուլու՟է և 'ի տկարու՟է բնու՟են. եթէ 'ի խոկացմանէն յարթնու՟են. որ 'ի զարթնու՟ն եթէ հեշտացաւ, է՛ մեղք մահացու։ Դարձեալ՝ եթէ ծնաւ ըղբիձ զաւակ, և ո՛չ սնոյց զնա.

Կամ ետ սպանանել.

Հարցանել արժանէ եպիսկոպոսին. և կամ առաջնորդին. եթէ ձեռնադրեաց զոք սիմոնականութբ։ եթէ անհամեստաբար կենցաղավարեցաւ ՚ի կեանս իւր. ՚ի վարս, ՚ի կերակուրս, ՚ի յըմպելիս, և ՚ի հանդերձս։ եթէ ո՛չ եղև հիւրընկալ։ կամ ո՛չ ետ զողորմութի աղքատաց, ըստ չափու գոյից իւրոց։ եթէ յընչից իւրոց ետ ազգականաց իւրոց ՚ի փարթամացուցանել զնսա։ եթէ ծախեաց զինչս եկեղեցւոյ ՚ի յաւելորդ իրս և ՚ի փառս աշխարհի։ եթէ ետ սպանանել։ և կամ եղև պատճառ սպանման։ եթէ գանեաց զոք ձեռօք։ եթէ չարդելեաց զբամբասօղս և զքսուս։ եթէ ո՛չ բարուոք կարգաւորութեանց զեկեղեցականս ։ եթէ ոչ ետ զկարգ եկեղեցականաց 'ի ժամանակին, զոր սահմանեալ է եկեղեցին։ եթէ ոչ քննեաց նախ քան զձեռնադրելն զկարգ առօղսն։ եթէ 'ի տալն զկարգ՝ զոր ինչ պարտ էր առնել հեղգութեամբ զանց արար։ եթէ զբազում կարգ միանգամայն ետ։ եթէ զօտար ոք առանց հաճութեան մեծաւորի նորա ձեռնադրեաց։ եթէ մահու չափ մեղօք արժանի ձեռնադրութիւն, կամ մատոյց պատարագ. և կամ զայլ գործ եպիսկոպոսական։ եթէ գիտութեամբ ձեռնադրեաց զանարժան ոք. և կամ ետ նմա եկեղեցական թօշակ և պատիւ։ եթէ զթօշակ և զպատիւ, և զայլ գործաւորութիւնս եկեղեցական ոչ ետ լաւագոյն անձանց ըստ իւրում խղճմտանաց։ եթէ ամայացեալ եկեղեցեաց ոչ տարաւ հոգ չինելոյ։ եթէ եմ թօշակ այնմ, որ ունէր զայլ եւս թօշակ։ եթէ զօտար եկեղեցական ընկալաւ եւ թոյլ եմ սպասաւորել առանց վկայական թղթոյ եպիսկոպոսի նր։ եթէ ոչ շրջեալ այցարար վիճակին իւրոյ։ եթէ ոչ ուղղեաց զչարսն։ եթէ արար սիմոնականութի բաշխում կամ սակաւ։ եթէ վիրաւորեաց զեկեղեցականս․ կամ տրտմեցոյց ոչ ըստ իրաւանց․ եթէ բանադրեաց զոք․ կամ արգելեաց ոչ ուղիղ նախանձախնդրութ․ եթէ կացոյց գործակալս, կամ դատաւորս զայնոսիկ, որք ոչ երկնչէին յայ։ եթէ ոչ որոշեաց զհերետիկոսս, եւ ոչ ընդդէմ եկաց այնոցիկ ոք զհօվիւ քաջ։ եթէ խոյս ետ ՚ի հօտէն իւրմէ ՚ի ժամանակս նեղութե, առանց բաւական պատճառի։ եթէ թոյլ եմ խաբեբայ և քուրձիկ մարդկանց խաբել զմարդիկ և առնուլ արծաթ. և էառ ՚ի նոցանէ ինչ։ եթէ թոյլ ետ երկկանամբեաց ունիլ զեկեղեցական ազատութի. և կամ զսափիլ ուսմն հերաց։ եթէ թոյլ ետ չար սովորութե մնալ ՚ի վիճակին իւրում. եթէ զգայթակղեցուցիչս ո՛չ զգուշացոյց երիցս անգամ։ եթէ յետ զգուշացուցանելոյն մինչ ո՛չ լուեան խրատու՝ ո՛չ զրկեաց զնս յեկեղեցական ազատուէ։ եթէ ձեռնամուխ եղև յիրս՝ որք վերաբերին առ մեծ հայրապետն։ եթէ արձակեաց զբանադրեալս ՚ի փոքրագունեն քան զինքն առանց հարկաւոր պատճառի. և առանց դատաստանական կարգին։ եթէ ո՛չ աղօթեաց հաւատարմապէս վն ինքեան յանձնեցեալ ժողովրդեանն։ եթէ ո՛չ պարապեցաւ ընթերցման և քարոզուեց։ եթէ չար օրինակ տալով գայթակղեցոյց զհնազանդեալս իւր։ Ն՞ գիտելի է՝ զի եպիսկոպոսք և առաջնորդք, պարտին ընտրել ինքեանց խոհեմ և իմաստուն քահանայ խոստովանահայր. այսքան առ այս։

Վրդպ՟տց և ուսուցչաց։

Հարցանել արժան է. եթէ յանձն էառ զայնպիսի գործն՝ յորում ոչ էր բաւական։ եթէ էառ թոշակ ինչ այնու դաշամբ, զի ուսուսցէ զաշակերտս։ եթէ պահանջեաց ինչ, և կամ խոստացաւ տալ վ՟ս ունելոյ հրաման ուսուցանելոյ։ եթէ ոչ ետ հրաման ուսուցանելոյ այնմ՝ որ կարօղն էր ուսուցանել. եթէ զարգելեալ գիտու՟խս ուսաւ. կամ ուսոյց. եթէ հ՛ զգացաւ ուսուցանել զաշակերտսն. և կամ ամենեւին եթող զնս՟, և կամ ոչ ուսոյց նց՟ զբարի վարս։ եթէ առեալ է առ՟ զվարձն քան զարժանն։ եթէ պահանջեաց զինչ յաղագս աշակերտաց։

ԵԿԵՂԵՑԿ՟ՆՈՑ, և ԺՈՂՈՎՐԴՈՑ։ արդարև արժան է նց՟․ թէ սիմոնականութե՟ եկաւ ընդ կարգն և զթօշակն, որ արգելեալ է․ յորմէ պարտի հրաժարիլ։ եթէ ունի այնպիսի սպասաւոր, որ տայ զչար կարծիս այլոց։ եթէ եղև անհամեստ ի վարս, ի կերակուրս և յըմպելիս, և ի հանդերձս։ եթէ արար վաճառականութ՟․ և կամ յաճախեաց ի գինետունս․ կամ խաղաց նարտ․ եթէ ձեռնադրեցաւ մահու չափ մեղօք։ եթէ սպասաւորեաց խորհրդոյ եկեղեցւոյ՝ յորժամ էր բանադրեալ և կամ ընկեցեալ։ եթէ ոչ ասաց աւուրն սահմա նեալ զա̃մ աղօթման։ եթէ եղև անհնազանդ իւրոյ վերակացուացն։ եթէ կեղծաւորութբ̅ և ստութբ̅ էառ զթոշակ ինչ։ եթէ յապաղեաց առնուլ զկարգն զայն՝ զոր թոշակն իւր խնդրէր։ եթէ էառ համանգամայն բազում թոշակս առանց հրամանի՝ և առանց հարկաւոր պատճառի։ եթէ եթող զեկեղեցին իւր և գնաց յայլ ուրեք։ եթէ վաճառեաց զինչս եկեղեցւոյն, և ոչ ետ աղքատաց· զի այնպիսին պա՛րտ է անդրէն դարձուցանել։ եթէ հոգ տարաւ՝ զի տացի թոշակ ազգականին իւրոյ· և այն ոչ բարի դիտաւորութբ̅։ եթէ յարո՛յց աղմուկ ՚ի ժողովրդեանն ընդդէմ ումեք։ եթէ ետ արգել ումեք՝ ոչ ելանել ՚ի պատիւն այն՝ որ ըստ իրաւանց պա՛րտ էր ելանել· զի յայնժամ պարտականէ առնել զհատուցումն ըստ կարողութեան իւրում. և այլք նոյնպիսիք ։

Ժողովրդապետաց քահանայից, և նոցին փոխանորդաց, և այլոց՝ որք լինեն սիմոնականութիւն ։

Հարցանել արժան է. եթէ մատո՞յց պատարագ վասն արծաթոյ. կամ երգեա՞ց եղանակաւ վ͞ն փառաց մարդկան ։ եթէ մատո՞յց պատարագ ապականեալ հացիւ և գինեաւ ։ եթէ մատո՞յց պատարագ յարգելեալ տեղիս ։ եթէ սպասաւորեա՞ց մահացու մեղօք ՚ի հարկաւոր ժամանակս առանց խոստովանութ͞ե. և կամ մինչ ո՛չ գտաւ խոստովանահայր՝ զղջացա՞ւ գոնէ ՚ի սրտի իւրում, որում պա՛րտ էր զղջալ ։ եթէ մատո՞յց երկու պատարագ ՚ի միում աւուր ։ եթէ կորո՞յս զմարմինն ք͞ի. և կամ անկա՞ւ յերկիր. և կամ հեղգացեալ եմ՝ յայնպիսի տեղի, յորում կարէին մերձենալ ՚ի նա մկունք և ճանճք, և կամ այլ սողունք։ Եթէ ընկէ՞ց կաթ ինչ յարենէն քսի՟։ Եթէ յաւուրն յորում մատոյց պատարագ՝ փախեա՞ց վս՟ աղբենալոյն․ և կամ վս՟ աւելի ուտելոյն և ըմպելոյն։ Եթէ ՚ի նոյն աւուր պատարագ մատուցեալ սեղանոյն վր՟՝ վերստին մատո՞յց պատարագ։ Եթէ ո՞չ աղօթեաց վս՟ կենդանեաց և մեռելոց․ ոպ՟ պարտէր։ Եթէ ՚ի խոստովանց՟ուցանելն՝ չար խորհուրդ ինչ էա՞նց ՚ի մտաց իւրոց։ Եթէ զպահս եկեղեցականս ո՞չ պահեաց․ և այնու գայթակղեցո՞յց զոմանս։ Եթէ առանց օրհնելոյ էկե՞ր կերակուր․ և կամ յետ ուտելոյն ո՞չ գոհացաւ։ Եթէ հեղգացաւ ՚ի խրատել և ՚ի քարոզելն․ և կամ ՚ի լսելն զխոստ՟վանութի և ս ըշտապե՞աց։

պեաց։ կամ ոչ ետ բարի խրատ. և կամ ոչ արար ընտրութ՟ի ՚ի մէջ մեղաց. և կամ ոչ ընթերցաւ զկանոնս եկեղեցւոյ։ և կամ ոչ խընդրեաց ՚ի հմտագունից։ եթէ հեղգացաւ և ոչ ետ ՚ի դէպ ժամու զխորհուրդ եկեղեցւոյ։ եթէ ոչ գնաց ՚ի տես հիւանդաց։ եթէ անզգուշաբար խօսեցաւ զայնցանէ յորոց լսէր զխոստովանութ՟ին։ եթէ թոյլ ետ օտար քահանայի լսել զխոստովանութ՟ի ժողովրդեանն իւրոյ՝ առանց վկայական թղթոյ եպիսկոպոսի ն՟ր, կամ հայրապետին։ եթէ ետ զմարմինն ք՟սի յայտնի անզեղջ մեղաւորի։ կամ որոյ գիտէր զմեղս ինչ. ՚ի ծածուկ խոստովանութ՟ե, և ոչ ետ զմարմինն ք՟սի յորժամ խնդրեաց յայտնապէս։ եթէ ՚ի դնել ապաշխարութ՟ե հեղգացաւ, և կամ անխոհեմաբար եդ. եթէ մ՟ն անա ռակ և յայտնի մեղացն՝ զանց արար դնել յայտնի ապաշխարութի, առանց հարկաւոր պատճառի. և կամ զայն՝ զոր պարտէր յայտնի ապաշխարել, ո՛չ առաքեաց առ եպիսկոպոսն։ եթէ պահանջեա՛ց ինչ վն̅ մկրտութե̅. կամ թաղման ննջեցելոյ. և կամ այլ աղօթից. և սպասաւորութե̅ ննջեցելոց։ եթէ բանադրեա՛ց զոք առանց դատաստանական կարգին։ եթէ թոյլ ե՛տ դայեակ կանանց սնուցանել զորդիս հրէից։ եթէ թոյլ ե՛տ դիւթաց և վիճակ ընկեցաց ՚ի մէջ ժողովրդեան իւրոյ։ եթէ հայթհայթեա՛ց սուտ ինչ առ ՚ի խաբել զժողովուրդ իւր։ եթէ թոյլ ե՛տ շրջագայից խաբեբայից և խօսել զբանս սուտս յեկեղեցին իւր։ և կամ ե՛տ դաշն ընդ նա̅, զի տացեն նմա մասն ՚ի յընչիցն զոր ժողովեն։ եթէ թոյլ ե՛տ անհամեստ խաղուց. և գնելոյ և վաճառելոյ. և վիճելոյ ՚ի յեկեղեցիս և ՚ի գերեզմանս։ եթէ ետ՟ պատուել զնշխարս ոսկերաց որք ոչ էին արժանիք պատուելոյ. եթէ պահանջեաց նուէր ինչ ժողովրդենէն, զոր ոչ էր պարտ. և կամ ՚ի խոստովանութիւն եդ ապաշխարութ՟ տալ այնպիսի նուէրք՝ մ՟յ կարէին գայթակղել։ եթէ դիւրաւ ետ՟ հրաման ժողովրդեանն առանց հարկաւոր պատճառի մ՟ս լուծման պահոց, և վասն առնելոյ գործ յաւուրս կիւրակէից և տօնից. և այլք.

Արքունաւորաց.

Հարցանել արժան է. եթէ հպարտացաւ երբէք վասն առաջնորդութ՟ իւրոյ։ եթէ առաւել հեշտացաւ մ՟ս ունելոյն պատւի քան մ՟ս աշխատութեցն. յոր համբերե՟ց վ՟ս օգտի վանաց։ եթէ ոչ խնամարկեաց զհնազանդե՟լյն հաշտութ՟ և խաղաղութ՟։ եթէ ոչ չինեաց զնո՟ բանիւ՟ և բարի օրինակաւ՟։ եթէ զկանոնս կարգին իւրոյ ոչ պահեաց. այլ թոյլ ետ կորուսանիլ կրօնաւորական սովորութե՟։ եթէ անտես արար զպայմանի մեղս հնազանդելոց իւրոց՝ և ոչ ուղղեաց. և կամ զծածուկ մեղս որ զեկուցաւ՟ նմա արտաքոյ խոստովանութե՟՝ ոչ որոնեաց ո՟պ պարտն էր։ եթէ ՚ի ժողովս միաբանն եղբարցն՝ ոչ եղև ուղիղ դատաւոր։ եթէ վատնեաց զինչս վանացն։ եթէ վերնագունիցն ոչ հնազանդեցաւ՟. ո՟պ հայրապետին, և եպիսկոպոսին, և այլոց։ Դարձեալ եթէ զվէճս յանձնեալս ՚ինա ՚ի հայրապետէն, և յայլ վերնագունից իւրոց՝ ոչ աւարտեաց ը՟ստ խրատուց հմտագունից։ և կամ արար անդ անիրաւութի՟ ինչ. ոչ գրեալ է յառաջիկայդ ՚ի ճառս դատաւորաց. եթէ ումեք եդ ծանր բեռն, և մարմնական սպասաւորութի՟ ասելով՝ արա վն՟ իմ զայս՝ և զայն ինչ. եթէ եղև վանապետ բազում վանուց. եթէ զանարժանս և զոչ բաւականս՝ կացոյց գործաւորս, մանաւանդ խնամողս հոգւոց մարդկան. և կամ թոյլ ետ մնալ նց՟. թէպէտ ինքն ոչ է կացուցեալ. եթէ ոչ եղև ջատագով շրջաբերականին եկեղեցւոյն իւրոյ. և կամ ինքն ոչ պահեաց զգրեալսն ՚ի նմա. եթէ ոչ եղև ցաւակից տկարաց և խոթացելոց. եթէ ՚ի յուղղելն զեղծարս կշտամբեաց աւելի քան զչափն. և կամ արար այլ ինչ սոյնպիսի. եթէ չար սովորութե՟ թոյլ ետ մնալ ՚ի վանս. և կամ ՚ի ներքս ինքն եմոյծ. եթէ առանց հարկաւոր պատճառի հրաման ետ հնազանդելոցն ՚ի կերակուրս, և յըմպելիս, և յայլ իրս․ և կամ յոյժ բիրտ և խիստ եղև՜ ընդդէմ այսմ․ և այլք սոյնպիսիք։

Մ՝այրապետաց։

Հարցանել արժան է․ և թէ ձեռնամուխ եղև՜ ՚ի գործ ինչ կարգաց․ այսինքն՝ ՚ի դպրութ՟ի և՚ի կիսասարկաւագութ՟ի․ և այլն․ քանզի զայսպիսիս ոչ կարէ առնել․ իսկ աստիճանաւորաց հա՛րց․ թէ սիմոնականութ՟ե՜ ընկալեալ եղև ՚ի կրօնաւորութ՟ի․ և կամ պահեա՜ց գաղտ ժամանակաւոր ինչ․ որով ո՛չ զանազանի այն ՚ի սափիրայէն․ եթէ եմուտ ՚ի կրօնաւորութ՟ի այնու դիտաւորութ՟ե, որ՟պ զի ունիցի հանդերձս և կերակուրս․ և ո՛չ վ՟ն սիրոյն ա՟յ․ զայնպիսին խորատեսմ զի փոխեսցէ զդիտաւորութին։ եթէ ծանրացոյց զվանքն։ և կամ մինչ վանքն էր չքաւոր և ինքն կարէր օգնել, ո՛չ օգնեաց։ եթէ յառաջ քան զմտանելն ՚ի կրօնաւորութի, ո՛չ հատոյց զպարտս իւր. կամ զինչս իւր վատնեաց. և վն այն ո՛չ կարաց հատուցանել զպարտսն։ եթէ մտանելովն ՚ի կարգ՝ արար պակասութի ումեք. ո՛պ ծառայն առանց հրամանի տն, և այրն առանց հրամանի կնոջն, և կամ կինն առանց հրամանի առն, յորժամ կատարեալ իցէ պսակն։ եթէ ուխտեաց մտանել ՚ի նեղագոյն կարգ. և յետ այնորիկ առանց հրաման առնելոյ եմուտ ՚ի յարձակագոյնն։ եթէ յորժամ մտանէր ՚ի կարգ, և ունէր ինչ գաղտ հիւանդութի, ո՛չ յայտնեաց զայն. վո՛յ և ո՛չ կարաց տանել խոշորութե կրօնիցն։ եթէ ո՛չ պահեաց զկացուցմունս կարգին իւրոյ և զկանոնս. այսինքն՝ եթէ եղև՞ բղջախոհ. կամ անհնազանդ. կամ ստացա՞ւ յատուկ ինչ. զի այնոքիւք մահու չափ մեղանչէ։ բայց զանցանելն զայլ կացուցմամբ՝ ո՛չ մեղանչէ մահու չափ, եթէ ո՛չ արասցէ զայն վն̄ խոտելոյն զկանոնսն և զառաջնորդն։ եթէ էա՞ռ ինչ՝ կամ ե՞տ առանց հրամանաց. և կամ յանօգո՞ւտս ծախեաց. և կամ զյանձնեալն ինքե̄ն թոյլ ե՞տ կործանիլ։ եթէ առնլով ընդունելութի̄ ընդ կանայս՝ գայթակղեցո՞յց զայլսն։ և կամ արատահայեաց եղև՞ աչօք։ և կամ արա՞ր այլ ինչ ցոփութ̄իս։ եթէ վն̄ անհմեստ գործոց ե՞տ ինչ կամ էա՞ռ։ եթէ ուրացա՞ւ երբէք զկարգն իւր. և կամ մինչ էր յուրացուե̄, ընկալա՞ւ ՚ի տե̄ռ խորհրդոյն. կամ սպասաւորեա՞ց այնմ։ եթէ հեղ գացաւ առնել զյանձնել գործն իւրեան։ եթէ յամ օր ոչ ասաց զկանոնեալ զաղօթսն։ եթէ վատահամբաւեաց զառաջնորդս և զեղբարս իւր։ և կամ միայն վն կարծիս ունելոյն յոք՝ ասաց ինչ զնմանէ առաջի առաջնորդին․ զի յայնժամ պարտական է անդրէն դարձուցանել զանուն նր որքան կարն իցէ։ եթէ ամբաստանեաց զոք ՚ի ժողովարանին․ որ ոչ վն նախանձախնդրութե սիրոյ․ կամ ստեաց ՚ի դատաստանին․ որ է մահու չափ մեղք։ եթէ յոյժ փափկակեաց եղև ՚ի կերակուրս և յըմպելիս և ՚ի հանդերձս։ և կամ որոնջեաց յորժամ ունէր զայսպիսի իրս, եթէ խնդրեաց հրաման ինչ ուտելոյ, և այլ սոյնպիսեաց։ եթէ ոչ պահեաց զպահս կարգին իւրոյ։ եթէ հնազանդեցաւ առնել ինչ չար, եթէ ոչ պատկառեցայ յառաջնորդաց իւրոց. եթէ ընկալայ զոք ՚ի կարգ. կամ հաւանեցայ ընդունել դաշամբ. կամ դիտաւորութբ մարմնաւոր ինչ օգտութ. և կամ ողոքելով հաւանեցուցի զոք մտանել ՚ի կարգ. եթէ ՚ի յընտրութին սիմոնականապէս ընտրեաց. և կամ ոչ զլաւագոյնն ըստ իւրում խղճի մտաց. եթէ կեղծաւորեցայ. եթէ ցոփութն իւրով և չար օրինակաւ գայթակղեցուցի զայլս. եթէ եղև դատարկակեաց. զի դատարկակեցութին՝ բազում չարիս ուսուցանէ. եթէ վն բարերարաց և երախտաւորաց՝ կենդանեաց և մեռելոց՝ հաւատարմապէս ոչ աղօթեաց. եթէ արար տարաձայնութի ՚ի վանքն. և կամ հաւանեցայ՝ զի կրեսցէ ոք ամօթ՝ ոչ ըստ իրաւանց. եթէ ամենևին պարապեցայ փիլիսոփայա

կան գրոց, և պոէտիկոսաց.
զանցառնելով զա՟ծաշունչ գրովք։
և կամ ուսա՞ւ զկախարդութի՟, և
զայլ արգելեալ գիտութի՟ս։ յոր
ժամ գնաց ՚ի քարոզութի՟՝ արա՞ր
աւելի ծախս. և կամ ՚ի քարո-
զելն՝ ունէ՞ր դիտաւորութի՟ նախկը
՚նաբար վ՟ն մարմնաւոր ինչ օգտու-
թե՟ն. որ ո՛չ է արժան ըստ առա-
քելոյն։ եթէ է՞ր գաղտ ապակա-
նեալ, և թոյլ ե՞տ զինքն օրհնել
իբրև զկոյս։

Դատաւորաց։

Հարցանել արժանէ դա-
տաւորին. եթէ սիմոնա-
կանութե՟ էառ զիշխանութի՟ն առանց
հաւանութե՟ այլոց։ եթէ գրեա՞ց
սուտ թուղթ. եթէ արա՞ր աւելի
իշխանութի՟ քան զյանձնեալն ՚ի
նա։ եթէ վ՟ն սիրոյ, և կամ վ՟ն
ատելութե՟, և կամ վ՟ն երկիւղի,

խոտորեցայ ՚ի մի կողմն՝ ոչ առնելով դատաստան ուղիղ։ եթէ յապաղեաց զդատաստանն՝ ընդդէմ դատաստանական կարգին։ եթէ ոչ պահեաց զդատաստանական կարգն։ եթէ զմի կողմն վճռողացն ծանրացուցի ընդդէմ իրաւանց։ եթէ արար հարցումն ինչ ՚ի պարտաւորէն՝ որում ոչ էր պարտական պատասխանել։ եթէ զբողոք մուծս օրինաւորս ոչ ընկալայ. և կամ նենգութեամբ ետ տեղի բողոքելոյ։ եթէ յետ օրինաւոր բողոքմանն եղև ձեռնարկել ՚ի վճռն. և աւարտեաց զայն առանց գիտութե ոսոխացն։ եթէ բանադրեաց զոք՝ և ոչ գրեաց զայն ՚ի քարտիզի և ընթերցաւ։ եթէ ընդդէմ իրաւանց ստեաց հաստանելով վճիռ ինչ։ եթէ անհմուտ և անբաւական գոլով ձեռնարկեաց ՚ի դատաստան. յորժամ կարէր

զինքն

զինքն արտաքս բերել։ եթէ 'ի տարակուսելի իրս ոչ եհարց ըզհմտագոյնսն։ եթէ աղքատաց, և որբոց, և այրեաց, ոչ եղև օժանդակ. և ոչ ետ նոցա ջատագովս. եթէ ընկալաւ զհայթայթեալ բանս՝ զոր ասացին ոսոխքն ընդդէմ միմեանց։ եթէ եհան վճիռ ընդդէմ ճշտութեան՝ ըստ ստուգելոյն կաշառապէս առաջի իւր. թէպէտ ինքն գիտէր թէ՝ ոչ է ճշմարիտ ստուգութիւն այն։ եթէ զանց արար տալ զպատիժն. կամ աւելի քան զչափին ետ. և կամ փոխեաց անկարգաբար և առանց հարկաւոր պատճառի։ Նաև գիտելի է՝ զի եթէ դատաւորն գիտութեամբ արասցէ վնաս ինչ միոյ կողման դատախազիցն, կամ երկոցունց կողմանցն՝ ևս մահու չափ մեղանչէ. և պարտական է հատուցանել անդրէն զվնասն։ և այլ սոյնպիսիք.

Վ ջատագովաց։

Հարցանել արժանէ։ եթէ եղև ձեռնամուխ յայն պիսի վէճս, որում ոչ էր բաւական։ եթէ գիտութբ եղև Ջատագով սուտ վէճի։ և կմ յորժամ գիտաց թէ սուտ է՝ ոչ ՚ի բաց եկաց ՚ի նմանէ։ և կամ վն աշխատանաց իւրոց եառ աւելի վարձ՝ և ոչ դարձոյց անդրէն։ եթէ ՚ի Ջատագովութե իւրում արար ինչ ընդդէմ կանոնաց եկեղեցւոյ։ եթէ զծածուկ խորհուրդս այնմ՝ որոյ էր Ջատագով, յայտնեաց ոսոխին նր։ եթէ ոչ օգնեաց աղքատաց ՚ի վէճս նց։ Նաև գիտելի է, զի եթէ մի կողմն ՚ի դատաստանացն կրեսցէ անիրաւաբար վնաս օգնականութբ Ջատագովին, Ջատագովն պարտական է անդրէն դարձուցանել։

Բժշկոց։

Հարցանել արժան է. Թէ յորժամ գնաց առ հիւանդն՝ ոչ նախ ասաց նմա խոստովանիլ, ըստ կանոնաց եկեղեցւոյ. զի բազում անգամ պատահի մարմնաւոր հիւանդութիւն վասն մեղաց։ Եթէ խրատ էր հիւանդին գործել մեղք ինչ վասն առողջութեան ընդդէմ եկեղեցւոյ։ Եթէ եկեղեցականք որք ունէին զոր կարգան. այսէ կրօնաւորքն եւ թօշակաւորքն՝ արարին զգործ բժշկութեան վասն շահու։ Եւ եթէ հր մուտք էին՝ պահպանէին առնել զայն ձրի աղքատաց, եւ ուր գիտէին, եթէ ոչ գոյ երկիւղ վտանգի։ Եթէ անզգուշաբար եւ հեղգութեամբ արար բժիշկն զգործն իւր. եւ կամ զանց արար զոր ինչ պարտն էր առնել. եւ կամ առանց հմտութեան արուեստին արար։

Իւ

Աշխատնոց և տանուտէրնոց։

Հարցանել արժանէ, եթէ զրկեաց զաղքատս։ եթէ ոչ ետ զվարձս մշակաց։ եթէ գործեաց զմեղս սոդոմայականս։ եթէ արար զանմեղ սպանումն։ եթէ հպարտ և փառասէր եղև։ եթէ յոյժ մեծածախ եղև ՚ի կերակուրս, և յըմպելիս, և ՚ի հանդերձս, ՚ի ձիս, և ՚ի ծառայս։ եթէ ՚ի յօրսս կոխեաց և աւերեաց զարտորեայս և զանդաստանս այլոց։ եթէ խաղաց նարտ։ եթէ պատերազմեցաւ խաղի աղագաւ և վն՟ կրթութե՟։ քանզի պարտական է ամ՟ վնասու՝ որ հանդիպի անդ։ եթէ ծառայս, և զաղախնեայս, և զայլ հնազանդեալս իւր՝ բռնադատեաց ՚ի պսակ. և կամ արար վնաս ինչ այնոցիկ՝ որք ուխտեցին զողջախոհութի՟։ եթէ ոչ եղև հնազանդ առաջնորդաց եկեղեցւոյ. և կամ իւրոյ վերնատունիցն. և կամ զխորատս և զուղղուխս նց ոչ եառ յանձն։ եթէ ոչ արար փոյթ զբանադրութէ. և զարգելմանէ. և կամ յորժամ բանադրեալ էր՝ մերձեցաւ յածայինսն։ եթէ վս նր մեղացն քաղաք և գաւառ եղև՝ արգելեալ։ եթէ յորժամ բանադրեալ էր՝ արար զվնաս ինչ եկեղեցականացն. եթէ ձեռնամուխ եղև՝ ՚ի յիւրս եկեղեցկնաց՝ որ ոչ վերաբերէր առ նա. և կամ չարակամութբ արգելեաց զընտրութին ումեք. և բռնութբ զոք ՚ի ներքս եմոյծ. և կամ ծանրացոյց զկանոնականսն՝ որք ոչ կամեցան ընտրել ըստ կամաց նր. զի այնպիսին բանադրեալ է։ եթէ եկեղեցեացն՝ որոց էր պարտ ոչ մատոյց զարժանաւորսն. և կամ սիմոնականութբ՝ մատոյց զոք. և կամ վս մարմնական աղէտին։

և կամ զինչս եկեղեցւոյն էառ յինքն։ եթէ հիւր գալոյ աղագաւ՝ բազում անգամ ծանրացոյց զեկեղեցականս։ տուժելով ՚ի նոցանէ արծաթ, կամ ձի, և կամ թէ այլ ինչ։ եթէ արար ինչ ընդդէմ շրջաբերականաց եկեղեցեաց։ եթէ ոչ ետ զտասանորդս եկեղեցւոյ։ և կամ զտուեալն յայլոց պահեաց ՚ի յինքն։ եթէ թոյլ ետ վաշխառուաց որ ընդ իշխանութբ̅ իւրով։ եթէ ոչ արար իրաւունս և արդարութի̅։ եթէ ոչ եղև օժանդակ որբոց և այրեաց։ եթէ վաճառեաց զիրաւունս։ և էառ կաշառս։ եթէ զոր ինչ խոստացաւ ոչ կատարե̅ց։ և կամ զպայմանս խաղաղութե̅ն ոչ պահեաց։ եթէ ոչ ազատեաց զպաշարեալն ՚ի ձեռաց թշնամեացն։ եթէ ոչ զերծոյց զերկիր ՚ի ձեռաց աւազակաց որքան կարենէր։

զի յայնժամ պարտականէ անդրէն դարձուցանել զա՟մ վնասն եղեալ զնոքօք: եթէ ո՞չ կշտամբեաց զչարագործս: եթէ եղև՞ պաշտպան հերետիկոսաց չարագործաց: եթէ թոյլ ե՞տ երկրի իւրում ունել անօրէն չափս և կշիռս. և կամ անիրաւ գինս վաճառելի իրաց. և կամ այլ չար սովորութի՟ս: եթէ կացո՞յց անիրաւ օրէնս. և թէ զի՞նչ կացոյց՝ ասասցէ: և կամ մինչ ո՛չ ունէր իշխանութի՟ն կացուցանելոյ օրէնս՝ սակայն կացո՞յց: եթէ յոյժ բիրտ եղև՞ ՚ի հրամանս տալն, և թողուլն, ՚ի յորս ունէր կարողութի՟ն. և կամ ընդդէմ այսմ յոյժ դիւրաւ ե՞տ հրամանս. և եթո՞ղ ընդդէմ իրաւանցն, և հասարակաց օգտութե՟ն: եթէ ո՞չ պատժեաց զյանցաւորսն վ՟ն ագահութե՟ն. և վ՟ն ատելոյն զոսոխ յանցաւորին. և կամ աւելի քան զչափին պատժեաց։ եթէ Թոյլ ետու գրաւականին առնել զմինն վասն միւսոյն։ եթէ էառ գրաւական ինչ. և զպտուղն ոչ հաշուեց ՚ի գլուխն։ եթէ յանձն էառ զերս ումեք. և ոչ հաւատարմութեամբ կատարեց։ եթէ սպառեաց զինչս որ տուեալ ՚ի ներքոյ պահպանութենր։ եթէ առանց իրաւանց պահանջեաց յոմանց սպասաւորութիւն։ եթէ վերնագունից իւրոց ոչ եղև հաւատարիմ։ եթէ յոյժ քինախնդիր եղև. կամ սպանող. կամ անդամահատ. կամ բանտարգելս արար. և կամ խոցեաց. և կամ արար այլ սոյնպիսիս ընդդէմ իրաւանց. և կամ Թոյլ ետ առնել։ Օ՜ այսցանէ բաւականապէս գրեալ կայ ՚ի Ճառն բարկութե։ եթէ անիրաւ պատերազմ ունէր ընդ ումեք. և խռովութի. կամ աղմուկ. և կամ յարոյց բաժանումն և տարաձայնութի. և կամ զհնազանդեալս իւր ոչ միաբանեաց ընդ միմեանս։ եթէ յաւուրս տօնից պատերազմեցաւ առանց հարկաւոր պատճառի. եթէ օգնեաց ուրուք ՚ի յանիրաւ պատերազմի. կամ ՚ի տարակուսելի իրս։ մի թէ ոչ օգնեաց տ̄ն իւրում, որում պարտական էր սպասաւորել։ եթէ կացոյց վերակացու ժողովրդեանն զանխոհեմն և զբռնաւորսն, և զնեղիչսն աղքատաց։ եթէ կացոյց զհրէայ ոք գործաւոր հասարակաց։ եթէ անիրաւ հարկս պահանջեաց։ եթէ իւրացոյց որ ինչ հասարակ էր, ոպ̄ զմայրիս, զդաշտս, և զայլ սոյնպիսիս։ եթէ կացոյց նոր մաքս. և բաժս որ ոչ ունէր իշխանութի. և կամ առանց հարկաւոր և օգտակար պատճառի։ և կամ էառ աւելի քան զհին մաքսն. և ոչ պա_ հեաց զհասարակաց ճանապարհն ՚ի յաւազակաց և յայլ նեղչաց. վն՟ զի յն՟մանս յայսպիսիս պարտական է անդրէն դարձուցանել. եթէ էառ բաժս յեկեղեցականաց և ՚ի կրօնաւորաց՝ որ ոչ է արժան. եթէ կողոպտեաց զնաւաբեկեալսն. և կամ արար այլ ինչ յափշտակութի՟. եթէ արար հրկէզ զտունս, և զորայս, և կամ զայլ ինչ. եթէ զյափշտակութի՟ս յապաղեաց անդրէն դարձուցանել. եթէ զազատս արար ծառայ. և կամ զծառայս այլոց՝ ծառայեցոյց ինքեան. և կամ եթող զն՟ս յաջորդացն իւրոց.

Ամուսնացելոյ.

Հարցանել արժան է. եթէ ՚ի գաղտ արար ըզպսակն. ունելով տարակոյս արգելման ՚ի մէջ ինքեան և ամուսնոյն իւրոյ. այսինքն՝ վ՟ս արենակցութ՟ե, կամ վ՟ս հոգևոր ազգականութ՟ե, և կամ խնամութ՟ե և այլ այսպիսիս: եթէ արամբ պըսակ յառաջ քան զօրինաւոր հասակն. և կամ զորդիս և զդստերս իւր ամուսնացոյց յառաջ քան զունելն զօրինաւոր հասակն. այսինքն՝ զորդին նախ քան զչորեքտասան ամ՟ն. և զդուստրն նախ քան զերկոտասանն: եթէ արամբ պսակ ՚ի յարգելեալ ժամանակս: եթէ խնդրեաց զպարտս յաւուր տօնից և պահոց. եթէ ոչ հատոյց զպարտս, յորժամ խնդրեաց ամուսինն իւր: Նշ՟ գիտելի է՝ զի գործ ամուսնութ՟ե առանց մեղաց՝ վ՟ս երկու պատճառի լինի. այսինքն՝ յորժամ հատուցանէ ամուսնոյն զպարտս՝ զոր խընդրէ. և կամ վ՟ս որդէծնութ՟ե: եթէ խնդրեաց զպարտս ՚ի ժամանակս

ծննդականութե՟ն յառաջ քան ըզ
լրումն քառասնին, և քան զմտա
նելըն յեկեղեցին։ եթէ անկարգ
կերպիւ մերձեցա՞ւ յամուսինն
իւր։ եթէ էա՞ծ զոք բռնութե՟
՚ի կնութի՟։ եթէ այրն եղև՞ յոյժ
բիրտ ընդդէմ կնոջն. և կամ
կինն եղև՞ անհնազանդ առն։
եթէ կինն ծնա՞ւ զաւակ ՚ի շնութե՟։
և կամ զայլոցն էառ և եցո՞յց ոպ՟
թէ ինքն իցէ ծնեալ։ եթէ կինն
զինչս առն իւրոյ ե՞տ այլում։
եթէ այրն վատնեա՞ց զինչս կնոջ
իւրոյ։ եթէ ամուսինքն հեռա֊
ցա՞ն ՚ի միմեանց անիրաւաբար։
եթէ այրն պահեա՞ց զանուղղելի
կին որ ո՛չ կամի դառնալ ՚ի շնութե՟։
եթէ կինն ո՞չ գնաց ընդ առն իւ֊
րոյ. յորժամ այրն կամեցաւ եր֊
թալ յայլ գաւառ վս՟ հարկաւոր
ինչ պատճառի։ եթէ մինն եղև՞
պատճառ մեղաց միւսոյն։ եթէ ո՞չ

սնուցին զաւակս իւրեանց յերկիւղն այ՟։ եթէ կինն արար ինչ արգելուած, զի մի՛ յղասցի· կամ թէ այրն արար զնոյնն· և կամ վիժեաց· զի երկոքին դատին իբրև զսպանօղ· և այլք։

Սահմանաւորէ նոցա և պատժապարտեաց արգանել արժանէ· եթէ խաբեաց զոք· կամ թանկավաճառ եղև՟։ եթէ թագոյց զարատն վաճառելի իրացն։ և կամ խաբեաց զվաճառօղն տալով պակաս գին։ եթէ ունէր թիւր չափ և կշիռ և կանգուն։ և կամ արար զանց և ոչ ետ զարդար մաքս և զբաժս։ եթէ ՚ի գնելն ինչ՝ ոչ հատոյց զգինն ըստ պայմանին, եթէ էր ձեռնհաս։ եթէ յապաղեաց և ոչ հատոյց զվարձս վարձկանաց իւրոց։ եթէ էառ վաշխս և կամ յաւելուած առնուլ։

նուլ։ եթէ վաճառականք կարգեցին ՚ի մէջ իւրեանց, զի ամէն միով գնով վաճառեսցեն։ և թէ մի՛ վաճառեսցէ մինն զայս ինչ, և միւսն զայն. զի այսպիսիքս ծանր մեղանչեն։ եթէ խօսեցան սուտ. և երդուան յընդունայն. և այլք։ ո͞պ գրեալ է ՚ի ճառս մեղաց լեզուին։ եթէ արար վաճառականութի միայն վ͞ն ժողովելոյ արծաթ. և այնու հպարտացան։ եթէ խաբեաց զվաճառականս և զեկեղեցականս ՚ի գնելն զանդաստանս ն͞ց. և կամ փոխանակել. որ այնու առնեն պակասութի եկեղեցւոյն։ եթէ երկրագործացն և պարտականացն իւրեանց եղեն անողորմ։ եթէ արար բաժանումն և տարաձայնութի ՚ի մէջ հասարակութե. և կամ օգնական եղև այնոցիկ՝ որք առնեն անիրաւութի այլոց։ եթէ ընդ քաղաքացեաց իւրոց և ընկե րաց՝ ո՛չ պահեաց զհաւատարմութի՟։ և կամ կերպիւ ինչ վնասեաց ն՟ց. բանիւ, կամ գործով, կամ խրատ տալով՝ յայտնի կամ ՚ի ծածուկ։ եթէ զղալպ դրամն ե՟տ ՚ի տեղի լաւի գիտութ՟բ։ զի զոր ինչ առնէ վնաս՝ պարտի անդրէն հատուցանել։ եւ եթէ ե՟տ ՚ի փոխ զվատն. զի առցէ զլաւագոյնն։

Ա՛րուեստաւորաց և արհեստաւորաց։

Հարցանել արժան է. եթէ արարին ինչ անարժան՝ արուեստին իւրեանց. այսինքն՝ կազմել մահադեղս. և այլ սոյնպիսիս։ Նա՛ գիտելի է, զի են ինչ՝ որք հաղիւ միայն աւուանց մեղաց. որպէս զինուորութի՟, և վաճառականութի՟. զայնպիսիսն յորդորեա՛, զի արասցեն զգործս իւրեանց՝ բարի դիտաւորութ՟բ.

այսինքն՝ զինուորն պատերազմեսցի վն՟ հաւատոյ, և վն՟ հասարակաց օգտի. և վաճառականն վն՟ լցուցանելոյ զհարկաւոր պէտս իւր. և կամ վն՟ առնելոյ ողորմութ՟ի: Հա՛րց այնոցիկ որք առնեն սուրս. զէնս. նետս. և վաճառեն այնպիսեաց, զորս գիտեն՝ եթէ չարաչար առնուն ՚ի կիր. քանզի պարտական լինին ամ՟ չարեացն՝ որք պատահին յայնցանէ: Գուսանաց և կատակերգողացն հա՛րց. եթէ արա՛ր գարշելի խաղս. և կամ խօսեցաւ աղտեղի բանս. կամ վատահամբաւեաց և նախատեա՛ց զոք: Հա՛րց դրամահատիցն. եթէ խառնեա՛ց անդ պղինձ. և կամ այլ ինչ. և կամ արա՛ր թեթևագոյն քան զսահմանեալն: եթէ գիտութ՟բ ե՛տ զղալբ դրամն ընդ լաւի: Հա՛րց հացեփեցացն. եթէ խաբեա՛ց զհացգինսն ՚ի կշիռն. կամ յայլ իր։ Հարց գինեվաճառին. եթէ զգինի միոյ երկրի վաճառեսցէ ընդ միւս այլ երկրի։ եթէ յետ որոյ եղև համբաւ զնմանէ ունել զգինիս անոյշ, վաճառեսցէ զհոտին անուշամբ և գնով այնորիկ. և կամ ջուր խառնեալ անդ։ եթէ թոյլ եղև ՚ի տան իւրում առնել խաղս անհամեստս, և արգելեալ բանս աղտեղիս, և սուտ երդմունս. զոր կարէր խափանել։ եթէ ընկալաւ ՚ի տուն իւր գողս, բոզս, աւազակս. և այլ սոյնպիսիս։ Հարց առ հասարակ արուեստաւորաց. եթէ խաբէութիւն ինչ արարեալ իցէ. զի որք խաբէութեան իւրեանց վնաս արարեալ իցեն ումեք, պարտական են այնոքիկ անդրէն դարձուցանել. և եթէ զնոսա ոչ ճանաչեսցեն՝ տացեն աղքատաց։ եթէ աճելի և նոր ինչ գտաւ յարուեստ սըն իւր, որ էր առաջել վ͞ն ընդունայն և անոտի փառաց իւրոց, քան վ͞ն հարկաւորութե͞ հասարակութե͞. և այլք։

ՌԱՄԿԱՆՈՑ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՑ։

Հարցանել արժան է. եթէ հաւատա͞ն ու͞ղ հաւատայ ս͞բ եկեղեցին ո͞յ. և գիտե͞ն՝ թէ զի͞նչ պարտին հաւատալ. այսինքն՝ զաստիճանս հաւատոյն. և զտասն պատուիրանսն։ և թէ գիտե͞ն ըզ հաւատամքն, զհայր մերն և զանկանին։ եթէ զքահանայ զոք, կամ զայլ ինչ կարգաւոր՝ նախատեալ կամ բամբասեա͞լ իցեն։ եթէ զբաժին տասանորդին ոչ ետուն։ եթէ ոչ պահեցին զպահս եկեղեցւոյ առանց հարկաւոր պատճառի։ եթէ խոտեցին զբանադրութի. և մտին բանադրած յեկեղեցին։ եթէ վկայեցին սուտ։ Եթէ արարին ինչ վնաս դրացեաց իւրեանց. և կամ ամբաստանեցին զնս՟ ՚ի ծածուկ առաջի տէրանց իւրեանց։ Եթէ արարին գողութի՟. կմ՟ անիրաւութի՟. կամ վնաս ինչ. ինքեանք, կամ ընտանիքն իւրեանց։ Եթէ մտին ՚ի կոպարս անդաստանաց այլոց. յորմէ էին աղմուկք, կռիւք, ատելութիք, և այլ բազում չարիք. որք պարտական են զայսպիսի անիրաւութիս անդրէն դարձուցանել։ Այլև հարց. Եթէ արարին նենգութի՟ և անիրաւութի՟ ո՟ն իւրեանց։ Եթէ ոչ հերկեցին և սերմանեցին զանդաստանս՝ յիւրում ժամանակի։ Եթէ ոչ հատուցին ո՟ն իւրեանց զհարկս և զայլ սպասաւորութիս՝ որ ըստ իրաւանց։ Եթէ վս՟ մարդկան երկիւղի և աշխարհի արարին ինչ ընդդէմ ա՟յ. յորմէ առաւել պարտ է երկնչիլ.

եթէ ուխտեցին և ոչ կատարեցին. եթէ ՚ի ժամանակս ցասման և նեղութե՟ որ յա՟յ, ոչ համբերեցին. այլ տժգոհեցին և ասացին ինչ ընդդէմ ա՟յ. եթէ պարծեցան և արարին աղմուկս. և կըռիւս. և արբեցութի՟ս. Նաև հարցջի՛ր յա՟մ գլխաւոր մեղաց՝ ո՟ր գրեալ է ՚ի վերագոյն ճառով. և մի՛ զանց առներ.

Աշխատաւորաց.

Հարցանել արժանէ. եթէ խորամանկութե՟ արար զգործս իւր. և կամ խնայեաց զինքն յաշխատութե՟, մ՟յ ՚ի վարձու կալեալ եղև. և կամ եթող զգործս այնմ որ ՚ի վարձու կալաւ զնա, և գնաց յայլ ուրեք. և կամ թէ. շրջեցաւ դատարկ. եթէ առաւել կամեցաւ մուրալ քան աշխատել. եթէ եղև՞ անհամբեր և տրտնջօղ ՚ի յաշխատութիւն. և այլք այսպիսիք՝ որք գրեալք են իսկզբեան գրոցս։

Վասն անդրէն դարձուցանելոյ շփոթեալ կամ շփոթեցեալ, և կամ շնորհ արարեալ իրս՝ առ տեարս իւրեանց։

Եթէ գտանիցի օտար ինչ ՚ի խոստովանօղն, պարտականէ անդրէն դարձուցանել առ տէրն. ասացես զի. դարձուսցէ զայն ՚ի ճշմարիտ տէրն իւր. կամ ՚ի ժառանգն նորին. եթէ կարիցէ գտանել։ բայց եթէ զայն յառաջ քան զմահն իւր՝ անդարձ արարեալ իցէ վանաց. կամ այլոյ ումեք. զամ ինչս, և զամ զպարտոսն իւր զոր պարտիցի, յայնժամ պարտէ դարձուցանել նմա ՚ի վանսն. և կամ ՚ի յայն՝ որում անդարձ արար զինչս իւր. և ոչ ՚ի ժառանգս նր. իսկ թէ ոչ այլոյ ունէր թողեալ իցէ զինչս իւր, և ժառանգորդքն իցեն յայտնի՝ յայնժամ թէ բազում իցեն ինչքն՝ խրատով եկղ̃ցւոյն, և թէ սակա՛ւ՝ խրատով խոստովանահօրն տացեն աղքատաց։ այլ թէ ակն ունիցին, եթէ յետոյ երևելոց են ժառանգքն, պահեսցեն զինչսն զայնոսիկ մինչև գիտասցեն զվերջն։ Դարձե̃լ՝ զա̃մ պարտական համաձայնեսցի ընդ փոխատուին իւրոյ։ զի կամ թողցէ նմա, և կամ կարեսցէ զժամանակն, զի յետոյ հատուցանիցէ։ դարձեալ՝ զի զա̃մ օտար ինչ՝ պա՛րտէ անդրէն դարձուցանել ՚ի ճշմարիտ տէրն իւր· և ո՛չ յայն՝ յորմէ առա՛ւ և յափշտակեցա՛ւ· զի նա ո՛չ ունի իրաւունս ՚ի վ̃ր իրին։ Դարձեալ՝ զա̃մ յափշտակեալ և զգողացեալ իրս պա՛րտէ անդրէն դարձուցանել· ա̃մ պտղո̃վ, աճմամբն, և վաստակօքն. զոր ինչ էառ. և զոր ինչ կարէր շահիլ. Նաև՝ տացէ զվնասն զոր ինչ կրեաց տ̄ր իրին, վ̄ն առնելոյ զիրն զայն ՚ի նմանէ. Նաև թէ կորիցէ իրն՝ պարտական է անդրէն դարձուցանելոյ. բայց թէ նա ետ ՚ի տէրն իրին, և տ̄րն ն̄ր ոչ կամեցաւ առնուլ. և յետոյ կորեաւ իրն՝ ինքն մեղադրելի է։ Դարձեալ՝ եթէ այն որ պարտական է անդրէն դարձուցանելոյ և հատուցանելոյ, և ոչ կամի զի յայտնեսցի իրն, տացէ ՚ի ձեռն խոստովանահօրն. կամ այլ հաւատարիմ ումեք՝ որք հասուցանեն ՚ի տէրն իւրեանց առանց պակասութ̄ե. ապա թէ ոչ՝ ինքն պարտական է հատուցանելոյ զպակասորդն։ Դարձեալ՝ յափշտակողքն և ընկերք նոցին, յետ որոյ անդրէն դարձուցանիցեն զզրկանսն՝ պարտին խոնարհուք թողութիւն խնդրել յայնցանէ, որոց արարին անիրաւութիւն. ինքեանք, և կամ միջնորդովք. եթէ ծածուկ իցէ իրն։ Դարձեալ՝ յորժամ անդրէն դարձուցանիցէ զզրկանսն՝ զորոյ զչափն ոչ գիտիցէ, այնքան տացէ՝ որչափ գիտիցէ. և յայնժամ ասասցէ ինքն և կամ միջնորդն այնմ՝ որ զրկեցաւ. թէ ըստ կարծեաց իմոց այսչափ ինչ վնաս եղև քեզ. և թէ գիտիցես՝ թէ աւելի ինչ պարտիմ քեզ, և զայն ևս հատուցանէի. և թէ պակասէ զոր պարտիմ տալ՝ թո՛ղ ինձ. և թէ աւելի է՝ ես կամաւ իմով շնորհեմ քեզ։ Դարձեալ՝ եթէ ոք պարտական ոչ գիտիցէ, եթէ վճարեալ է զպարտն իւր թէ ոչ. խրատ տամ այնպիսոյն. զի բաւականապէս հատուցանիցէ ըստ կամաց փոխատուին. կամ ըստ խրատ տու այլ հաւատարիմ ումեք· բայց հաւատարիմ միջնորդն այն՝ պարտական է նկատել զորպիսութիւն կարծեացն՝ և ըստ այնմ խիղճ մտացն իւրոց խոնարհեսցի ՚ի մի կողմն աւելի քան միւսն· և կամ յո՛չ ոք կողմն· և ըստ այնմ հրամայեսցէ տալ աւելի, կամ պակաս· և կամ զի հատուսցէ պարտականն զկէս պարտուցն· և փոխատուն թողցէ զմիւս կէսն· և ըստ այսմ կարծիքն դաւանայ ստոյգ ։ Նաև տամ խրատ· զի խոստովանահայրըն՝ տասցէ խոստովանորդւոյն, զի գրեսցէ զամենայն զծածուկ պարտս իւր· զայն զոր պարտատէրն ո՛չ գիտէ, նաև զյայտնի պարտքն, զոր ո՛չ կարէ վճարել· կամ ո՛չ կամի· և զգիրն զայն՝ ընթեռնուցու առաջի նորա քանիցս անգամ, եթէ խոստովանեսցի· և միշտ խրատեսցէ զնա հատուցանել· և թէ հատուցանիցէ ինչ, գրեսցէ զայն 'ի թղթին յայնմիկ. և խրատեսցէ՝ զի զայն հատուցանիցէ. և թէ ո՛չ լուիցէ խոստովանահօրն՝ ասասցէ ցնա, զի երթիցէ առ այլ խոստովանահայր:

Վասն մեղաց լեզուին:

Հարցանել արժան է. եթէ խօսեցաւ բանս դատարկըս՝ որ լուցկէ և հրդեհէ զիւրաքանչիւր մահացու մեղս: կամ թէ եղև շատախօս և աղտեղախօս. և կամ անխոհեմաբար լռեաց: եթէ խօսեցաւ սուտ՝ բանիւ և նշանաւ: եթէ վնասեաց ումեք սուտ խօսելովն իւրով. եթէ խօսեցաւ սուտ 'ի դատաստանի. որ է մեղք մահացու: եթէ խոստացաւ ինչ ումեք և ո՛չ հատոյց: եթէ յայտնեաց զծածուկ խորհուրդս ումեք. թերևս լինէր այնպիսի ինչ խորհուրդն այն, որ վնաս էր ումեք. մանաւանդ թէ հասարակաց. կամ քաղմաց ոմանց։ հարց ցդատաւորն՝ եթէ յորդորեալ զոք տալ սուտ վկայութիւն.

Վասն սուտ երդմնութեան և երդմնազանցութեան.

Հարցանել արժանէ. եթէ ընդունողն և առանց հարկաւոր պատճառի, և առնուց օգտի ինչ երդուեալ. եթէ երդմնազանց եղև։ եթէ գիտութ՟բ երդուեալ վ՟ն անարժան իրաց։ և կամ երդուեալ թէ ոչ արարից զայս ինչ բարի՝ և առնելովն առ ժամայն եղև երդմնազանց։ եթէ գիտութ՟բ զսուտ ինչ՝ երդմամբ հաստատեալ՝ որ է մեղք մահու չափ։ եթէ կատակի աղագաւ ասար զայն. թէ կամօք և յօժարութբ՟: եթէ ընկալայ զերդումն ուրեք. և կամ պահանջեաց ՚ի նմանէ զերդումն, զոր դրժէր եթէ սուտ կամի երդնուլ. և այլ այսպիսիքս որ պատշաճի:

Վասն տրտնջանաց, բամբասանաց, ստութեանց, և չարախօսանաց:

Հարցանել արժան է. եթէ տրտնջեաց և տժգոհեաց զա՟յ ՚ի ժամանակս նեղութե՟: եթէ բամբասեաց զոք վատահամբաւելով. կամ զուր ասելով. կամ բանիւք իւրովք յաւելլով զմեղս նր՟. և կամ զծածուկ մեղս նր՟ յայտնելով. կամ զբարիս նր՟ չարաչար մեկնելով. կամ ուրանալով զբարիս նր՟. և կամ չարակամութ՟ լռելով. և սոքա ամ՟քն ըստ ինքեանց՝ են մեղք մահուչափ: բայց ո՛չ մահուչափ, եթէ լինիցին այսոքիկ բարի դիտաւորութբ՟.

այսինքն՝ զեկուցանելով. կամ ամբաստանելով վ̄ս ուղղութե̄. և կամ արասցեն վ̄ս թեթևամտութե̄, կամ յաղագս կատակի. առանց վնասելոյ անուանն ն̄ր։ Նա՛ գիտելի է՝ զի պարտական է իւրաքանչիւր ոք անդրէն դարձուցանելոյ զանուն այնմ՝ զոր վատահամբաւեաց։ ո՞չ պարտական է անդրէն դարձուցանել զյափշտակութիւն, և զգողութիւն. և զայլ սոյնպիսիս։ եթէ լուա՞ւ զբամբասանս. կամ յորդորեա՞ց զայլս ՚ի բամբասանս. և կամ հաճոյ թուեցա՞ւ իւրեան բամբասանք այլոց։ և կամ ոչ արգելեաց զբամբասօղն. մանաւանդ՝ յորժամ վերաբերէր առ ինքն՝ առնելով զայն։ այսինքն՝ եթէ բամբասօղն էր ՚ի հնազանդելոց իւրոց։ եթէ արա՞ր քսու̄. այսինքն՝ զի կռուեցո՞յց զբարեկամսըն. և զայլ սոյնպիսիս։ եթէ կատակեաց, և ամաչեցուցի զոք առաջի այլոց: զի այս լինի երբեմն ծանր մեղք: այսինքն՝ յորժամ կատակեսցէ զսուրբ արս, կամ զծնողս:

Վասն դիւթութեանց և հմայութեանց: արցանել արժան է. եթէ արար դիւթութիւն. կամ կախարդութիւն. և կամ ետ առնել. և կամ գնաց առ ըռամագարկս. առ վիճակ ընկեցս. առ գարընկեցս. և առ սոյնպիսիս: եթէ կամեցայ աստեղօք, կամ երազօք գիտել զապառնիս և զայլ ինչ որք են ՚ի ներքոյ անձնիշխան կամաց մարդոյն: եթէ գրեաց զանուանս դիւաց. կամ զկոչմունս. կամ զերդմնեցուցանելն. և զայն պահեաց առ ինքն. և կամ ետ յայլս. և կամ գրեաց անծանօթ անուանս. և նկարեաց կնիքս և ձևս. ես թէ՝ որով կերպիւ արար զայն. կամ ինչ նիւթով. և կամ վոյ՞ պատճառի։ քանզի երբեմն առնեն զիղծ իրօք. և երբեմն ՚ի վնաս կենաց մարդկան. և երբեմն առնեն ոք նիւթով։ եթէ ուսոյց՝ և յորդորեաց առնել զայսպիսի իրս՝ պա՛րտէ արգելուլ զնա՝ զի մի՛ արասցէ։

Վասն գայթակղութեան։

Հարցանել արժանէ. եթէ չար օրինակ տալով գայթակղեցոյց զոք. քանզի գայթակղութիւն է բան չար. կամ գործ ո՛չ ուղիղ. տալով այլոց պատճառ կործանման։ և այս լինի երբեմն կամօք և գիտութեամբ գայթակղեցուցանելոյ. և երբեմն ո՛չ դիտաւորութեամբ գայթակղեցուցանելոյ։

Ստան ուխտադրողացութեն ։ արգանել արժանի է. եթէ ուխտեաց ա՟յ կամ ո՟րք՝ և ոչ կատարեաց ։ զի ուխտընէ խոստումն բարուոյ իմիք, արարեալ կամօք և ընտրութ՟բ ։ եթէ ուխտեաց ինչ յիմարաբար ուրեք ․ նաև կամեցաւ կատարել, զոր ոչ էր պա՛րտ ։ եթէ ոչ կատարեաց զուխտ ինչ արժանաւոր ․ կամ փոխեաց առանց հրամանաց խոստովանահօրն ։ եթէ երդուեալ իցէ ՚ի յիմար երդմունս ․ և զայլ սոյնպիսիս ։ արժանի է հարցանել ․ բայց ըստ չափոյն, և ըստ աստիճանին՝ հարցջի՛ր խոհեմութեամբք ․

* * *

Խրատ ցուցմանաւ վարդապետին Ներշըն կացուայ ասացեալ ըստ կանոնաց առաքելոյն և հայրապետացն. և սուրբէ ըստ Ճորչէն Թէրոյ.

Ամենառատ՝ գթութեն Հօրն երկնաւորի որ դեգրութե շնորհօք կոչեցեալք միածնի որդւոյ նր յսի քսի, ժառանգակիցք արքայութե երկնից անուանեալք և խաչեալք. և կենդանարար և ազատիչ սբ հոգւոյն պարգևօք օծեալք և լուսաւորեալք. և լուսաւորչի հօրն մերոյ գրիգորի գերահրաշ վարդապետութեն՝ ի հաւատս ճշմարտութե հաւատացեալք հայաստանեայց եկեղեցիս. ոք յամ գաւառս և՛ի վիճակս քահանայք, միջնորդք այ և մարդկան. և քսասէր հաւատացեալ ժողովուրդք այ.

ձեզ երկնաւո՜ր բարեաց և պարգևաց լիութ՟ի, հոգւով և մարմնով անխռով խաղաղութ՟ի, և ա՟մ փորձանաց փրկութ՟ի, և ք՟սի սիրովն և կարօտովն՝ առ հասարակ ա՟մցուն ողջոյն։ Ո՜ քանզի հա՛րկ 'ի վ՟ր կայ, և պարտական եմք հոգւով վարծեալ բանի՟ն քաղցր վարդապետութե՟ն ք՟սի՝ արկանելով 'ի սեղան հոգւոց ձերոց, և շահել 'ի ձէնջ զգործս բարեաց. և ո՟պ մշակ ա՟ծային այգւոյն զբանաւոր տընկոյն զքրիստոնէից անձինս տածել և խնամել. և զպտուղն բարեաց գործոց ձերոց՝ ա՟յ նուէրել։ և վ՟ս զի ո՛չ կարացաք առնել զ՟այս, որ վ՟ն ժամանակիս դառնութե՟ն և անհասութե՟ն. վ՟յ գրեցաք առ ձեզ 'ի հրամանացն ա՟յ. և'ի դիմաց կանոնական հրամանաց. և յայլ ս՟բց հարց. և յառաջնորդաց լուսաւորչաց եկեղեցւոյն.

և հրամանաւ կաթուղիկոսին՝ որ է այժմ յաթոռ սրբոյն գրիգորի․ և ծանուցաք ձեզ վ՟ս հաւատոյ քրիստոնէութ՟ե գործոց բարեաց ձերոց։

Ա[illegible] ըստ կանոնի հրամանի տոտցեալէ։

Բազմադիմի են շնորհք և խնամք բարերարին ա՟յ․ որ ըստ իւրաքանչիւր դարս զանազան օրինադրութ՟ե խնամէ և կարգաւորէ զիւր եկեղեցին՝ ի ձեռն քրտնաջան առաջնորդաց և առաքելոց՝ սկըսեալ մինչև ցայսօր։ վ՟այ եւ յետնեալ ծնունդս մ՟ր եկեղեցւոյ՝ կաթուղիկոս տանն կիլիկեցւոց և Աթոռոյն երուսաղէմի Պատրիարգ․ և սպասաւոր մ՟ր լուսաւորչի աջոյն՝ յերեկոյացեալ ժամանակիս և անբարի նարդեանս՝

յորում է՛ բարեկարգութ՟ին եղծեալ, և անկարգութ՟ին բազմացեալ։ Զայս տեսեալ իմ վարանէի զցայգ և զցերեկ և յամ՟ ժամու, ո՟պ լիցի հնար զի ուղղեցից․ և ապաւինելով յամենակարողն ա՟ծ, եկի ՚ի բերբերիայ․ ՚ի ա՟ղը, ամ՟ին․ և ըստ կարեաց իմոց վկայութ՟ե ս՟բ գրոց և կանոնաց՝ ուղղեցաք ըստ հարցն աւանդութ՟եց, և զթերին լցաք․ և պատուիրեցաք, թէ առանց վկայութ՟եց ս՟բ գրոց գործ ինչ ոչ առնել։ եթէ եպիսկոպոս իցէ, և թէ քահանայ․ թէ սարկաւագ, և թէ ժողովուրդ։ Եպիսկոպոսաց այս է պատուէր իմ․ զի մի՛ յափշտակեսցեն զսահման ընկերին․ և աւանց կաշառի ձեռնադրեսցեն զնուիրեալսն․ և մի՛ ստահակութ՟ մտցեն ՚ի վիճակս այլոց, և շփոթեսցեն և ձեռնադրեսցեն ՚ի վի ճակէ միմեանց։ իսկ քահանայից պատուիրեմ. զի պարկեշտ և հընազանդ կացցեն առաջնորդաց իւրեանց. և միմեանց ժողովուրդն ո՛չ յափշտակեսցեն մարդելուզութ̅բ և շողոքորթելով. այլ իւրաքանչիւր զիւրն կալցի։ և կրկին պատուիրեմ՝ զի ժամարարն որքան ժամ անէ՝ յեկեղեցւոյն դուրս մի՛ ելանիցէ։ եթէ մկրտութ̅ի, կամ պսակ անէ՝ առանց սաղմոսերգութ̅ե մի՛ արասցէ։ և՚ի պատարագելոյ որն՝ պատարագօղն միս և գինի մի՛ ճաշակեսցէ։ այնոքիկ որք ծերքն են՝ որք զինքեանս կառավարել ո՛չ կարեն, ՚ի պատարագէ և՚ի մկրտութ̅է յետս կացցեն. այլ ՚ի լուութ̅ե մնասցեն։ Դարձեալ՝ մի՛ իշխեսցեն քահանայք՝ գաղտ նշան, կամ աղ օրհնել. և կամ թաղել զեկամուտն առանց առաջնորդի և հովուել։

Պարծեալ՝ ք·հանայից պատուէր․
զպտունիկն ոչ հաղորդել առանց
հրաժարելոյ․ և ասորոց սան ոչ
տալ․ և ա՝ որ փոքրիկնէ, և որ
պակաս են քան զհնգետասան ամն,
այնպիսի տղայոց սան ոչ տալ․
կամ ասորոց հետ խնամութ̅ի ոչ առ-
նել․ կամ ը̅ այլ քրիստոնէից․ և
մի՛ մեղօք առնել, և լուսաւորչի
կանոնքն քակել․ զազգականութ̅ին
քան զտասն ձիւղն պակաս մի՛ առ-
նել․ և զխնամութ̅ին, ինն․ և զկնքա-
հայրութ̅ին, է̅․ և գրով հաստատե̅լ
զորդեգրութ̅ին, քան զմեց։ զմե-
ռեալ եղբօր նշանածն՝ միւս եղ-
բօրն մի՛ ածել։ պա՛րտ է կոյս ընդ
կուսի ամուսնացուցանել․ և այ-
րին ընդ այրւոյ։ և ՚ի խնամութե̅
հաշիւն, զկենդանի զայր և զկին՝
մի թուեսցեն․ և ոչ բաժանես-
ցեն։ և զկնքահարսն չփոխել․ մի
տան՝ մի կնքահայր բաւական է

յազգէ յազգ։ և կնքահարքն զմիմեանց սանն մի՛ կալցեն։ Դարձեալ՝ սարկաւագաց պատուիրեմ, զի պարկեշտ լիցին. ՚ի վ̅ր սաղմոսերգութ̅եց և աղօթից արի լինին. առանց բամբասանաց լինին. և մի՛ զինուորական հանդերձիւ և ձևով շրջիցին. և ո՛չ ոք որ կամի քահանայ ձեռնադրիլ՝ յաթոռն գայցէ։ Դարձեալ՝ և ժողովուրդքըն՝ քահանայից և առաջնորդաց հնազանդ կացցեն. առանց առաջնորդի և քահանայից խրատու՝ յօրինաց գործ մի՛ առցեն։ Դարձեալ՝ իբրև զմոլորեալ ոչխար՝ իւրաքանչիւրոք իւրեանց քահանայ մի՛ ընտրեսցեն առանց պատճառի։ Թէ լինի արատ ինչ ՚ի քահանայն՝ առաջնորդն քննեսցէ. այլ և հասն և իրաւունք եպիսկոպոսին այսէ. ըստ հրամանաց Լուսաւորչին և Իսահակայ հայրապետին, և ըստ խրատուց դատաստանաց գրոց. տունք քահանայից և ազատաց, և տանուտէարք, գիշերապաշտամունք, յանկարծամահ, տէառնական մատաղ, և նաւ՛ակատեաց խաչահամբոյրն, տաղաւ՛արաց մատաղն, և պոռնկաց, և անհաղորդաց՝ թէ կողոպուտն, և թէ քառասնիցն, թէ հոգեբաժինն, և թէ այլ ինչ իրաւ՛ունք. ոպ՟ օրէնէ եկեղեցեացն հայաստանեայց, զնոյնն հատուսցեն եպիսկոպոսին: Նոյնպէս և քահանայից զհասս և զպտուղ անպակաս հատուսցեն ժողովուրդքն. թէ երինէ, և թէ կողոպուտն է անբծի, և թէ քառասնից. ամ՟քն լիապէս հատուսցեն. զի հրամայէ ՚ի կանոնս հայոց, թէ որ ոք արգելու զհասս քահանայից՝ ընդ խաչահանունսն և ընդ յուդայի եղիցի նա: Դուք ժողովուրդք անպակաս զհասս և զիրաւունս քահանայից մի՛ կտրէք․ պարտիք հատուց՟նել ն՟ց․ զի նոքա լրջմտութ՟բ և արիութ՟բ զպաշտօն տ՟ն՝ անխափան կատարեսցեն․ զի մի՛ արատեսցեն զպաշտօնն։ ՚Քահանայք կամ ժողովուրդք՝ զամ՟ աւուրս չունին հրաման ՚ի քհ՟է զպատարագն թողուլ ՚ի գերեզման գնալ․ ապա թէ անլուր լիցին բանից, ընդ անիծիւք լիցին։ Իսկ որք հնազանդքն են՝ օրհնեալ լինիցին յա՟յ․ և զի եթէ պատահի, որ ՚ի փաղի՟ն նշան օրհնել լինիցի, յերեկոյին մի՛ զեղխիցին գինեաւ քահանայքն, և ժողովուրդքն․ ապա թէ ոչ լուիցեն պատուիրելոյն՝ և գայցեն անդ որք զեղխեալք են և արբեալք, քահանայքն մի՛ արասցեն զայն պսակն․ ապա թէ օրինաւոր շարժին՝ յորժամ գան ՚ի պսակն՝ նախ

առցէ

տացէ զփեսայն և զկնքահայրն. և ո՛չ այլ ոք կամ օտար. զի մի՛ վէճ և կռիւ լիցի, և խափանեսցեն զկարգ և զսահման օրինացն. և տարցէ զփեսայն և զկնքահայրն ՚ի դուռն հարսին. և ձեռն ՚ի ձեռին տայցէ հարսին և փեսային, և ապա բերցեն յեկեղեցին. և պսակն յայնպիսի աւուրն դիցեն, զի յաւուր վերացման պսակին՝ պահս ո՛չ դիպիցին։ դարձեալ պատուէր իմ այս է, զի եկեղեցին առանց լուսարարի մի՛ մնասցէ. զի որ լուսարար ո՛չ ունի՝ բազում պակասութի դիպիցին այնմ եկեղեցւոյն ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր գործս։ դարձեալ՝ պատուէր իմ այս է քահանայից. ՚ի շաբաթն և ՚ի կիւրակէն անխափան մատուսցեն զպատարագն։ և քրիստոնէից այս է պատուէր իմ, ՚ի մահ սիրելւոյ իւրեանց հե թանոսաքար մի՛ լայցեն. և մի՛ կոծ դիցեն 'ի վ՟ր մեռելոյն. կամ սեաւ զգեցցին. իսկ եթէ 'ի թաղումն կանայք ղողանջեսցեն իբրև զայլազգիս, ընդ անիծիւք լիցին. ըստ կանոնին բարսղի՝ և լուսաւորչին. ո՟ք հրամայեն թէ այնպիսիքն ընդ խաչահանուանն են։ և քհանայքն թէ այնպիսի թաղումն արասցեն, առանց պատժոյ մի՛ մնասցեն. և հնազանդօղքն օրհնին յա՟յ և 'ի մէնջ. և անհնազանդքըն՝ կրկին պատիժ կրեսցեն։ բայց դուք սիրելիք՝ ջանք արարէք, զի մի՛ միով իւիք պակաս գտանիցէք. զի զա՟մ պատուիրանս պահելով՝ օրհնու՟ե արժանի գտանիցէք։ քանզի՝ և տ՟ր աւետարանն ասէ, թէ որ զպատուիրանս իմ պահէ՝ նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա. և երևե ցուցից նմա զիս. զոր ինքն տրն մեր յս քս կարողացուսցէ պահել զօրէնս իւր. սիրել զինքն, և սիրել ՚ի նմանէ. և ՚ի հանդերձելումն իւր ածային տեսլեանն արժանաւորս արասցէ զձեզ հանդերձ ծնողօք և ամ մերձաւորօք. պահեսցէ տէր ած զձեզ ամ հաւատացեալ քրիստոնէիւք.

ամէն։

՚Ի Կանոնաց սրբոց հայրապետաց [illegible]

Արուագիտաց և անասնագիտաց, և որ ընդ կինն ոչ սոդոմայեցիսն գործէ զմեղս, միապէս է կարգ նց. և որքան ամաց է գործեալ ըզչարին, նոյն չափով ապաշխարեսցէ. Կոյսն որ շնայ՝ երեք, ամ ապաշխարեսցէ։ և որ կին ունի շնայ, և որոյ կինն շնայ՝ եօթն, ամ ապաշխարեսցէ ։ Եւ որ ակամայ մարդ սպանանէ՝ հինգ , ամ ապաշխարէ ։ եւ որ կամաւ սպանանէ՝ յիւր կենդանութ՟են ապաշխարէ ։ եւ որ զանձն շօշափէ՝ եւ զսերմն հանէ՝ կէս ամ ապաշխարեսցէ ։ եւ Թէ քահանայ՝ վեց ամ չունի իշխանութ՟ի պատարագ մատուցանել ։ եւ որ զկին համբուրէ , եւ հոսէ՝ քառասուն օր ապաշխարէ ։ եւ որ կին տեսանէ , եւ հոսէ ՚ի ցանկութ՟են՝ տասներկու օր ապաշխարէ ։ եւ որ տղայոց պսակ դնէ ․ որք չեն ՚ի չափ հասակի , նա ունի եպիսկոպոսն իշխանութ՟ի քակել զպսակն զայն ․ եւ զքահանայն պատժել , ո՟ր եւ կամի ։

Քահանայն որ յայտնէ զխոստովանութ՟ին՝ լուծցի ՚ի կարգեն ։ քահանայն որ վ՟ս կաշառաց եւ վ՟ս չարկամութ՟ե եւ կամ ատելութ՟ե թողու զհիւանդն՝ եւ նա անհաղորդ

մե_

մեռանի՛ լուծցի՛ 'ի կարգէն։ Դարձեալ՝ 'ի մէկ աման մուկն անկանի և չսատակի։ Նա՛ յամանէն ինչ կայ 'ի մէջն՝ վաթէ և լուա՛, զամանն մի՛ կոտրեր։ ապա թէ սատակեցաւ՞ 'ի մէջն՝ զամանն կոտրէ, և զինչ կայ 'ի ներսն վաթէ։ Դարձեալ՝ որ մայրն տղային՝ զտղայն ակամայ սպանանէ՝ եօթն ամ ապաշխարէ։ և թէ կամա՛ն սպանանէ՝ տասն ամ ապաշխարէ։ և տղայն թաղեն խաչիւ՝ որ քրիստոնեայ է։ Դարձեալ՝ ա՛յս է վարք քահանայից։ զի պա՛րտ է ա̅մ ոք որ քահանայ է, և կամ լինելոց է, ա՛յս վարուցս հետևել։ այսինքն՝ որքու̅ ապա սովո՛րել մարմնոյ և արեանն ք̅ի։ գետնատարած յանկողնովք, աղօթիւք և տքնու̅թ միշտ խորհիլ զբարին, և յայտնել զհաճոյսն ա̅յ մարդկան։ զի մի՛ դայթակղեսցին ժողովուրդքն։ այլ և տալ զանձն

օրի

օրինակ բարի ա͞մ ժողովրդեան. զի կարիցեն ասել, թէ ահա՛ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ տ͞ր. ապա թէ ո՛չ՝ չէ պարտ եպիսկոպոսին 'ի քահանայութ͞ի կոչել զայնպիսին. Դարձեալ՝ ծոյլքն, պղերգքն, հպարտքն, ամբարտաւանքն, բամբասողքն, ստախօսքն, որովայնամոլքն, արբեցողքն, փառասէրքն, գինէհարքն, ագահքըն, յափշտակողքն, ժողովըրդեան տոկոսառուքն, մի՛ իշխեսցեն առնել զպատարագս. Դարձեալ՝ ևս առաւել ո՛վ ոք ունիցի խէթ ընկերի իւրոյ՝ և ո՛չ երթեալ նախ հաշտիցի, ո՛չ է պարտ նմա մերձենալ 'ի սրբութիւն, և պատարագ մատուցանել. և որ հակառակն գործէ, նա զմահն յուդայի առցէ. զի թէպէտ և ընդ փոքր ինչ յանցանօքն իցէ, եթէ ո՛չ խոստովանի և ո՛չ ապաշխարէ՝

ո՛չ է ապրելոց 'ի գեհենոյն. զի փրկիչն մեր ք͞ս ասաց թէ՝ որ ասէ ցեղբայր իւր մորոս կամ յիմար, պարտաւոր լինի գեհենին. Դարձեալ՝ քահանայն որ պատարագ առնէ՝ պարտական է զա͞մ կարգեալ աղօթս անխափան կատարել. զերեկոյեայ և զառաւօտու կարգն, և ապա հոգալ զմարմնաւորն. և մի՛ նզովս կամ աղտեղի բանս հանցէ 'ի բերանոյ իւրմէ. մանաւանդ՝ յորում աւուր զպատարագն մատուցանէ. և զձեռս անարժան տեղի մի՛ լուասցէ. և զաղտեղի տեղ մի՛ շօշափեսցէ. և մի՛ ագահեսցէ 'ի կերակուրն. և մի՛ անհոգ 'ի քուն լիցի. և մի՛ զոք բամբասեսցէ. եթէ գործէ զհակառակն՝ 'ի ներքոյ պատժոց եղիցի. Դարձեալ՝ ո͞չ քահանայ մի որ պատարագէ և արբենայ, և փսխէ. այպէս և հաղորդած լինի ոք, և փոխէ· վէց ամիս պահօք և աղօթիւք ապաշխարէ։ և զայն որ արտաքս ձգեաց, թաղեսցեն զնա։ Պարծեալ՝ քահանայն որ արբենայ յայն օրն՝ յորում պատարագ մատոյց, քառասուն օր ապաշխարէ։ ապա թէ յայլ օր արբենայ, ութն օր ապաշխարէ· և աղօթք մի՛ արասցէ· և մի՛ այլ արբեսցէ· և թէ յամէ յարբեցուէ՟ և ո՛չ դարձցի՝ լուծցի օրինօք ՚ի կարգէն։ Պարծեալ՝ զմեռոնն մի՛ իշխեսցէ ՚ի պէտս դեղոց մերձեցուցանել· կամ յականջս· և կամ յակռայն· և որ յանդգնի՝ նզովեալ է։ Պարծեալ՝ քահանային որ երազախորձութի՟ լինի, և թէ ննջեաց ընդ կնոջ իւրոյ, և հա՛րկ լինի հաղորդ տալ, և կամ մկրտութի՟ առնել, որ և այլ քահանայ ո՛չ գուցէ, և ա՛յս հարկս հանդիպի, նա պա՛րտ է կատարել, և զկնի ապաշխարել քառասուն օր. և յաւուրն հարիւր ծունր աղօթք, և կանոն մի սաղմոս. և թէ երազախորձութ լինի 'ի դիւէն 'ի հանդիսի օր և մեծ տօնի, որ ճար չկայ որ տալ քահանայ պատարագ մատուցանէ, ապա պարտ է մատուցանել զպատարագն. զի ժողովուրդն մի' մնասցէ անմասն. և յետոյ քառասուն օր ապաշխարէ. օրն հարիւր ծունր աղօթք, և կանոն մի սաղմոս. Դարձեալ՝ եթէ ձեռնադրեսցէ զոք եպիսկոպոսն՝ քահանայ կամ սարկաւագ, երդեցիկ և չնացող մարդ, որոց յայտնիցին գործքն. և 'ի ժամ ձեռնադրութեն չխոստովանեալ, յետոյ խոստովանեցան. նա ոչ է պարտ ապաշխարել. այլ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարել եօթն ամ, և ապա մտանել յեկեղեցին. դարձեալ՝ եթէ ծնօղքն որ զորդ ւոյն պղծութ՟ին գիտեն, և վասն ամօթոյն կու ծածկեն. նոքա հինգ ամ ապաշխարեսցեն: դարձեալ՝ թէ մէկ կին շնացաւ ընդ եղբօր առն իւրոյ, հինգ ամ ընդ ունկնդիրսն ապաշխարէ. եթէ կին ամուսնացի ընդ առն անօրինի, և թողցէ զպղծութ՟ին, և յապաշխարու՟ի եկեսցէ, երեք ամ ապաշխարեսցէ: եթէ կին զերեսն դեղէ՝ նզովեալ եղիցի. և երեք ամ ապաշխարէ. եթէ տեսանէ ոք որ կինն յղի է և ստիպէ զնա, և ո՛չ խնայէ, և կամ հարկանէ, հինգ ամ ապաշխարէ: կնքաւորք եթէ պոռնկեսցին, չորս ամ արտաքոյ ապաշխարեսցեն. չորս ընդ ապաշխարօղսն. և երեք ամ օրէնս մի՛ առցեն: զխօսեցեալ աղջկունս եթէ ոք յափշտակեսցէ, պա՛րտ է յառաջին ուզողին տալ. ո՛չ է պա՛րտ բռնոտին և դի

ւա

ճահարին 'ի մտաւին աղօթել· ո՛չ է պա՛րտ քահանային զեկեղեցեացն անօթ վաճառել։ եթէ ոք կիւրակէի կամ տօնի, կամ երեւելի ա՛ւուր ամուսնանայ ընդ կնոջ իւրոյ՝ ութն օր ապաշխարեսցէ, եւ ապա հաղորդեսցի։

Սահմանք եւ կանոնք ոմանք, եդեալ 'ի կանոնաց սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի։

Վասն այնոցիկ որ չեն արժանի հաղորդութե՛ան՝ յետոյ ժամուն տացեն հեճանդքն· եւ եթէ ողջասցին՝ ըզկարգն կատարեսցեն զմեղացն, ըստ հրամանի կանոնացն։ Վասն պոռնկաց որ շնան եւ զմանկունս սպանանեն, տասնեւհինգ ամ ապաշխարեսցեն։ վ՟ն խգացելոցն՝ արտաքոյ օրինացն է պոռնկութ՟ի։ չորս ամ ապաշխարեսցեն։ վասն խօսելոյ զաղջիկ առն կին. և զնա թողեալ՝ զքոյրն առնէ. իսկ նա խեղդ արկեալ մեռանի, տասն ամ արտաքոյ, և հինգ օրինօք ապաշխարեսցէ. Միայնօքիկ որք ուխտեցին զինքեանս ա̅յ և ապա անկան ՚ի շնութի և ամուսնացան, է̅, ամ ապաշխարեսցեն և բազում տրօք արժանի լիցին օրինաց. Վասն որ զկինն թողու, և զայլն առնէ, և ապա դառնայ յառաջինն, եօթն ամ ապաշխարեսցէ. Վասն որ ընդ երկու քերցն պոռնկի, և ապա զմինն կին առնէ, երկու ամ ապաշխարեսցէ. Վասն քահանայից որ պոռնկին՝ լուծցին, և տասն ամ ապաշխարեսցեն. Նոյնպէս և սարկաւագունքն ՚ի դպրոց կարգի կացցեն. Վասն որ շնան, և կամին սպանանել. և ՚ի շնորհացն ա̅յ ապրեցան, ութն ամ ապաշխարեսցեն.

վ՟ն որ ընդ հեթանոսի շնայ, ինն ամ ապաշխարեսցէ։ վ՟ն որ զհեթանոսի կին առնէ, և կամ լինի առն՝ չար է։ մանաւանդ՝ եթէ յանհաւատութե՟ կան մնան։ եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն, տասնևհինգ ամ ապաշխարեսցէ։ և զծնունդն ածցէ 'ի հաւատս։ վ՟ն որ կանանց օրինի են, և անխտիր կան և չհամարին ինչ, երեք ամ ապաշխարեսցեն։ վ՟ն այնորիկ՝ որոյ մանուկն մեռանի առանց կնքոյ 'ի ծուլութ՟է, երեք ամ ապաշխարեսցէ։ վ՟ն գողոց, և աւազակաց, և մարդասպանաց, և որ հրով կիզուն, և արիւն արդար հեղուն, և հայհոյեն. տասնևհինգ ամ արտաքոյ, և հինգ ընդ օրինօք ապաշխարեսցեն։ վ՟ն որ յազգականաց կին առնել կամի, մինչև 'ի հինգերորդն մի իշխեսցէ։ վ՟ն որ չարապաշտ է, և հմայ ից և բժժանաց հաւատայ, հինգ ամ ապաշխարեսցէ։ վ՟ս որ ընդ հեթանոսի լինին, և կամ մեղան չեն ընդ նմ՟, եօթն ամ ապաշխարեսցեն։ վ՟ս որ զմահ խորհին այլոց, և ինքեանց դիպեսցի մահն յայլոց սպաննողաց, սպանօղքն տասն ամ ապաշխարեսցեն։ Թէպէտ և արժանի էին սպանեալքն մահու։ վ՟ս կնոջ որ յղի է, և հարկանի յանգէտս յումեքէ, և անցանէ մանուկն, երեք ամ ապաշխարեսցէ։ Որ մուկ անկանի ՚ի գինի և ըմպէ, հինգ օր արտաքոյ ապաշխարեսցէ։ վ՟ս կնոջ որ ընդ արամբ է և շնայ, թէ թողցէ զպղծութի՟ն, եօթն ամ առ դրանն, երեք ամ արտաքոյ, և մէկ ամ ընդ օրինօք ապաշխարեսցէ։ եթէ ոք զքս՟ ուրանայ, և յանցանէ զփրկական խորհրդով, զա՟մ ժամանակս կենաց իւրոց լալով ապաշխարեսցէ , և յետին թոշակին արժանի լիցի · թէ այր և թէ կին ։

Կանոն վասն ծոմուբութոց լուծողէս ։

Եթէ զբանն որ մոռանայ խորհրդոյն, կրկնէ զայն տեղին երեք անգամ, մինչև յիշեսցէ՝ չկայ վտանգ · ապա թէ սովորութի՟ առնէ և անփոյթ արասցէ՝ զպատիժն յուդայի կրեսցէ ։ եթէ ոք գրաստանայ իւր կամա՛ւն յեկեղեցւոջն, ամ մի ապաշխարէ · ապա թէ ակամայ՝ օր մի ։ եթէ ՚ի ս՟բ խորհրդոյն ձապաղէ ՚ի վ՟ր ս՟բյ սեղանոյն, քառասուն օր արտաքոյ ապաշխարէ ։ եթէ սակա՛ւ մի ցօղեսցէ՝ ութն օր ։ ապա թէ առ ատն կաթէ ՚ի ս՟բ խորհրդոյն, վաթսուն օր կարգէ, որն մէկ կանոն սաղմոս ասէ · և յիսուն ծունր ազօթք առնէ. իսկ եթէ խորհուրդն ա՟մ ՚ի վայր հեղու, երեք ամ ապաշխարէ. բայց ապաշխարու՟թ ըստ հասակին դիր. տե՛ս թէ ազատ է, տխմար է, թէ կատարեալ է հասակն. բայց զտեղին ուր հեղաւ՝ մաքրեսցեն այլ քահանայքն ընդ ս՟բ սեղանովն. եւ թէ ցամաք մասն անկանի ՚ի վ՟ր ս՟բ սեղանոյն, որ մի ապաշխարէ. ապա թէ ՚ի գետինն անկանի, քառասուն օր արտաքոյ ապաշխարէ. եւ թէ գանկեալ մասն ո՛չ գտանիցէ, մէկ տարի արտաքոյ կացցէ.

Եթէ ՚ի ս՟բ խորհրդոյն ՚ի քո հանդերձդ հասանի՝ կտրէ, եւ եկեղեցւոյն ծերպն ծածկէ. հանց՝ որ մուկն չհասանի. ապա թէ ՚ի ս՟բ խորհուրդն մուկ հասանի, ութն օր ապաշխարէ. եթէ ձիձու, կամ ձանձ, կամ մծեխ, կամ մազ, զինչ եւ իցէ որ ՚ի ս՟բ խորհուր դըրն գտանիցես, հա՛ն և ցամաքեցո՛. և յեկեղեցւոյ ծերպան ծածկեա՛լ ամուր՝ որ մուկն չհասանի. Յորժամ յեկեղեցւոջն առնել ածես՝ և անկեալ մնան գտանես, պահեա՛ ուր և կարես. և՛ի յսկիհն մի՛ դներ. և՛ի ժամ ճաշակման ճաշակէ. և ով որ ընկեցեալ է զմասն՝ ութն օր արտաքս ապաշխարէ ։ Յետ ութն օր՝ զխորհուրդն փոխեա՛. և յորժամ կամիս փոխել՝ զհին մասն 'ի յսկիհն մի՛ դներ. այլ նոյն աւուրն և՛ի ճաշակման ժամուն՝ ճաշակեա՛ զհինն. եթէ ժամարարն որ յայն օրն ժամարարէ. և կամ թէ որք 'ի հաղորդելոց ննջէ, և փորձի 'ի դիւաց երազով. եթէ իւր կամաւն լինի, ութն օր կարգ է. ապա թէ՝ ո՛չ կամաւն առնու քուն զինքն՝ յենլով ուրեք՝ և յափշտակեցաւ 'ի քնոյն և դիպեցաւ, երեք օր կարգ է ։

[illegible]

Յայսմ վայրի [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible].

Ի միոյ հօրէ երկու եղբարք՝ միապէս բովանդակ զարիւն հօրն իւրեանց յինքեանս ունին. և նց̃ որդիքն զկէսն արեանն. և Թոռունքն զկիսոյ կէսն. և ՚ի յորդիս Թոռանցն՝ սպառեալ հատանի չորրորդ մասն արեան. զի ըստ չորից տարերացն պարտին հեռանալ ՚ի միմեանց՝ որ ամենեւին սպառի արիւնն ազգականութե̃. և ապա դարձեալ խնամենալ, որ չլինի արեան մերձաւորութ̃ի.

Այլ կնքահայրութ̃ին է հոգեւոր ազգակցութ̃ի՝ վ̃ն այն յերեք ազգն անցանի. զի հոգին եռամասնեայ է. և չէ ո̃պ զմարմինն՝ ՚ի չորս տարերացս. վ̃յ յերեք պորտն անցանի։ Իսկ խնամութի՟ն ևս՝ ո՛չ է պարտ մինչև 'ի չորրորդ ծնունդըն առնուլ։ վ՟ զի մարմինն 'ի չորից տարերցն է. և 'ի չորս ծնունդըս փոխին չորս արիւնք տարրականք ըստ այսմ օրինակի։ Զի եղբայրն և քոյրն ունին զբոլոր արիւն ծնողին. և ն՟չ որդին որ է՛ թոռն հօրն՝ ունի զկէս արեանն։ և թոռին որդին զերրորդ մասն։ և թոռին թոռն զչորրորդ մասն։ Ա՟յ աստ վճարեցաւ արիւնն և ազգն. յետ նոցա 'ի հինգերրորդ ծննդեանն կարողանան ամուսնանալ. բայց չլինի թէ մէկ մօր կաթն կերեալ լինին հարսն և փեսայն. և թէ կերեալ են, ուրեմն որդեգիր եղեալ է փեսայացուն. չկարէ նմա փեսայ լինել. ո՛չ դստերն՝ և ո՛չ քուերն. և ո՛չ կնոջ հօրն և ո՛չ հօր քեռն. զի ոպ՟ մայր և ազգակցութ՟ է որդեգրին։ Իսկ թէ 'ի մօր դիհացն երեք լինի անցե՟լ պորտ՝ կու հասնի փեսայանալ. և թէ քան զայս պակաս լինի, և առնուն՝ 'ի ո՟րց հայրապետացն յանեծքն և'ի բանադրանքն մատնին այնպիսիքն։ Մարդ՝ զոր գրեմքս՝ 'ի հրամանաց առաջին ո՟ր հարցնէ. մի' իշխեսցեն ազգականք ամուսնու՟թ զուգիլ. ապա թէ ոչ՝ նզովեսցին յա՟ծաշունչ գրոց, և'ի ո՟ր հարցն կանոնաց. և ինքեանք տացեն պատասխանի ա՟յ 'ի յահագին օրն նո՟ր դատաստանի։ և թէ ազգականքն ամուսնացեալ իցեն, զի՞նչ պարտ է առնել. քակել արժանի է 'ի միմեանց. և ծանր ապաշխարու՟թ 'ի վե՟ր դնել. զի այն չէ ամուսնու՟թ, այլ յարակայ պոռընկու՟թ. և ընդ անիծիւք արարչին և ա՟ծաշունչ գրոց։ և թէ ոք բռնու՟թ և աչառանօք առնուցու կին 'ի մերձաւորէն իւրմէ՝ 'ի վայր քան զչորս և զհինգ պորտ, նզովեալ եղիցի յա̃ծային գրոց և 'ի մէնջ. և առաջնորդք ժամանակին՝ մեկնեսցեն զնա̃ 'ի միմեանց. և վ̃ն պսակին անարգելոյ՝ հարիւր դրամ տացեն յեկեղեցին, և երեք ամ առ դրան ապաշխարեսցեն։ այլ վարդապետքն եկեղեցւոյ և եպիսկոպոսքն իշխան են եկեղեցւոյ, ո̃պ կամին՝ այնպէս արասցեն։ բայց ըստ կամացն ա̃յ առնիցեն, և ո՛չ ըստ կամաց մարդկան, և մարդահաճաւե̄ և երեսաց։ և թէ փեսայն տղայ լինի և ծնօղքն նեղեն՝ թէ պիտի որ տղայս պսակի. նա հարսնացուն տասն ամաց լինիլ հարկաւո՛ր է՝ որ պսակի. և ապա պսակն կատարեալ է. և թէ ո՛չ՝ չէ՛ կատարեալ պսակ։ ապա թէ քան զտասն տարի պակաս լինի աղջիկն և պսակիցեն՝ ընդ անիծիւք են ըստ ա̃ծաշունչ գրոց, և կանոնաց սբ՟ հարցն. որոց օրինօքն՝ տասնևչորս տարոյնէ հարսին պսակ, և փեսային՝ տասնևհինգ տարույ. և վ՟ն ժամանակիս դառնու՟ն, զերկու տարին պակասեցուցին վարդապետքն մեր. և մեք վ՟ն ծնողաց աղաղակին պակասեցուցաք զերկու տարին ՚ի յաղջկանէն, և զերեքն ՚ի կորիճէն; որ լինի փեսայն տասներկու տարույ, և հարսն տասն տարույ; և որ զպսակէ՟ն կրկին պսակէ՝ գրէ սբ՟ն Սահակ թէ ընդ նզովիւք սբ՟ հարցն է; Արդ՝ պա՛րտ է որ փեսայն և հարսն յառուր պսակին հաղորդութեան արժանի լինիցին. և պսակօղ քահանայն արբեալ մի՛ լինիցի. զարբեալսն և զանառակ կանայսն յեկեղեցին մի՛ թողցեն. և պըսակն յառաւօտէ. մինչ ՚ի ճաշն արասցեն յանօթուց. և յետ պսակին պատարագ մատուսցեն, զհարսն և փեսայն հաղորդեսցեն. և մինչ 'ի յերեք օր՝ անկողնոյ հրաման մի՛ տայցեն։ Այլ այնուհետև փեսայն և հարսն զանկողինս իւրեանց ը՟ պահեսցեն, զի երկոքին մարմին մի են. ը՟ հրա՟նի փրկչին թէ՝ եղիցին երկոքե՟նն 'ի մարմին մի. Քահանայն ուսուցանէ պահել զուրբաթն և զչորեք շաբաթն. և զա՟մ տէրունական տօնս. և զաղուհացսն. վ՟ն այն յամէն օր պսակ չէ դրուեր. զի հրաման չկայ անկողնոյ. և որ ոք յայս աւուրքս պսակ դնէ՝ ընդ անիծիւք երեք ժողովոյն է, և հակառակ ա՟յ։ և որ 'ի կիրակէ 'ի կին մերձենայ՝ եօթն օր ապաշխարէ. և թէ սովորու՟ե, ընդ անիծիւքն է. և որ զհալալ այր և զկին բաժանէ՝ յիւր հաւատոյն բաժանեալ է։ Արդ՝ սահմանի յայսմ վայրի ազգականութ՟ին ՚ի Յակոբայ Պատրիարգէ՝ (առեալ ՚ի յակոբայ վարդապետէ ղրիմեցւոյ զոր խնդրեաց Թօմայ վարդապետն) որ և արիւնակցութ՟ին է կապ անձանց ՚ի նոյն արմատոյ իջելոց մարմնաւոր ծննդեամբ։ Արդ՝ կապն ՚ի տեղի սեռի նշանակէ զարիւնն. այսինքն՝ զեղբարսն և զքորսն. արմատն նշանակէ զհայրն. իջեալքն զմերձաւոր և զհեռաւոր ՚ի նոյն արմատոյ զբղխեալսն։ Նաև զի ա՟մ միաւորութ՟ի և սիրելութ՟ի ՚ի ձեռն նմանութ՟ե եղանի. իսկ ազգակիցքն առաւել նմանին իրերաց ՚ի ձեռն արեան մերձաւորութ՟ե. որքան առ արմատն իցեն հպաւորագոյնք. և վասն այնորիկ առաւել սիրեն զիրեարս. ո՟պ ոգին Յակոբայ արծարծեցաւ ՚ի վ՟ր յովսեփայ. և հռաքուէլ վ՟ն տօբիթայ ասաց առ հեգնա կինն իւր խանդաղատելով. Թէ նման է պատանեակս տօքսիթոյ եղբօր որդւոյ իմոյ։ Այլ ո՟պ ա՟մ բարեկամու՟ի ՚ի ձեռն հասարակութ՟ե իմն եղանի՝ ո՟պ ՚ի մէջ քաղաքակցաց և զինուորակցաց. նմանա՟պս և առաւել ազգականութ՟ին ՚ի ձեռն արենակցութ՟ե։ ուստի հայրն զորդին առաւել սիրէ վ՟ս համազգութ՟ե նոյնութ՟ե բնութ՟ե։ իսկ աստիճանաւ իւիք պակաս զթոռունս, և զորդիս ն՟ց, և զթոռանց թոռունս, մինչև ցեզերել արեանն ըստ տարբերացդ հաշուի։ զի յորդին գոյ լինու՟ի գոյացու՟ե իւրոյ. իսկ առ թոռն միջաբար. նմանապէս և յայլս։ վասն այնորիկ ՚ի վերոյ եդեալ սահմանի կայն ՚ի տեղի սեռի, որ նշանակէ զարիւնն. որ յարմատոյն ՚ի հօրէ իջանէ առ ուստս. այսինքն՝ առ որդիսն. որք իջանեն մարմնաւոր ծննդեամբ. զի ըստ Կլայեցւոյ և այլոց սրբոց հա՛րց ազգակցութիւնն մինչև 'ի չորրորդթի՛ւն ժամանէ. ըստ Թո՛ւոյ տարերց։ զի 'ի միոյ հօրէ երկու եղբարք բաժանեալք՝ հաւա՛սար ունին զհօրն գոյացութիւն։ իսկ առ 'ի նոցանէ ծնեալքն, զկէս արեանն. և երրորդքն, զկիսոյն կէս արեանն. և չորրորդքն, զչորեակ մասն արեան մնացելոյ. Յորս եղերի արիւնն. և 'ի նոցանէ ծնեալքն՝ առնուն զիրեարս. որպէս 'ի վերոյ ասացա՛ւ։

Հայր		Մայր
	Որդի. Չէրոդրելոց	
Եղբայր	չխնամենան	Եղբայր
Թոռն	չխնամենան	Թոռն
Թոռնիա	չխնամենան	Թոռնիա
Թոռին Թոռն		Թոռին Թոռն
	խնամենան	

Հինգերորդքն Հինգերորդքն տանուն զիրեար։

Քանզի եղերեալ արեան մինչև ՚ի չորրաական ազգս երկուց եղբարց, այնուհետև աստիճանաւ արեան հեռացեալք համազգիք կոչին. որք ըստ արեան եղերեալք, սկսանին համազգութ՟ բարեկամանալ. և զսէրն ազգականութե՟ ՚ի սէր խնամութե՟ փոխարկել, և սիրել զիրեարս. և վասն այնորիկ ազգակցաց խնամենալն արգելանի ՚ի կանոնս ս՟բց հարց. ո՟չ զի համազգութ՟ խնամենայցեն. և սէրն զօտարսն ընտանեցուսցէ և տարածեսցի. տես ՚ի տուփոդ։ Նա՛ զի ՚ի բնական իրաւանց ամուսնութե՟ն արգելանի ըստ ոմանց աստիճանաց։ Նա՛ բնական օրէնքն է ընդաբոյս իմն լոյս. որով ամ՟քն դիւրապէս և առանց հակաճառու-

Թե՟ ստորասեն և համաձայնին 'ի նոյն միտս և 'ի նոյն կարծիս, սակս բարեպէս կենցաղավարելոյ· այսպէս ա՟մքն: և արիստոտել վկայէ, թէ ա՟ծ և ծնօղքն՝ բնականաբար սիրելիք են. և թէ ասէ ոք՝ թէ արդեօք արեգակն լուսաւո՞ր իցէ. ո՛չ է պա՛րտ պատասխանել. այլ զակն իւր լուսաւո՞րել. և թէ հարցանէ ոք՝ թէ գո՞յ ա՟ծ. ո՛չ է պարտ այնպիսւոյն պատասխանել. զի անբարիշտ է: նմանապ՟ս ըստ ոմանց ստորիձանաց ազգականութ՟ին այնպէս արգելանի բնական օրինօք, մինչ զի՝ և հարցանելն անզգամութ՟ի է: սակայն՝ զի չարն գիտացեալ և ո՛չ կամեցեալ՝ ո՛չ է չար. ո՟պ և բարին միայն խորհեցեալ՝ ո՛չ առնէ զոք բարի: զի և խորշին յայսմանէ ոմանք 'ի յանբան կենդանեաց. ո՟պ ուղտն 'ի մերձենալն առ էգն: ուրեմն ևս առաւե՛լ բա‿

նա‿

նական կենդանիքն։ և այս՝ թէ արգելանի ՚ի բնական իրաւանց ազգականութ՟ի ըստ ոմանց աստիճանաց։ Իսկ թէ վ՟ն էր յերկուց կողմանց ուղիղ և կողմնական գըծին և թուին չորսական աս՟նք. և հինգերորդքն առնուն զերեարս. քանզի ըստ փիլիսոփայից չորս տարերքն մի քան զմի անոսրագոյնք են. ո՟պ հուրն քան զօդ. օդն քան զջուր. ջուրն քան զհող։ Արդ՝ ՚ի միաւորութ՟ե հօրն և մօրն ՚ի ծնունդ զաւակին, յայն ժամ նոյնութ՟ի արեանն ոչնչանայ ըստ առաջին տարերն հրոյ. զի է յոյժ նրբագոյն։ իսկ յերկրորդ խառնումն որդւոյն ՚ի ծնունդ թուինն, ոչնչանայ օդն. ՚ի ծընունդ ծագ թուինն՝ ոչնչանայ ջուրն. և ՚ի չորրորդ ծնունդ այսինքն, թոռն թոռանն՝ ոչնչանայ հողն. և յեզերիլ տարերացդ՝ հին գերրորդքն առնուն զիրեարս․ սոյն կարգ պահելի է և՚ի կարգ խնամութ̃․ որ̃պ ասէ գօշ մխիթարն, կիրակոս վարդապետն, և զըմցի յակոբ վարդապետն․ մի՛ ոք ասեն իշխեսցէ առնել խնամութ̃ի, մինչև հինգերրորդ զարմ․ իսկ զերրորդ ծնունդն զոր հռ․մյեն չխն․մենալ՝ յայտէ թէ չորրորդին հրաման տան․ և որ առնու՝ լինի հինգերրորդ․ և թէ օրէնքն մովսէսի ասես թոյլ տալ․ ասեմ թէ նորա օրէն̃՝ վ̃ս արգելելոյ և չիջուցանելոյ զհուր ցանկութ̃ն՝ արգել ՚ի բազում աստիճանս․ և թոյլ ետ ՚ի ներեցեալ աստիճանս միայն հպիլ․ զի հոգևոր և սիրոյ օրէն է․ ուր քարոզի առաւել համեստութ̃ի, արգել զբազումս․ զի սէրն մի՛ ՚ի մէջ արենակցացն միայն տարածեսցի, որք բնականաբար սիրեն զիրեարս․ այլև մանաւանդ

՚ի մէջ համազգեաց․ զի այժմ հոգևոր ծննդեամբ պաշտօնն ա՟յ յաճախի և բազմանայ։ այսքան վասն մարմնաւոր ազգականութե՟․ անցցուք ՚ի հոգևորն ազգականութիւն․

Յաղագս հոգևոր ազգականութեան․

Կնքաւոր են

Յակոբն	և	Թորոսն
Որդի	չխնամենան	Որդի
Թոռն	չխնամենան	Թոռն
Թոռնիայ	խընամենան	Թոռնիայ
Ծագթոռնիայքն		Ծագթոռնիայքն

առնուն զիրեար

Զի երեք գլուխ են՝ որ ՚ի կընքաւորացն մինչև ՚ի յերրորդ տուփին իջանէ․ և աստ ահա վըճարեցաւ հոգևոր ազգականութին․ սոքա խնամենան ընդ միմեանս․ և սոցա տղայքն առնուն զիրեար՝ որ է ՚ի ներքին չորրորդ տուփին․ այսինքն՝ ծագ թոռնիայքն․ վա՟յ պա՛րտ է ոպ̃ 'ի հոգևոր ծնողէն, այսինքն՝ 'ի կնքահօրէն մարմնաւոր որդիքն մինչև 'ի երեք գըլուխ իջանեն. նոյնպէս և 'ի սանահօրն կողմանէն լինիցին. և չորրորդքն առնուն զիրեար ըստ դրոշմելոյ տիոյդ. Բա՛յց դիտելի է. կնքահայրն որքան սան ունենայ, ամենեցուն ծնող է. և սաներն նմա հոգևոր զաւակք են և միմեանց հոգևոր եղբարք. սոքա չխնամենան. և որդիք սաներուն, և թոռնիայքս սաներուն՝ խնամենան. և թոռնիայինքն առնուն զիրեար. այնպէս և եղբարք և քորք սաներուն ո՛չ խնամենան. զի ոպ̃ սաներն միմեանց հոգևոր եղբարք են, և քորք. նմանապէս մարմնաւոր եղբարքն և քորքն սաներուն, միջնորդութ̃ եղբարցն և քերցն իւրեանց՝ եղեն միմեանց հոգևոր եղբարք և քորք. վ̃յ և սոցա թոռունքն խնամենան. և թոռնիայքն առնուն զիրար. թէ ՚ի հետ միմեանց տղայոցն, և թէ ՚ի հետ եղբօր և քուեր սանակից տղայոցն. Իսկ թէ ոք ասիցէ տխմար մտօք, թէ իմ կնքաւորն զայլ օտար մարդոյ տղայն սան առեալ է. ես ո՛վ եմ, և նա ո՛վ. որ զիմ կնքաւորի սանն՝ իմ տղին չառնում. Ասեմք թէ ոչ օտար են հարսն և փեսայն ՚ի միմեանց, նոյնպէս և ընտանիք նորա. բայց միաւորութեամբ հարսին և փեսային, եղեն օտարքն միմեանց ընտանիք և ազգակիցք. ուստի ըստ երից մասանցն հոգւոյն՝ երեք տփով զուգեցաւ

խորանդ. և այսորիկ
՚ի յօգնութիւն առաջնորդաց և
քահանայից
դրոշմեցան.

Խրատք օգտակարք 'ի յօհաննու եզնկաց-ւոյ վարդապետի ։

Յաղագս բարեպէս սնուցանելոյ ըն-տղայս ։

Պարտ է ամ͞ քրիստոնէի սրբութ͞ սնուցանել զիւրեանց տղայսն . և զգուշ լինել՝ 'ի մկրտութէ մինչև 'ի կատարեալ հասակն . զի յորժամ զգայ՝ զխաչ հանելն ուսուցանեն . և երբ 'ի յոտն ելանէ՝ զծնրադրութին . երբ 'ի խօսիլն ելանէ՝ զհաւատոյ խոստովանութին ուսուցանեն . զայն որ կնքահայրն ասաց 'ի ժամ մկրտուէն , ուսուցանեն որ իւր բերանովն ասացէ մանուկն . հաւատամ 'ի հայր , հաւատամ 'ի յորդին , հաւատամ 'ի հոգին ս͞բ , և զայլն ա͞մ անթերի ։ յեօթն տարւոյն 'ի վեր՝ զխոստովանութե խորհուրդն ուսուցանեն . և ա͞մ զգուշութ͞բ պահեսցեն ծը ծնօղքն զա՛ւակունս իւրեանց, զի մի՛ լու՛եալ և տեսեալ զմեղսն, և ուսանիցին գործել զայն. և ծնօղքն լինին պարտական չարեաց նոցին՝ յատենին ք̅ի։ զի տղայական միտքն ո՛չ յատակ հայելի է. ո՛չ է պա՛րտ անխորատ թողուլ. զի մի՛ ժանգ մեղացն նստեալ 'ի վ̅ր ապականեսցէ. կամ իբրև կակուղ մոմ է. արժան է բարի ուսման կնքոյն կնքել, զի մի՛ օտար և վատթար կերպարանս յինքն ընկալցի. և կամ որպէս յատակ ակն է աղբեր. ո՛չ է պարտ թողուլ որ գա՛ն և աղտաղտուկ ջուր 'ի ներքս խառնի. այս է, երգգուսանաց, աղտեղի խօսք, և անպատեհ իրաց տեսութիւն սպրդեալ յըզգայարանս, և անտի 'ի միտս, որք ապականեալ խուճապէն 'ի մեղս և անընդունակ բարուոյն առնեն զնոսա։

ՈՎ տոն գողութեան և այլոց։ ՚Չէ պա՛րտ քրիստոնէին գողանալ զինչս․ զի հակառակէ ա՟յ, և ե՟բց անհնազանդ, և ա՟մ մարդկան ատելի․ զի ասաց ա՟ծ ադամայ՝ քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո։ զի որ այլոց վաստակին գողանայ, հակառակ է հրամանին ա՟յ․ զի հրամայէ մարգարէն դաւի՛թ ասելով թէ, զգործս ձեռաց քոց կերիցես․ երանի է քեզ և բարի եղիցի․ զի գողն ամէն մարդոյ թշնամի է․ որ իբրև զմուկ ՚ի յորմըս և ՚ի գարշ տեղիս շրջի․ փասատու ամենեցուն, զխաւա՛ր սիրէ քան զլոյս․ զի մի՛ յանդիմանեսցին գործքն ն՟ց ըստ ա՟ն հրամանի․ զի իւր կամքն այն է, որ թէ կարէր՝ զամէն մարդոյ ինչքն և ապրանքն կու գողանայր․ բայց վ՟ա անկարութե՟ն խափանի․ վ՟յ ո՛չ կարէ գողանալ։ զի գողուի̅ն երեք ազգ է. են՝ որք աւազակք են և ՚ի լերինս և ՚ի ճանապարհս կողոպտեն զմարդիկ. և են՝ որք յայգիս և յանդաստանս պտուղ գողանան. և են՝ որք ՚ի վաճառս գնոյ և ծախու առնուն աւելի և պակաս. զի այդ ա̅մ գողուի̅ է և չար, ա̅յ հակառակ է և մարդկանց ատելի. և թէ դառնայ զղջայ և ապաշխարէ, և տէրն տայ թողուի̅։ և թէ չդառնայ յիւր սովորական մեղացն, ՚ի դժոխն մատնի և ընդ սատանայի տանջի ՚ի հուրն յաւիտենից։

Վասն սուտ երդման։

Ո՛չ է պարտ սուտ երդնուլ. զի քս̅ հրամայէ ասելով թէ՝ ամենևին մի՛ երդնուլ. թէպէտ և իրաւ ևս իցէ՝ չկայ հրաման. ապա պատժոց արժանի է որ սուտ երդնու ։ Եւ երեք են տեսակք երդման . է՝ որ վկայական կոչի . որ ասի, ա՟ծ վկայ է, և այս կարի սոսկալի է . որ զերկինս և զերկիր արարչի անուանն ՚ի վ՟ր իրաց սուտ վկայ կու կոչեն ։ Երկրորդ երդումն՝ ուրացականն է . որ ասէ, թէ զա՟ծ ուրացեալ է ։ և այս մեծ անօրէնութի՟ է որ խուրով բերանովն ուրանայ զա՟ծ . զի ասաց տէրն մեր յ՟ս ք՟ս թէ՝ որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնմանէ առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է . վ՟յ ս՟բն բարսեղ ՚ի կանոնսն իւր ասէ . եթէ ոք երդնու ուրացութ՟ե, տասնևհինգ ամ ընդ ունկնդիրան կացցէ . և մեկ ամ առ դրանն . և ապա հաղորդեսցի ։ Երրորդն է խոստովանական երդումն . յոր ժամ ասէ, ա՟յ փառքն որ այսպէս է .

է. կամ ասէ թէ՝ խաչիս և ա՛ւետարանիս փառքն։ Արդ՝ յորժամ հա՛րկ լինի քրիստոնէին և երդումն հատանի՝ յեկեղեցին և քահանային միջնորդութ՟ն (եթէ ուղղորդ է բանն և հոգւոյ շահ և արեան փրկութ՟ի կայ՝ յայնժամ զվկայական երդումն միայն թոյլ տան՝ և այն ո՛չ առանց ապաշխարութ՟ե լինի։ բայց այնոքիկ որք սովորաբար սուտ և յերդնուն ՚ի փողոցս և ՚ի հրապարակս զահագին անուանն ա՟յ վայրապար յիշեն՝ այնպիսիքն թէ ո՛չ դառնան ՚ի չար սովորութ՟էն, մեծ և սաստիկ և դառն պատուհաս կրելոց են յարդար դատաստանէն ա՟յ։

ՅՈՂԱԳՍ ՍՈՒՏ ՎԿԱՅԻՑ։

Պա՛րտ է քրիստոնէին ատել զսուտ վկայողն, որք անամօթաբար սուտ վկայութ̃ն տան, զոր ա̃ծ խօսեցաւ ընդ մովսէսի, և գրեաց յօրէնսն՝ թէ մի՛ սուտ վկայեր. որ է մեծ անօրէնութ̃ի. Արդ՝ այս է ահեղ և սոսկալի իմն իր, զի զճշմարտութ̃ին, որ ա̃յ անունն է և զարդ ա̃մ իրաց և շինութ̃ի աշխարհի, սուտ վկայն աւերէ և կործանէ զայն. զի զոր ո՛չն ետես, և ո՛չ գիտէ՝ վկայէ. և յետ այնորիկ ընկեր լինի այլոց մեղաց, և հաստատէ զն̃ս 'ի մեղս և'ի չարիսն՝ զոր մեղան, լինելով միանգամայն և ինքն բնակարան սատանայի. ո̃պ սաստ տէրն, որ սուտ խօսի՝ յիւրոց անտի խօսի և հայր ն̃ր սատանայ է. ուրեմն ա̃մ ստախօս որ ո՛չ դառնայ և ապաշխարէ, մտանի ընդ սատանայի 'ի տանջանս դժոխոց. ըստ այնմ թէ կորուսանէ տ̃ր զա̃մսն որք խօսին զսուտ. զի ճշմարտախօս բերանն՝ դուռն է հոգւոյն ս՟բյ· և բերան ստախօսին՝ դուռն է դժոխոց, յոր մտանեն դևքն· վ՟յ կրթեցէք զբերանս ձեր ՚ի ճշմարտախօսութ՟ե

յոր բնակեսցի հոգին ս՟բ·

Ստան յիշոցնատուաց·

պ՟րտէ քրիստոնէին յ՟յս ահեղ և զարհուրելի մեղաց փախչել· և զայս մանէ գեղջուկ բարբառով յիշոցք ասի, այսէ՝ ըստ գրոց սովորութե՟, անէծք և թշնամանք կոչեն· յորմէ խաբեալ և սովորեալ են մարդիկ զչար լեզուն գործարանք սատանայի տալ· թշնամանել հայհոյել և անորգել զմիմեանս, որէ մեղք անքաւելի։ և յիշոցն է չար քան զա՟մ հերձուածս յադամայ մինչև ցայսօր։ իսկ նզովք հերձուածողաց ժողովոյն վ՟ս են· և ո՛չ վ՟ս միմեանց

ուղ

ուղղափառ՟ց. և հերձուած մեծ՝ յիշոցնատուքն են. որ ա՟մ մեռուցե՟լ մեղաց յարուցիչ եղեալ՝ յիշոցք անել տան ա՟յ և ս՟բց, և դողացուցանեն զարարածն ա՟յ. և գարշելի և զազիր հոտով լնուն զերկիր. փակելով ընդդէմ ինքեանց զդուռն ողորմութե՟ն ա՟յ, և արգելուն զս՟բսն ա՟յ բարեխօսել վ՟ս աշխարհի. վ՟այ քրիստոնէական անուանն, և անճառ խորհուրդն հայհոյի. զի այսէ որ ասաց ք՟ս. որ զհոգին ս՟բ հայհոյէ, մի՝ թողցի նմա յայսմ աշխարհի և մի՝ ՚ի հանդերձելումն. զի չէ տուեալ ք՟ս իշխանութ՟ի ումեք թողուլ զայսպիսի մեղս. և այս հայի ՚ի յիշոցնատուն. զի ո՛չ հրեշտակք. և ո՛չ ս՟բք յերկինս. և ո՛չ կաթուղիկոս և եպիսկոպոս, և վարդապետ, և կամ քահանայ իշխէ յերկրի բարեխօսել վ՟ս այնպիսեացն.

սեացն. վ՟ս զի աշխարհիս սաստ՝ լի՛ եղեն բերանք ն՟ց անիծիւք դիւացն. ուստի տանջին ՚ի հուր անշիջանելի գեհենոյն յաւիտենականապէս. և այս կեանքս որչափ կենդանի են՝ ա՟մ մ՟րք նզովեն զն՟ս. զի հայհոյելով դողացուցանեն զաթոռն ա՟յ. և թէ ո՛չ դառնան յիւրեանց չարեացն, չունին իշխանութի՟ քահանայքն օրհնել զայնպիսիսն. կամ հաղորդել և կամ թաղել. ո՟պ ս՟բ առաքեալն հրամայէ ասելով թէ, մի՛ տայք զսրբութի՟ շանց. և թէ տան՝ ինքեանք ն՟ց մեղացն և նզովիցն կցորդ լինին: զի որ զքրիստոնեայն անարգէ, զ՟քս արհամարհէ. զի մարմին ք՟սի և տաճար ա՟յ է քրիստոնեայն. և ք՟ս զիւր անունն է գրած ՚ի վ՟ր մեր ըստ նորեկացուոյն. թէ գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ՚ի վ՟ր ծառայից քոց. որ և քեզ փառք։ Մարդ՝ որ զբերան հայհոյէ. զք՟ս հայհոյէ, և զս՟բ հաղորդութ՟ին. որոյ գերեզմանն է բերանն մեր։ և թէ զս՟բ անբիծ հաւատն, որ է ինքն ա՟ծ, ա՟յ հայհոյէ. և ա՟յ հայհոյիչ գտանի որ զմարմինն, զգերեզմանն, զխաչն, և զաւ՟տրնն հայհոյէ. ուստի զայնպիսին պարտ է ա՟մ ազգն և մօտաւորքն ատեն. և զերեսս դարձուցեն ՚ի նմանէ, իբրև ՚ի պիղծ դիւաց. մինչև դառնայ ՚ի չար սովորութենէ մեղաց. եթէ չդառնայ, նա չունի ոք հրաման զայնպիսի մարդն յորժամ մեռանի՝ թաղել. զի ՚ի մեռանիլն՝ երթայ ՚ի տանջանս յաւիտենական ՚ի հուր գեհեննին. յորմէ ազատէ աստուած զամենեսեան.

ամէն.

Վասն Ատելութեան։

Պա՛րտ է քրիստոնէից չատել զմիմեանս. զի յովհաննէս գրէ. թէ որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է։ զի ասաց տ՟ր յօրէնսն մովսէսի, թէ մի՛ սպանաներ. զի սկիզբն սպանութե՟ն ատելութի՟ն է. զի յառաջ ատէ, և ապա սպանանել խորհի ը՟ս կայէն. և ա՟մ որ սպանանէ զոք՝ զպատիժն կայենի առցէ. և արժանի է անիծից՝ որ մասնակից եղև կայենի. և որ ատէ զիւր հաւատակից քրիստոնեայն, եղբայրասպանէ ը՟ս կայէն. Արդ՝ ողորմեցէք և ՚ի ձեզ խնայեցէք. և մի՛ ատէք զիրեարս. մի՛ խռովէք, մի՛ նախանձիք, մի՛ նախատէք, մի՛ ոխս պահէք, մի՛ մատնէք, մի՛ զրկէք, մի՛ չարախօսէք, մի՛ անարգէք, մի՛ խռով կենայք, մի՛ հարկանէք, մի՛

անողորմ լինիք, մի՛ հակառակիք, մի՛ բարկանայք, մի՛ բամբասէք, զի այս ա՟մ չարութ՟իքս յատելութ՟է ծնանին. մի՛ վ՟ս փոքր իրաց և սակաւ պատճառի՝ 'ի հակառակութ՟ե կայցէք. զի ա՟մ մեղք յատելութ՟է ծնանին։ Արդ՝ զղջացէք յայսպիսի չարեաց գործոց ձերոց. զի ս՟բ աւետարանն հրամայէ ասելով թէ՝ ա՟մ դատարկ 'ի զուր և անիրաւ բանից՝ համարս տալոց են յաւուր դատաստանին։ Արդ՝ այսոքիկ զոր գրեցաք յայսմ բանի՝ հրաժարականք են. զոր ոչ է պարտ քրիստոնէին առնել և գործել. զի այժմ գրեմք զոր պարտիմք ուսուցանել ամենեցուն. զի մեք յայսպիսի մեղացն դառնամք և զղջամք. զի մեծ է մեղքն՝ որ տանի 'ի կորուստ.

Վասն սիրելոյ զընկերս։

Պարտ է քրիստոնէից սիրել զմիմեանս. զի առաջինն է ՚ի պատուիրանս. զի ասաց ա՟ծ մովսէսի, թէ սիրեսցես զտ՟ր ա՟ծ քո. որ մեծ է քան զա՟մ առաքինութ՟ի. զի ա՟մ առաքինութ՟եց այնէ. առանց որոյ ա՟մ առաքինութ՟իք ՚ի հպարտութ՟ի են համարեալք. Եւ տ՟ր աւետարանն ք՟սի ասէ թէ՝ սիրեսցես զտ՟ր ա՟ծ քո յա՟մ սրտէ քումմէ, սիրեսցես եւ զընկեր քո իբրեւ զանձն քո։ Ս՟բ աւետարանիչն յովհաննէս ասէ, թէ զեղբայրդ զոր տեսանես ոչ սիրես, զա՟ծ որ ոչ տեսանես՝ զիա՞րդ կարես սիրել։ Տ՟ր ք՟ս, թէ յայնժամ երեւեսցի թէ իմ աշակերտք էք, եթէ սիրէք զմիմեանս. ո՟պ ես զձեզ սիրեցի։ եւ ք՟ս այնպէս սիրեաց՝ որ զանձն իւր ՚ի մահ ետ վ՟ս քո։ Ապա զինչ տացեն պատասխանի ա՟յ, որք չարախօսեն և մատնեն և զրկեն զմիմեանս. այլ և բազում մասունք են սիրոյ սիրելիք: առաջին և մեծն, ծնօղքն են. որ յետ ա՟յ պատճառք են, զի ծնանին, և սընուցանեն. որով և երկրորդական պատճառ լինին ն՟ց. որոց ա՟ծային դիրք ուսուցանեն զպատիւ ծնողացն. այլ և թռչունք և անասունք եւս՝ բնութ՟բ ուսուցանեն: Նոյնպէս և քահանայքն պարտին սիրել զժողովուրդս իւրեանց իբրև զորդիս. զի հոգևոր ծնօղք են, որ մկըրտեն, պսակեն, խոստովան՟ցուցանեն, և հաղորդեն. և մահն և կեանքն ն՟ց՝ ի ւերեանց ձեռաքն տնօրէնի. և յա՟մ ժամ աղօթս առնեն սակս ժողովրդեան, և ննջեցելոցն ն՟ց. և դուք ժողովուրդք՝ պարտիք քահանայից պատիւ տալ առանց պակասական մնալոյ. չլինի

Թէ ՚ի հասից և յիրաւանց զրկէք զնս՟. որ դատաստանին պարտական կու մնայք, զի ձեզ հոգևոր հարք են։ Ո՞ ո՞վ է որ զա՟ծ սիրէ. յայտէ Թէ օրինապահն. զի ասէ Ք՟ս տ՟րն մեր, որ ունի զպատուիրանս իմ, և պահէ զնս՟, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ՚ի հօրէ իմմէ, և երևեցուցից նմա զիս. ես և հայր իմ ս՟բ հոգւովն առ նա եկեսցուք և այլն. Ո՞ նշանք սիրոյ են այսոքիկ. Սիրելին յօժարութբ՟ լսէ սիրելւոյն. յօժարութբ՟ խօսի զնմանէ. բազում անգամ ՚ի միտ ածէ զնըմանէ. առանց ձանձրութբ՟ ծառայ է նմա. զմարմին իւր և զինչս դնէ փոխանակ նր՟. զգուշանայ ՚ի վիրաւորելոյ զնա, և Թէ վիրաւորեալ իցէ՝ հաշտեցուցանէ զնա, խընդակցի ընդ. յաջողութիւն նր՟. լինի ցաւակից նմա ՚ի ժամանակի նեզութն ։ Խնդայ ընդ մերձ գոլն նր՟ ։ եւ ցաւէի ընդ հեռանալն ։ սիրէ եւ ատէ զոր ինչ եւ նա ։ Ջանայ հաճոյանալ նմա ։ եւ երկնչի անհաճոյ լինելոյ ։ քարշէ զայլս ՚ի սիրելութի՟ նր՟ ։ զպարգեւս տուեալս ՚ի նմանէ ո՛չ օտարացուցանէ յինքենէ ։ հաւանի խրատուց նր՟ ։ Խնդրէ ՚ի նմանէ համարձակ յուսով ։ Արդ՝ սէրէ հայրն ա՟ծ ։ զի այնքան սիրեաց զաշխարհ, մինչեւ զմիածին որդին առաքեաց ՚ի փրկութի՟ մեր ։ սէրէ որդին ա՟ծ ։ զի նախնա սիրեաց զմեզ ։ ըստ վկայութե՟ն յովհաննու ։ սէրէ եւ ս՟բ հոգին ա՟ծ ։ ըս՟տ այնմ՝ սէրն ՚ի սիրոյ զսէրդ առաքեաց յինքն զանդամս իւր քեւ յօդեաց ։ սէրն է դշխոյ ա՟մ առաքինութե՟ց ։ Արդ՝ զսիրոյ ճառել լիապէս ո՛չ ոք բաւականացաւ ։ վ՟յ այսքան քեզ ՚ի ճաշակ, եւ զայլն ՚ի ս՟բ գիրս տեսցես զգե

Զորա-
կան ։

բաղանցութ՟ի սիրոյ, որ վերաբե-
րի յԱ՟ծ։

ՊԱ՟ տուք և ժողովուրդ աղօթից։ պարտէ քրիստոնէին յաւուրն երեք անգամ աղօթս առնել յա՟մ ժամ. 'ի լուսանալ առաւօտուն՝ յորժամ զարթնու 'ի քնոյ. և 'ի ժամ հացին աղօթս առնել. և յերեկոյին 'ի ժամ քնոյ. այր մարդ, կորիճ տղայ, յա՟մ աղօթս տասներկու ծունր կրկնէ, որ լինի օրն երեսուն և վեց ծունր աղօթք. երեսուն երեքն 'ի պատիւ քրիստոսի տնօրէնութե՟ն, որ երեսուն երեք տարի շրջագայեցաւ 'ի վ՟ր երկրի. և երեքն 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութե՟ն։ և կին, և աղջիկ տղայն, օրն վաթսուն ծունր. քսան քսան ծունր երեք անգամ. և թէ ո՛չ՝ պարտական կու մնամք երախտեացն ա՟յ. և ապերախտ որ դի կու լինիմք: Պա՛րտ է յա՟մ ժամ աղօթս առնել ըստ տ՟ն հրամանի. և յառաւօտուն գոհանալ զա՟յ. որ 'ի խաւարէ 'ի լոյս էհան զմեզ. և 'ի ժամ ճաշոյն, որ տուեալ է զկերակուրս 'ի ճաշակել. զի մի՛ անասնաբար անգիտութե՟ զա՟յ բարիսն վայելել երևիցիմք, որ տուեալ է մեզ. եւ յերեկոյին ևս, զի օրն խաղաղութե՟ վճարեցաւ. և 'ի խաւարի գիշերոյն անփորձ պահելով 'ի յառաւօտու լոյսն զմեզ հասուսցէ. ո՟պ երից ժամուց աղօթքն եկեղեցւոյ՝ խնդրեն յա՟յ յայտնապէս: և զայս աղօթքս յաւուրն երեք անգամ անխափան առնել պարտիմք. (ո՟պ ասացի) յա՟մ տեղիս կատարեցէք: 'ի շաբաթ օրն և 'ի կիւրակէ՝ պա՛րտ է քրիստոնէին յեկեղեցի գտանիլ. և զպատարագս լսել և տեսանել. զի շաբաթ տօնէ մրց՟ մարտիրոսաց, և կիրակի՝ յարութեն՟ քի՟. մզ՟ հարկաւորիմք պատուել զերկու օրս մր՟ պատարագօք. և ՚ի պահելն զմր՟ կիրակէն՝ յարգելով պատուիցեմք. յամ՟ մարմնական գործոյ և ՚ի մեղաց դադարեալ՝ զբարի առնել. զմր՟ գրեանս ընթեռնուլ. և զքարոզ լսել յորդորիմք յած՟ային գրոց։ Եւ զի ՚ի կիրակէ լինելոց է երկրորդ գալուստն քի՟ ՚ի դատաստան։ և մր՟ հոգին ՚ի կիրակէ էջ ՚ի դաս առաքելոց. ՚ի կիրակէ որք ՚ի յադամայ մինչև ՚ի դատաստան յաշխարհ եկին և մեռան, յարութի՟ առնելոց են. ոպ՟ և քս՟ ՚ի կիւրակէի յարեաւ անդրանիկն մեռելոց. և մեզ յոյս ետ թէ և դուք ՚ի կիրակէի յառնելոց էք. զի և ես յօրն կիրակէի դտստան՟ առնելոց եմ ոպ՟

'ի ծաղկազարդի օրն երեւի․ զի
արդարք և մեղաւորք ըստ գործոց
իւրեանց 'ի կիւրակէի զհատուցումն առնելոց են։ յօրն կիւրակէի
յարդն 'ի ցորենոյն զատի, 'ի ձեռն
հրեշտակաց․ յօրինակ արդարոց
և մեղաւորաց։ վ̄սյ պայծառ է քրիստոնէին 'ի գաւիթ եկեղեցւոյն
երթալ․ քարոզի և աւետարանի
ունկնդիր լինել․ և զմեղսն խոստովանել, զոր 'ի շաբաթն բոլոր գործեաց․ զի առաքելովք, և հայրապետօք անէծք դրեն այնպիսի
մարդկանց՝ որ 'ի կիւրակէի չերթան յեկեղեցին․ և թէ երթան,
և վ̄ս փոքու մարմնաւոր գործոյ
պատճառուի զիւղոբերից աւետ̄րն
չի լսեն, զպատարագ չտեսանեն,
և 'ի դուռս ելանեն, նոքա չունին
մասն և բաժին 'ի քրիստոնէական
հաւատոյն․ այնպիսիքն սուտ կերպարանօք են քրիստոնեայ։ և ո՛չ

Ճշմարիտ. ըստ առածին փիլիսոփային. Թէ մարդ՝ և ոչ մարդ. բայց առաջին մարդ. զի երևի թէ բանական մարդ է և առաքինի, բայց ինքն ըստ անասնոցն մտի. որ չէ մարդ. առաջին վ͞ն բանականութեն մարդ է ասէ. ոչ է պարտ այնպիսի մարդոյն քրիստոնեայ ասել. որոց մեղքն ոչ յիշեն ՚ի պատարագին և ոչ զթողութիւն անունս. վայ ՚ի մարդն՝ փոխանակէ հրոյ գեհենոյն՝ այրող փայտ դառնայ իւր մեղքն. որ առ խղճմտի այրի և տանջի, և անդ հոգւով և մարմնով.

Յաղագս պահոց.

Պարտ է քրիստոնէից մեզ և անդադար պահել ըզ պահսն. զի որք սրբութ͞ պահեցին՝ արդարացան, և որք ոչ պահեցին՝ կորեան. Առաջին պատուիրանն պահքն է, զոր եդ ա̅ծ ադամայ. զի ասաց նմա ա̅ծ, ա̅մ պտղոց որ են 'ի դրախտիդ՝ կե՛ր. որ այս ուտեացն էր օրինակ և 'ի միոյ պտղոյ այդմանէ մի՛ ուտիցես. պահոցն էր օրինակ: և զի ադամ ո՛չ պահեաց, ել 'ի դրախտէն և անկաւ յայս աշխարհ չարչարանաց: Արդ՝ և մեք երբ պահեմք սրբութ̅բ՝ դառնամք 'ի դրախտն՝ որ է մեր հայրենին. Նոյն ժամանակին եղեալ մարդիկքն որք ո՛չ սիրեցին զպահքն՝ ջրհեղեղաւ կորեան. սոդոմայեցիքն որք ատեցին զպահքն՝ երկնատեղաց հրով այրեցան. բայց երեք մանկունքն որ պահօք սնուցեալք եղեն՝ հուրն զմարմինս նց̅ ո՛չ կարաց այրել. մովսէս մեծն պահօք սրբեալ, տեսութե̅ն ա̅յ եղև արժանի և զպատգամս ընկալաւ 'ի նմանէ. ենովք և եղիայ որ պա հոց էին սիրող, հողեղէն մարմնով յերկինս փոխեցան։ ապա ա̃մ քրիստոնեայ որ սիրէ զպ·հքն՝ սրբոց փառացն արժանի լինի․ և որ ոչ պահէ զպահքն սրբութ̃, ընդ պատուիրանազանցիցն է տանջելոց։

Վասն ողորմութեան։

Պարտ է քրիստոնէին ողորմութ̃ առնել աղքատաց և կարօտելոց․ զի ողորմածացն է արքայութ̃ին երկնից․ ո̃պ հրամայէ Քս̃ թէ՝ որովհետև արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք․ զի ՚ի դատաստանի յաւուրն յորժամ մտանեն աղքատքն առ Քս̃, և տեսեալ զնս̃՝ մատամբն ցուցանէ ողորմածացն թէ՝ զա̃մ բարիս որ ա̃ց արարէք, իմ էին համարեցէ̃լք․ ըստ որում յանուն իմ ետուք․

այսինքն՝ եթէ մերկ էին՝ ծածկեցիք. եթէ ծարաւ՝ զովացուցիք. եթէ օտար՝ ժողովեցիք. եթէ հիւանդ՝ տեսիք. և զայլն մի ըստ միոջէ. ուրեմն դուք որ մարդիկ էիք, այսքան բարիս առնել ո՛չ ձանձրացայք, տաց ձեզ և ես զարքայութ̅ին իմ անսպառ և զուրախութ̅ին ն̅ր անվախճան. և մեղք ձեր և յանցանք մի՛ յիշեսցին յաւիտեան. ըստ իմաստնոյն թէ՝ ողորմութ̅բ և հաւատով սրբին մեղք. զի յորժամ խոստովանիք և ողորմութ̅ի առնէք և հաւատայք՝ սրբիք 'ի մեղաց՝ և արդարանայք ողորմութ̅բն ք̅սի. որում փառք յաւիտեանս ամէն:

ՅՈՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ:

Խորհուրդք եկեղեցւոյ եօթն են. այսինքն,

Մկրտութիւն. Դրոշմ. Հաղորդութիւն. Ապաշխարութիւն. Կարգ. Պսակ. Վերջին օծումն։ Որք ամենեքեան են շնորհք ընդդէմ մեղաց. զի Մկրտութիւն ազատէ զմեզ 'ի սկզբնական մեղացն։ Դրոշմն հաստատէ 'ի հաւատս, և կնքէ ճանաչել զինուոր Քրիստոսի։ Հաղորդութիւն տայ մեզ զյաւիտենականն կեանսն։ Ապաշխարութիւն դարձուցանէ 'ի մեզ վերստին զկորուսեալ շնորհսն։ Քահանայութիւն է զօրութիւն մատուցանելոյ զՔրիստոս պատարագն, և բաշխելոյ ժողովրդեանն. և զայլ ամենայն խորհուրդսն կատարելոյ։ Պսակն բառնայ զշնութիւն և առնէ ամուսնութիւն. զի մինչ ոչ է պսակ 'ի մէջ առն և կնոջ՝ զուգիլն նոցա շնութիւն է. Վերջին օծումն ազատէ ըզմեզ 'ի փոշետեսակ և 'ի մոռացեալ մեղացն. և զօրացուցանէ ընդդէմ սատանայի 'ի յելսն հոգւոյն։

Որք՝ ճանաչէ՞ք եօթն խորհուրդք եկեղեցւոյ տան. Եւ ո՞չ ինչ խորհուրդք և շնորհութեան ունին. և կամ յումմէ՞ հաստատեցան 'ի Քսէ.

Ասեմ թէ՝ 'ի տնէ մերմէ Յսէ Քսէ և ո՛չ յայլմէ. Մկրտութիւն հաստատեցաւ 'ի Քսէ, մինչ մկրտեցաւ ինքն և մկրտեաց զայլս, և հրամայեաց մկրտել, և խոստացաւ մկրտելոցն զկեանս. ըստ այնմ՝ գնացէք մկրտեցէք զնս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ. ամ որ հաւատասցէ և մկրտեսցի՝ կեցցէ:

Դրոշմն հաստատեցաւ 'ի Քսէ, յորժամ փչեաց յառաքեալսն և ասաց՝ առէք զհոգի սբ. և մինչ առաքեաց յաշակերտսն զհոգին սբ՝ յաւուր պենտեկոստէին:

Հաղորդութիւն ՚ի քս՟է հաստատեցա՛ւ, յորժամ առեալ զհացն և զբաժակն օրհնեաց և բաշխեաց ասելով, այս է մարմին իմ և այս է արիւն իմ. և թէ՝ մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի. որ ուտէ և ըմպէ, կեցցէ յա՛ւիտեան։

Ապաշխարութիւն հաստատեցա՛ւ ՚ի քս՟է, մինչ ինքն ՚ի քարոզելն ասէր. ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից։ և առաքելոցն պատու՛իրեաց զնոյն քարոզել. և թէ՝ երբ մեղիցէ քեզ եղբայրն քո, և դարձցի և ասիցէ ապաշխարեմ, թող նմա. և այլն։

Վերջին օծումն հաստատեցա՛ւ ՚ի քս՟է, յորժամ վարեցա՛ւ ՚ի հոգւոյն յանապատ և յաղթեաց հակառակին։ և յորժամ զանկեալն ՚ի ձեռս ա՛ռաքելոցն ձիթով և դինւով բժշկեաց։

Կարգն ՚ի քէն հաստատեցաւ, յորժամ ՚ի վերջին ընթրիսն տալով առաքելոցն զմարմին և զարիւն իւր ասելով, զայս արարէք առ իմոյ յիշատակի. և թէ որում թողուցուք՝ թողեալ լիցի. և որում ունիցէք՝ կալեալ լիցի. և այլն ըստ կարգի.

Պսակն ՚ի քէն հաստատեցաւ, յորժամ գնաց ՚ի հարսանիսն կանայ գալիլեացւոց և օրհնեաց. և՚ի ժամ հարցմանն հրէից՝ պատասխանեաց թէ՝ արու և էգ արար զն՟ս ա՟ծ և ասաց, թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի. զի զոր ա՟ծ զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ. և թէ մեկնեսցի և արասցէ զայլ՝ շնայ. և այլն.

Բայց գիտելի է, զի եկեղեցիս հայոց զդրոշմն և զմեռոնին օծումն ’ի միասին տայ մկրտեցելոյն ’ի ժամու մկրտութե՟ն․ և պատճառն է, զի ո՟չ իսկոյն ’ի մկրտութե՟ն տայ և զխորհուրդ հաղորդութե՟ն, թէ մի՛ գուցէ յանկարծ ոք մեռանելով զրկիցի ’ի ճաշակմանէ ս՟բ խորհրդոյն․ այսպէս տայ և զմեռոնին օծումն, զի մի՛ յանկարծապէս մեռանելով ոք՝ զրկիցի ’ի խորհրդոյն յայնմանէ։ Քանզի բարւոք է ’ի պատրաստի ունիլ միշտ ըզտուրն, քան թէ մնալ առնուլ զնա ’ի ժամ գալոյ թշնամւոյն․ զի գուցէ յանկարծ եկեալ թշնամւոյն՝ ո՛չ կարիցես առնուլ փութապէս զտուրն քո ’ի ձեռին։ Զի օր տ՟ն իբրև զգող եկեսցէ ասէ․ Եւ թէ՝ յանկարծակի հասանիցէ ’ի վ՟ր ձեր օրն այն։ Եւ թէ՝ ո՛չ գիտէք զօրն և ո՛չ զժամն։

Ո՛չ գիտեմք յիրաւի թէ՝ յետ այսր րոպէի արդեօք այլ ևս մնալո՞ց իցեմք.

Հարցմունք և պատասխանիք Ձայն Հոգեւո՛ր Կիւրեղեայ:

ըէ վ՟ա
ող.
ենղ.
գէ.
Դ.

Հարց. Զի՞նչ է որ քառասնից տամք մատուցման պատարագաց վ՟ան ննջեցելոց.

Պատ: Ուսոք յա՟ծաշունչ գրոց և 'ի պատմութեց՝ թէ հոգւոցն որք ելանեն 'ի մարմնոյ աստի, պատերազմ կայ ընդ յօդային դիւաց յաներևոյթս. որպ՟ ետես սբն Անտօն 'ի տեսլեանն. վկայէ և սբն առաքեալն պօղոս յասելն թէ՝ ո՛չ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիս և ընդ պետութիս ընդ այսս չարութե որք են 'ի ներքոյ երկնից. այսինքն՝ ո՛չ ընդ մարդոյ մարմին ունողի, այլ ընդ դիւաց՝ որք են անմարմին ։ ըստ այսմ և սրբազան աւետարանիչն յօհաննէս 'ի ներշնչման ժամուն աղերսէ առ ք՟ս թէ 'ի գալս իմում ընկրկեացի հուրն. վանեացի խաւարն. աջակողմեանքն կացցեն. ձախակողմեանքն մի՛ մնասցեն ։ և ս՟բն ներսէս շնորհալին 'ի հասարակաց յաղօթսն զնոյն ուսուցանէ. բարերար տ՟ր հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս, քաղցրութ՟ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութ՟ այսոցն որք են 'ի ներքոյ երկնից և այլն ։ Արդ՝ ուրեմն եթէ նոքա այնքան ս՟բ գոլով այնպէս երկուցեալ 'ի յօդային դիւաց՝ սակս անձինս 'ի նոցանէ անցանելոյ հոգւոց իւրեանց բողոքեն առ տ՟ր ա՟ծ. որ՟չափ ապա մեզ արժանէ առնել գիշեր ժամ և աղօթք առ ա՟ծ, և զս՟բ պատարագն մատուցանել երկ նաւոր հօրն ընծայ, վս յառաջակայ պատերազմէ դիւացն, ազատ և անվնաս անցանելոյ անջատեալ հոգւոցն և ընդ հովանեաւ քո մտանելոյ ։

Հարց, վասն է՞ր Գիշերժամ տանեմք ։

Պատ. Զի 'ի գիշերի կենցաղոյս
գնաց առ առաւօտ օր յարութե
դտստանի · զի երբ զննջեցեալն 'ի
գերեզմանս դնեն, ո՛չ ևս կարէ
աղօթել առ ած · վոյ բերանով
քահանայից աստ աղօթէ ընդ Նա-
Նրկ, 66 ։ րեկացւոյն · Թէ՝ իսկ ինձ եղիցի
պատգամ այս բանի՝ արձան փո-
րագրեալ՝ ամենեին անեղծանելի ·
որ փոխանակ իմոյ եղկելւոյս ան-
ձին մահացուցի՝ անդադար հընչ-
մամբ հեծուե լալոյ՝ առանց լռե-
լոյ միշտ աղաղակէ · լիցի՝ և ոսկե-
րացս քակտեցելոց 'ի հողապա-
տեան շիրիմ վերարկուին՝ անմը

ռունչ ձայնիւ զայս խոստովանել. հասցէ եւ մարմնոյս ՚ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անաղդելեւ՛. ծածկատեսիդ զսոյն պաղատել՛. զի եւ յայս միտս է յիշէք տալն պատարագչին առ ՚ի յիշատակել զննջեցելսն. տես եւ զայլն ՚ի 275 երեսն՝ որ վն քհնյիցն ասացաւ.

Հարց. զնուէրքս որոց աշխարհականաց ո՞րպէս ընկալցուք.

Պատ. միանգամայն ասեմ, թէ՝ զբիւրաւորս եւ զհազարաւորս տացեն այ ՚ի ձեռս մեր պտուղս, ո՛չ բնաւ զմեզ պարտական արարեն. այլ ինքեանք պարտական գոլով այ՝ նմին հատուցին զսակաւն. եւ առ նա ակն կալցին փոխարինին. եւ ո՛չ ՚ի ձեռս մեր. որ ասաց, որչափ արարիք միում յեղբարցս իմոց՝ ինձ արարիք. եւ մեր ընկալեալ զնոյն երկիւղածութ ՚ի լրումն պիտոյիցն, եւ ո՛չ ախտիւ ագահութե. արժանի դատեսցուք զմշակն կերակրոյ իւրոյ և ազատ մտօք ՚ի նոյն վայելեսցուք.

Հարց. Զի՞նչ է հանգստեան շաբաթունն. որով զօրն ննջեցելոյ հանգիստ խնդրեմք, և ոչ ծուլութիւն.

Պատ. Աղօթեմք. զորս վարուքն իւրեանց և կենօք աշխատանացն՝ զերծո՛ ՚ի դիւային պատերազմացն, որք յօդսն են. և հանել ՚ի խաւարային իշխանութեցն՝ ընդ ձեռս քո պայծառացո՛. որոց խոստացար և խնդրեցեր թէ կամիմ, զի ուր եսն իցեմ, և սոքա ընդ իս իցեն. և քո կամքդ՝ գործ է կատարել: այսքան օգտեցուցանեմք զննջեցեալսն մեր աղօթիւք և պատարագաւ. զի ո՛չ ՚ի մահացու մեղացն, այլ ՚ի ներելեաց միայն ազատին:

Հարց․ Շարունակութիւն պատարագացն առնել արժանի է վասն ննջեցելոց։

Պատ։ Ագահութե̅ ախտի ծառայելով, մոլորեցան 'ի ճշմարտութե̅ բազումք․ քանզի զքառասունսն թուել իրաւացի էր, ոչ ըստ համարոյ պատարագացն․ այլ ըստ աւուրցն յօրէ յորմէ վախճանեցաւ, մինչև 'ի քառասուներորդն յիշատակել զնա յաղօթս․ և ոչ այլ առնելով երիցս և չորիցս և բազմապատիկս․ և այսմ կարծեացս սկիզբն՝ թուի ինձ 'ի հնոցն ունել․ քանզի ելաց ասէ ա̅մ իսրայէլ զահարոն աւուրս երեսուն։ Արդ՝ փոխանակ նո̅ց լալոյն՝ մեք զաղօթելս առնեմք և 'ի ս̅բ պատարագին յիշատակել․ պայծառացեալ յուսով յարութե̅ 'ի վ̅ր եղբարցն՝ սկսել 'ի վախճանէն զայն աւուրս օժանդակեմք նմին յառաջիկայ ճանա̅պրհն։

վ՟այ պա՛րտ է քահանային յորժամ ոք ՚ի հաւատացելոց մեռանի՝ զաւուրս քառասուն պատարագել. յորում աւուր վախճանեցաւ՝ յայն՝ օրէն սկսել. ոպ՟ պատուիրեաց առաքեալն փիլիպպոս վ՟ս իւր քառասուն օր պատարագ առնել.

Հարց. յորժամ մեռանի ոք և տանէ շատ պատարագս, արժա՞ն է ՚ի նոյն օր [illegible] [illegible].

Պատ. Ո՛չ զՔրիստոս վասն մեր պատարագել, այլ զի պատարագի ք՟ն ինքն վ՟ս մեր իւրով ա՟ծեղեն կամօքն միշտ յայսմ յաւիտենիս։ յորժամ մեռանի ոք ՚ի մէնջ, խնդրել ՚ի պատարագն ք՟նի աղօթիւք զհանգիստ զաւուրս քառասուն ա՟մ եղբարցն և ո՛չ զթիւն. զի բազմացն աղօթքն, մի է ՚ի նոյն օրն և ո՛չ բաժանի միայն վասն

պօղոսին, և պետրոսին. վ՟յ ՚ի նոյն օր թէ և զհարիւր քառասունս կատարես՝ արժանի է և իրաւի ըստ բաղձանաց ընդունի ա՟ծ. վ՟յ սահմանեցաւ ՚ի մ՟րց հարց յ՟ամ օր պատարագ մատուցանել. զի ո՛չ է օր՝ յորում ո՛չ լինի մահ մարդոյ. զի ո՛չ առանձին յաղագս միոյ անձին պատարագի ք՟ս, այլ
բոլոր աշխարհի :

Հարց. վասն է՞ր յ՟ամ տօնս պատարագ մատչի սուրբ եկեղեցւոջ. բաց ՚ի հինգ տաղաւարէ շաբաթապահոցն և ՚ի մծ
պասին :

Պատ. Ո՛չ է հարկաւոր թէ միշտ պատրաստ եղիցի դեղ ընդդէմ հանապազորդեան ներելի մեղաց. և ո՟պ ծառ կենաց է. պատարագն մ՟ր պարտէ լինել միշտ ՚ի մէջ դըրախտանման յեկեղեցւոջ. զի զօրհանապազ ք՟ս ընդ մեզ միաւորեսցի խորհրդաբար, և մեք ընդ նմա հոգևորապէս։ և զի հանապազ առ մեզ եղիցի յիշատակ չարչարանացն քսի։ իսկ 'ի տաղաւարոջ ոչ մատուցանեմք· զի պատարագնէ գերազանցագոյն նուէր նորոյ կտակարանի, և նորոյ օրինի· որով քրիստոնէական կրօնն՝ պաշտօնիւ երկրպագութե պատուէ զած· այլ 'ի պահոց շաբաթուն չունիմք համարձակութիւն առ ած պատարագ մատուցանել· եթէ ոչ նախ զմեզ խոնարհեցուցեալ պահօք և աղօթիւք սիրտ սուրբ ստանալ, և ապա զած տեսանել մբ պատարագաւս· որ 'ի հաշտութի հօր և 'ի քաւութի մեր մատուցանի։

Ատոնան չա ծննդեան տնօրհնեննքի։

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ· հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝ և այլն. տասն տունէ։ Ապա՝ ալէլուիայ ալէլուիայ ալէլուիայ։ սաղմոս. Տէր ասաց ցիս որդի իմ ես դու և ես այսօր ծնայ զքեզ։

Սբ, Աւետարանին ըստ Մատթէոսի։
Վասն ծննդեան և մկրտութեան տն մերոյ յիսուսի քրիստոսի։

Յայնժամ գայ յս ի գալիլէէ ի յորդանան առ յովհաննէս՝ մկրտիլ ի նմանէ։ Եւ յովհաննէս արգելու զնա և ասէ. ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ՝ և դու առ իս գաս։ Պատասխանի ետ յս՝ և ասէ ցնա. Թո՛յլ տուր այժմ. զի այսպէս վայելէ մեզ լնուլ զամ արդարութի. և ապա թոյլ ետ նմա։ Եւ իբրև մկրտեցաւ յս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զհոգին այ՝ զի իջանէր իբրև զաղաւնի. և գայր

՚ի վերայ նո͞ր: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա՛ է որդի իմ սիրելի. ընդ որ հաճեցայ: շարական՝ մկրտի ք͞ս: Փառք քեզ՛: Ա͞ե խաչիւս՛: Պահպանիչ՛: Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղի՛:

Կանոն [illegible] յարութ͞ե տնօրհնէքին:

Այսօր յարեաւ ՚ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր քեզ՝ և այլն: վեց տունն է: Ապա սաղմոս. ալէ՛ ալէ՛ ալէ՛: Յարեաւ ա͞ծ և ցրուեցան ա͞մ թշնամիք նո͞ր փախեան ատելիք նո͞ր յերեսաց նո͞ր:

Ա͞յ, [illegible] յի ք͞ի ոչ ը͞ռ ժողովն՛:
Յետ յարութ͞ե տեառն [illegible] յետոյ [illegible]
[illegible]:

Իսկ մետասան աշակերտքն գնացին ՚ի գալիլեայ, ՚ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նց յս͞. Իբրև տեսին զնա, եր‿

երկիրպագին նմա․ և ոմանք յերկուացան։ Եւ մատուցեալ յս̃ խօսեցաւ ընդ նս̃՝ և ասէ։ տուաւ ինձ ամ̃ իշխանութի̃ յերկինս և յերկրի․ ոպ̃ առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամ̃ հեթանոսս․ մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամ̃՝ որ ինչ պատուիրեցի ձեզ․ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ̃ աւուրս, մինչև ՚ի կատարած աշխարհի։ Փառք քեզ տր̃՝։ Ամ̃ խաչիւս՝։ Պահպանիչ՝։ Հայր մեր՝։

Կանոն վս̃ խաչահանգստին․

Նախ՝ հայր մեր․ և ապա օրհնեալ հոգիդ տր̃ ած̃․ և զկնի սոցա՝ ողորմեա ինձ ած̃։ ըմանէ ասելի։ և ապա շարական թճ̃, դարձո զցա սուրբ քո 'ի մէնջ. երեք տուն ։ Անկանիմք առաջի քո տր՟ ած՟ծին՛ և այլն ։ Ապաւինեցուք 'ի խաչ քո՛. Գ՟, տուն ։ և ապա դարձեալ շարական, դձ՟. զօրութի՟ սբ՟ խաչի քո քս՟. երեք տուն. և ած՟ մարդասէր որ զմաքսաւորն արդարացուցեր՛ և այլն ։ և զկնի շարական. որ զանազան վիրօք մեղաց հարաք հոգիս՛ և այլն ։ և ապա փառք հօր՛. այժմ և՛ ։ շարկն՟. սրբեա՛ տէր զմեղուցեալ քոց ծառայից՛ և այլն ։ և զկնի ամ՟ օրհնեսցի և սրբեսցի ջուրս. և բըժըշկեսցի հիւանդ ծառայս այս նշանաւ՛ և այլն երիցս անգամ ։ և ապա սբ՟ խաչիւ՛ և պահպանիչ՛. և հայր մեր՛ ։

Այլ ցորժամ 'ի տաղտկութենէ լինի դժուար, երբեմն փոխանակ այնր և ասէ սաղմոս ։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ որ բնակեալդ ես 'ի յերկինս ։

Ընթերցուած Եսայ՟ մարգարէին:

Մինչչեւ իցէ յղւոյն ծընեալ. եւ մինչչեւ իցեն հասեալ ցաւք երկանց. ապրեցաւ, եւ ծնաւ արու: Ո՞ լըւաւ. ո՞ետես այսպիսի ինչ. եթէ երկնեաց երկիր ’ի միում աւուր. եւ ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն. զի երկնեաց սիօն, եւ ծնաւ զմանկունս իւր: Ես ետու քեզ զյոյսդ զայդ. եւ դու ոչ յիշեցեր զիս՝ ասէ տ՟ր: ոչ ապաքէն զամուլն եւ զծննդ՟կնն ես արարի՝ ասէ ա՟ծ քո:

Պօղոսի առաքելոյն յեբրայեցւոց Թղթոյն է ընթերցուածս:

Հաւատովք՝ որ աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ելանել ’ի տեղին, զոր առնլոց էր ’ի ժառանգութ՟ի. ել՝ գնաց, եւ ոչ գիտէր՝ յո՞ երթիցէ. Հաւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց իբրեւ յօտարութ՟ե. խորանօք բնակեաց՝ սահակաւ և յակովբաւ հանդերձ ժառանգակցօք նոցին աւետեաց։ Քանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին. որոյ ճարտարապետ և արարիչ ա͞ծ է։ Հաւատովք և ինքն սառա, որ ամուլն էր, զօրութի͞ առնլոյ զսերմն որդեծնութե͞, ընդունէր. և ՚ի տարաժամ հասակի ծնանէր, քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոստացաւն։ Ա͞յ և ՚ի միոջէն ծնանէին. և այն ՚ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկնից բազմու͞է. և իբրև զաւազ առ ափն ծովու առանց թուոյ։ Աղէ՜. Աղէ՜. Աղէ՞. Տէր ՚ի նեղութե͞ յիշեցաք զքեզ. զի փոքր մի նեղութի͞ է խրատ քո ՚ի վերայ մեր։ Որպէս երկունք յղւոյ. զի հասեալ իցեն ՚ի ժամանակս ծննդեան և առ ցաւս իւր ճչիցէ։

Ասէ՛ս աւետարանն Յի Քի որ ԺԶ յոհ՛:
